ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN “HAYBUSAK” UNIVERSITY

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Հատոր 10, 2024

YHU SCIENTIFIC JOURNAL

Vol 10, 2024

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

SOCIAL SCIENCES

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - **2024**

Խմբագրական խորհուրդ.
Աբրահամյան Մարտին – ֆիզմաթ գդ, պրոֆեսոր, գլխավոր խմբագիր, mabr49@ya.ru
Բոստանջյան Վարդան – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, bostan49@mail.ru
Եղիազարյան Անուշ – մանկավարժական գդ, պրոֆեսոր, a.yeghazar@yandex.com
Պետրոսյան Հայկ - մանկավարժական գդ, պրոֆեսոր, hahapet@rambler.ru
Պետրոսյան Տիգրան - կենսաբ. գթ, դոց, խմբագիր, tigpetrosyan@mail.ru
Սաֆարյան Գառնիկ – իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, lawdeanoffice@gmail.com
Ղազարյան Հայկ – ֆիզմաթ գդ, պրոֆեսոր, haikghazaryan@mail.ru
Վահրադյան Հասմիկ – կենսաբ. գդ, պրոֆեսոր, vahradyan.hasmik@yandex.com
Գասպարյան Հրաչիկ – քիմ. գթ, դոցենտ, h.gasparyan@mail.ru
Հովհաննիսյան Եվա – հոգեբ. գթ, դոցենտ, ehovh@gmail.com
Մալխասյան Լիանա - իրավաբ. գթ, malkhasyanliana@gmail.com
Կաժոյան Հրաչյա – ung. գթ, quality@haybusak.am
Բալայան Նաիրա – բան. գթ, դոցենտ, nairamelsiki@gmail.com
Բալոյան Մարիանա – բան. գթ. դոցենտ, m.ashotovna@mail.ru
Օտարերկրյա անդամներ՝
Balasanyan Diana– Dr. Pedagogy, PhD philology, La Laguna University, Spain, dianabalasanyan@gmail.com
Eriashvili Nodari D. – Dr. Economic sci., PHd of Legal Sci., Georgia, Professor60@mail.ru www.worldadvokat.ru
Movsisyan Ara T. – PhD of Legal Sci., Russian Federation, Arik-movsisyan@rambler.ru
Babayan Arsen – Dr. med., Head of Spaine & Joint Center, Munch, Germany, prof.babayan@wgzm.de
Mohammad Arus – Dr. med., Neurosurgical Center, Hamburg, Germany, prof.arous@yahoo.de
Oliver Seeman – Dr. med., Spitäler Schaffhausen, Psychiatriezentrum Breitenau, Switzerland, info@psychiater.org
Noble K Kuran – PhD Biotechnology, Pandakasalayil Hill View Kampancode, Kollam, Kerala, India, kurianoble@gmail.com
Maria Angelo-Kattar - M.D, Ph.D, M.Sc., Dermatology Overseas Director, American Academy of Anti-Aging Medicine Dermatologist, Shape Clinic, Kuwait, maria.khatar@altaderma.com

ԵՀՀ Գիտական հանդես, հատոր 10, 2024, Երևան:

Հանդեսը պարունակում է Երևանի «Հայբուսակ» համալսարանի ակադեմիական համակազմի, այլ բուհերի և գիտական հիմնարկների գիտական և գիտամեթոդական աշխատանքներ՝ տնտեսագիտության, մանկավարժության և հոգեբանության, բանասիրության, իրավագիտության, բժշկագիտության ու բնական գիտությունների ոլորտներում:

ISSN 2953-8181

© «Հայբուսակ» հրատ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բոստանջյան Վ., Զախարյան Ա. - ՀԵՏԱԶՈՏԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 5

Մկրտչյան Լ. - ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ 14

Գևորգյան Գ., Հարությունյան Ս. – ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ում 21

Մաճկալյան Ա. - ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 32

Ավետիսյան Ա. - ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ 39

Հարությունյան Ա., Հովհաննիսյան Ս. - ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ (2014-2023թթ.) 46

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բալայան Ն. - ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ-ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 52

Балоян М. - МОТИВ СМЕРТИ И ПОИСКИ СМЫСЛА ЖИЗНИ В «КОЛЫМСКИХ РАССКАЗАХ» ВАРЛАМА ШАЛАМОВА 63

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սահակյան Ա. - ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 72

Պետրոսյան Ք. - ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԵՎՐՈԶԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 81

Զազյան Ա. - ՄԱՐՏԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ 87

ԻՐԱՎՈՒՆՔ

Սաֆարյան Գ., Մալխասյան Լ. - ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ 94

Մուրադյան Գ. - ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 105

Ստեփանյան Ն. - ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 110
Մուրադյան Մ. - ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 117
Մարտիրոսյան Ն., Թորոսյան Վ. - ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 1911-1912ԹԹ. 125
Մարինոսյան Յա. - ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 135
Ստեփանյան Հ. - ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 144

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.61484/29538181-sj.10.24-01

ՀԵՏԱԶՈՏԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

[1]Վարդան Բոստանջյան, [2]Արմինե Զախարյան

[1]ԵՊՀ ֆինանսական հաշվառման ամբիոն, [2]ՀՀ ԳԱԱ,
Գիտակրթական միջազգային կենտրոն
Մուտքագրված է 02.05.24, գրախոսված է 24.05.24,
ընդունված է տպագրության՝ 26.06

Ամփոփագիր. *Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում հետազոտահեն կրթության կազմակերպման միջոցով գիտական ներուժի հզորացման մեթոդների և մեխանիզմների, դրանց արդյունավետ կիրառումը պայմանավորող գործոնների, ինչպես նաև գիտության ոլորտի ինովացիոն զարգացման խթանման հիմնահարցերի ուսումնասիրությանը: Հոդվածում Հայաստանի Հանրապետության օրինակով դիտարկվել են հետազոտահեն կրթության կազմակերպման և ֆինանսավորման հնարավորությունները, մշակվել են հետազոտահեն կրթության կազմակերպման միջոցով տնտեսության ինովացիոն զարգացման խթանման որոշակի մեխանիզմներ:*

Հիմնաբառեր. *գիտություն, կրթություն, ինովացիոն զարգացում, ֆինանսավորում, գիտական և գիտատեխնիկական գործունեություն, զարգացում, արդյունավետություն*

Ներկայում համաշխարհային տեխնոլոգիական կառուցակարգը ենթադրում է հասարակության արտադրողական ուժերի զարգացման քանակական և որակական թռիչքի հիմքում ընկած բեկումնային տեխնոլոգիաների, նորարարությունների և գյուտերի մշակում, ինչի արդյունքում զարգացման որոշիչ գործոններն են դառնում գիտատեխնիկական առաջընթացը, մարդու ճանաչողական և ստեղծագործական ունակությունները և արտադրության հիմնական գործոնների ինտելեկտուալացումը: Տեխնոլոգիական առաջընթացի ներկա փուլը, որն ուղեկցվում է զանգվածային բնույթ կրող թվայնացման [1] և ինֆորմատիզացիայի [2] գործընթացներով, ենթադրում է հասարակության անդամների կյանքի բոլոր ոլորտներում գլոբալ փոփոխությունների իրականացում: Հասարակությունը, որի զարգացման մակարդակը փոխկապակցված է տեխնոլոգիաների և աշխատանքի գործիքների հետ, ներկայումս գտնվում է սկզբունքորեն նոր տեխնոլոգիական պայմաններին

հարմարվելու փուլում: Այս գործընթացը համապատասխանում է արդյունաբերական հեղափոխության սահմանմանը՝ որպես տեխնոլոգիաներում և տեխնիկայում իրականացվող նորարարությունների ազդեցության ներքո հասարակության վերակառուցում: Արտադրության նորացման բարձր տեմպերը զգալիորեն մեծացնում են նորարարական տեխնոլոգիաների, ինչպես նաև կրթության ու գիտության՝ որպես այդ տեխնոլոգիաներն արտադրող ոլորտների դերն ու նշանակությունը [3]:

Հասարակության զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ կրթությունը՝ հանդիսանալով տնտեսության զարգացման կարևորագույն շարժիչ ոժերից մեկը, պահանջում է մշտական զարգացման և կատարելագործման անընդհատ գործընթացի ապահովում: Հետևաբար, հետազոտահեն կրթության կազմակերպումը և գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալների մշտական ավելացումը ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն: Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին հետազոտությունների և մշակումների ուղղությամբ գերակշռում են պետության կողմից իրականացված ծախսերը, ինչը վկայում է գիտության ոլորտում մասնավոր հատվածի թույլ ներգրավվածության մասին: Նշենք, որ 2016թ. հոկտեմբերին հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 կետի 4գ ենթակետով սահմանված է. «2018 թվականից սկսած՝ գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական և փորձարարա-կոնստրուկտորական ծրագրեր» [4] միջոցառումների համախումբը, համաձայն որի՝ ՀՀ գիտության ոլորտի ֆինանսավորմանը տրված է հստակ ուղղվածություն:

Արդի պայմաններում հատկապես կարևորվում է գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացումը, քանի որ այն նպաստում է բնակչության բարեկեցության բարձրացմանը, նորամուծությունների ներդրմանը, ընկերությունների կայուն զարգացմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը և այլն [5]: Ակնհայտ է, որ գիտելիքահեն տնտեսությունը հասարակության սոցիալական խնդիրների լուծման նյութական հիմքն է, որտեղ զարգացման հիմնական գործոնները գիտելիքն ու մարդկային կապիտալն են: Նման տնտեսության զարգացման գործընթացը բնութագրվում է մարդկային կապիտալի որակի բարձրացմամբ, կյանքի որակի բարելավմամբ, բարձր տեխնոլոգիական գիտելիքների, նորարարության և բարձրորակ ծառայությունների արտադրությամբ և այլն: Գիտելիքահեն տնտեսությունը հանդիսանում է հետինդուստրիալ տնտեսության և ինովացիոն տնտեսության զարգացման ամենաբարձր փուլը և, հետևաբար, առավել բնորոշ է ամենազարգացած երկրներին, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Կորեան և Ճապոնիան:

Անշուշտ, գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացումը մեծապես պայմանավորված է ակտիվ գիտնականների թվաքանակի

ավելացմամբ, դասախոսների ժամանակակից արդյունավետ կերպարի ձևավորմամբ, ակտիվ գիտնականի և արդյունավետ դասախոսի որակների օպտիմալ հարաբերակցությամբ, ինչպես նաև ուսանողների գիտակրթական գործունեության ակտիվացմամբ:

Ինչպես հայտնի է, ամենաակտիվ, բանիմաց և տաղանդավոր գիտնականներն առանձնանում են իրենց աշխարհահայացքով և ստեղծագործական նախաձեռնողականությամբ, նրանք ունեն և՛ համախմբման ուժ, և՛ հեռանկարի զգացում և կարողանում են տեսնել հեռավոր ապագան: Այդպիսի գիտնականները՝ աշխատանքի ահռելի կարողությունների, ուժեղ կամքի և ստեղծագործական մեծ ներուժի տեր մարդիկ են: Նրանք սկզբունքային լավատեսներ են, ովքեր հավատում են գիտական գիտելիքների ուժին, ունակ են ոչ միայն երազելու, այլև համարձակ գործելու: Նման մարդիկ համեմատաբար քիչ են. դրանք կազմում են մարդկության ադամանդե ֆոնդը: Նկատենք նաև, որ հետազոտական գործունեությանը պատրաստ մարդը պետք է ունենա յուրահատուկ որակներ: Առաջին հերթին, անհրաժեշտ է ունենալ անշահախնդիր սեր գիտության և ընտրված մասնագիտության հանդեպ: Այստեղ հատկապես կարևորվում են գիտնականի ճանապարհին հանդիպող դժվարությունների և խոչընդոտների հաղթահարման ունակությունը և ընտրված ճանապարհի ճշտության մեջ վստահությունը: Այս ամենն առաջացնում է ուժեղ նպատակասլացություն, որը թույլ է տալիս հետազոտողին ոչ միայն տեսնել աշխատանքի երկարաժամկետ հեռանկարները, այլև հստակ պլանավորել դրա առանձին փուլերը: Գիտնականի հիմնական հատկանիշներն են նաև՝ ազնվությունը, խստությունը և օբյեկտիվությունը: Գիտնականը պետք է լինի համեստ և ինքնաքննադատ, ինչպես նաև հարգի այլոց կարծիքը: Գիտական գործունեության հաջողությունը մեծապես կախված է գիտնականի ընդհանուր տրամադրվածությունից: Լավատեսությունը ոգեշնչում է և խթանում կամքը, սրում է ընկալումն ու միտքը: Գիտնականը պետք է առաջ նայի, սիրի կյանքը, երկար մտածի և լավատես լինի: Եվ վերջապես, իսկական գիտնականի հիմնական հատկանիշներից մեկը՝ քրտնաջան աշխատանքն է: Ցանկացած գիտափորձ կատարելիս պետք է ունենալ համբերություն և տոկունություն: Փորձերը երբեմն պահանջում են բազմաթիվ ստուգումներ, և աննշան ձախողումները անխուսափելի են, որոնք հաճախ պայմանավորված են տեխնիկական պատճառներով:

Գիտնականին բնորոշ մտավոր և ֆիզիկական հատկությունները կարելի է դասակարգել հետևյալ կատեգորիաների.

- խանդավառություն և հաստատակամություն,
- ինքնատիպություն՝ մտածողության անկախություն, երևակայություն, ինտուիցիա, տաղանդ,
- բանականություն՝ տրամաբանություն, հիշողություն, փորձ, կենտրոնանալու կարողություն, աբստրակտ մտածողություն,

- էթիկա և ազնվություն,
- բնության հետ ներդաշնակություն՝ դիտողականություն, ֆիզիկական և տեխնիկական հմտություններ և այլն,
- մարդկանց հետ հաղորդակցվելու ունակություն՝ այլ մարդկանց հետ խմբեր կազմակերպելու, ուրիշներին համոզելու և նրանց փաստարկները լսելու կարողություն:

Ակնհայտ է, որ արդյունավետ գիտական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել ամեն նորը, կապ հաստատել օտարերկրյա գիտնականների հետ, գրել հոդվածներ և գրքեր, հարցազրույցներ տալ, ստեղծել համախոհների և ուսանողների թիմեր և այլն:

Ինչպես հայտնի է, դասախոսի սեփական կերպարն ունի հատուկ նշանակություն, քանի որ այն մեծ ազդեցություն է գործում ուսանողների վրա: Դասախոսի կերպարը ձևավորելիս իրական որակները սերտորեն միահյուսվում են ուրիշների կողմից իրեն վերագրվող հատկությունների հետ: Դասախոսի հիմնական հատկանիշներն են [6].

1. Առաջին տպավորություն: Այն պետք է հասկանալ որպես դասախոսի յուրահատուկ կերպար, որը բաղկացած է հագուստից, ձայնից, հարդարանքից և կոկիկությունից, ձեռքսեղմման ուժից, տեսողական շփումից և կեցվածքից: Առաջին դրական տպավորությունը հեշտացնում է մարդկանց հետ շփվելը՝ դարձնելով այն ավելի ջերմ և հարմարավետ: Մյուս կողմից, բացասական առաջին տպավորությունը կարող է դադարեցնել հարաբերությունները նախքան դրանց սկսվելը: Ակադեմիական միջավայրում հետազոտությունները ցույց են տալիս կապը առաջին տպավորությունների բաղադրիչի և հարաբերությունների հետագա զարգացման միջև: Կոկիկ տեսքը և ոճային հագուստը կարևոր գործոններ են առաջին լավ տպավորության համար: Ճիշտ հագուստը ստեղծում է հաջողակ մասնագետի կերպար՝ առաջացնելով տևական դրական արձագանք:

2. Գիտելիքների խորություն: Եվ ուսանողները, և՛ գործընկերները ակնկալում են, որ դասախոսը տիրապետում է իր մասնագիտությանը, կարող է ազատորեն քննարկել տարբեր մասնագիտական հարցեր և ունենալ փորձագիտական գիտելիքներ իր ոլորտում: Ենթադրվում է, որ համալսարանում աշխատանքը բարձր վարձատրվող ինտելեկտուալ աշխատանք է, և դասախոսը ոչ միայն փոխանցում է իր գիտելիքները ուսանողներին, այլև զբաղվում է անընդհատ ինքնակատարելագործմամբ, այսինքն՝ իր գիտելիքների շարունակական թարմացմամբ:

3. Գիտելիքի լայնություն: Իր ոլորտում ունեցած գիտելիքներից բացի, հաջողակ դասախոսը պետք է լայն հայացքներ ունենա գիտական գիտելիքների հարակից ոլորտների և այլ հարցերի վերաբերյալ: Նա պետք է լինի փորձագետ, ազատորեն քննարկի այն երևույթները, որոնք որոշակիորեն հեռու են իր մասնագիտական գործունեության տիրույթից, այսինքն՝ լինի

համակողմանի զարգացած փորձագետ:

4. Ճկունություն: Դասախոսը պետք է ճկուն լինի և կարողանա փոխել իր վարքագիծը, որպեսզի լավագույնս պահպանի հարաբերությունները ուրիշների հետ: Ճկուն դասախոսը լսում է զրուցակցին և կարողանում է հարմարվել ռիթմին, որպեսզի դիմացինը շփման մեջ անհարմարություն չզգա:

5. Էնտուզիազմ: Այս պարագայում էնտուզիազմը պետք է հասկանալ որպես նոր տեղեկատվություն ընդունելու և ցանկացած խնդիր պատրաստակամորեն ստանձնելու կարողություն: Օրինակ, ուսանողները շատ հարցեր են ունենում դասի ժամանակ, և խանդավառ դասախոսը հաճույքով է պատասխանում դրանց՝ բարձրացնելով իր հեղինակությունը:

6. Անկեղծություն: Իսկական դասախոսը պետք է անկեղծ լինի, այլ ոչ թե պարզապես այդպիսին երևա: Գիտության արժեքները հռչակող մարդը պետք է հետևի դրանց և պահպանի ակադեմիական էթիկայի բոլոր կանոնները:

Ակտիվ գիտնականի և արդյունավետ դասախոսի որակների օպտիմալ հարաբերակցության հաստատման համար անհրաժեշտ է խթանել կրթական ոլորտում գիտնականի, իսկ գիտական ոլորտում՝ դասախոսի կարիերայի աճը: Անհրաժեշտ է նաև բարձրացնել գիտնականների և դասախոսների մեդիագրագիտության մակարդակը, ինչը պայմանավորված է գիտության և կրթության ոլորտների ընդհանուր թվայնացմամբ: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հայտնի գիտնականների և ուսուցիչների գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման փորձի ուսումնասիրմանը և կիրառմանը: Արդյունավետ գիտնական-դասախոսի ձևավորմանը կարող է նպաստել նաև դպրոցում, համալսարանում, ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում աշխատանքային որոշակի փորձը՝ տարբեր կրթական մակարդակներում սովորողների մտավոր կարողությունների և հոգեբանության խորը ըմբռնման հմտություններ ձեռք բերելու և նրանց գիտակրթական գործունեությունն արդյունավետ խթանելու համար:

Նշենք նաև, որ գիտնականների, դասախոսների և ուսանողների գիտակրթական գործունեության խթանումը շարունակական և կրկնվող գործընթաց է, և գիտության ու կրթության ապագան կախված է վերջինիս արդյունավետության աստիճանից: Հետևաբար, սեփական օրինակով ուսանողների գիտակրթական գործունեության խթանումը ուսուցիչ-գիտնականի իրավասությունն ու պարտականությունն է: Այս համատեքստում անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավել ուսանողներին գիտահետազոտական նախագծերում, նրանց հետ գրել համահեղինակային գիտական հոդվածներ (որոշ դեպքերում մագիստրատուրայի ուսանողներից կարող է պահանջվել տպագրել 1-2 գիտական հոդված), սովորեցնել գիտությամբ զբաղվել և բացատրել նրանց գիտահետազոտական գործունեության առավելությունները: Վերջինս ենթադրում է գիտակրթական գործունեության պետական և մասնավոր ֆինանսավորման ծավալների ավելացում՝ գիտնականներին, դասախոսներին

և երիտասարդ մասնագետներին մոտիվացնելու նպատակով:

Ստորև ներկայացնենք նաև 2010-2023թթ. պետական ֆինանսավորման (բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ) ծավալները գիտության ոլորտում (թվերը չեն ներառում պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերը):

Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը 2010-2023թթ. (մլն դրամ) [7]



Վերը բերված տվյալներից երևում է, որ 2010-2023թթ. ընթացքում տեղի է ունեցել գիտության ֆինանսավորման ծավալի ցուցանիշի զգալի աճ՝ 22988,6 մլն դրամով: Անշուշտ, գիտության ֆինանսավորման ծավալների ավելացումը դրական երևույթ է, սակայն պետք է նշենք, որ անհրաժեշտ է ապահովել այս ցուցանիշի շարունակական աճը՝ հատկապես հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման ներկայիս խնդիրները: Այս համատեքստում հատկապես կարևորվում է գիտության բազային ֆինանսավորման ծավալների շարունակական աճի ապահովումը: Նշենք, որ բազայինի մեջ են մտնում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունները, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանումն ու զարգացումը, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանությունը, գիտական կադրերի պատրաստումը, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովումը, համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերումը և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացումը: Բազային ֆինանսավորման մեջ են մտնում նաև գիտական աստիճանների համար գիտաշխատողներին տրվող հավելավճարները:

Անդրադառնալով հետազոտահեն կրթության կազմակերպման հիմնախնդիրներին նշենք նաև, որ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կստեղծվի «ՍՄԱՐԹԼԱԲ» կենտրոն, որն

իրականացվում է «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» ծրագրի շրջանակում [8]: ՃՇՀԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում նախատեսվում է առկա լաբորատոր բազայի համալրում միջառարկայական կիրառություն ունեցող նորագույն փորձասարքերով, որը միտված է ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման համապատասխան կրթական ծրագրերի դասավանդման-ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը, խելացի լուծումների կիրառմանը և բուհի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը: Ծրագրի արդյունքում նախատեսվում է իրականացնել սարքերի ինտերնետ (IoT) լաբորատորիայի հիմնում, համակարգչային լսարանի հիմնում՝ անհրաժեշտ ծրագրային փաթեթների ապահովմամբ, շինությունների տեղեկատվական մոդելավորման մոտեցումների ներդրում համալսարանի կրթական ծրագրերում, ուսումնամեթոդական նյութերի մշակում, տպագրում և այլն:

Անշուշտ, հետազոտահեն կրթության կազմակերպման գործընթացը մեծապես պայմանավորված է նաև պետական և մասնավոր հատվածների համագործակցության ակտիվացմամբ, մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում գիտական հետազոտությունների արդյունքների ներդրմամբ, ինչպես նաև նշված ընկերությունների և գիտակրթական հաստատությունների ընդհանուր ներուժի արդյունավետ օգտագործմամբ:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել հետազոտահեն կրթության կազմակերպման հետևյալ ուղիները.

1. Տնտեսության գիտելիքատար ոլորտների զարգացման խթանում,
2. Գիտակրթական համակարգի զարգացման և կրթության ու գիտության ոլորտների ֆինանսավորման ընդհանուր օբյեկտիվ համակարգվածության և ներդաշնակության ապահովում,
3. Գիտության և կրթության ոլորտների թվային վերափոխում,
4. Նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում,
5. Կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում,
6. Ըստ նպատակային գործունեության արդյունավետության և/կամ մանկավարժական և գիտամանկավարժական (դասախոսական) անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանի ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների որոշում,
7. Հետազոտահեն կրթության կազմակերպման արտասահմանյան առա-

ջատար փորձի կիրառում և այլն:

Այսպիսով, հետազոտահեն կրթության կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ ապագայում կարող է նպաստել գիտակրթական համակարգի մրցունակության բարձրացմանը, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը, հասարակության անդամների կենսամակարդակի բարելավմանը և ՀՀ տնտեսության համաչափ և կայուն զարգացմանը:

Գրականություն

1. Юдина Т.Н. Цифровизация как тенденция современного развития экономики Российской Федерации: Pro y contra // Государственное и муниципальное управление. Ученые записки. 2017. № 3. С. 139–143.
2. Лонский И.И. Информатизация и эволюция общества // Перспективы науки и образования. 2015. № 2 (14). С. 29–35.
3. Զախարյան Ա.Գ. ՀՀ կրթության ոլորտի թվային փոխակերպման շուրջ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, (Գիտական հոդվածների ժողովածու - 2022), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2022թ., N 2, էջ 321-365:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան՝ Հոկտեմբեր 2016:
5. Захарян А.Г. Интеллект как фактор инновационного развития экономики, V Российский экономический конгресс «РЭК-2023», Том IX. Тематическая конференция «Наука и инновации» (сборник докладов) / Составители: А. Е. Варшавский, Н. И. Иванова, Е.Б. Ленчук, Москва, 2023, с. 62-67, http://www.econorus.org/pdf/Volume9_REC-2023.pdf
6. Имидж преподавателя вуза: структура, технологии, этапы формирования, https://lala.lanbook.com/imidzh-prepodavatelya-vuza-struktura-tekhnologii-ehtapy-formirovaniya
7. «ՀՀ պետական բյուջեի մասին» 2010-2023թթ. ՀՀ օրենքները, https://www.gov.am/am/budget/
8. ՃՇՀԱՀ-ում կստեղծվի «ՍՄԱՐԹԼԱԲ» կենտրոն, https://escs.am/am/news/20408

ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

[1]В. Бостанджян, [2]А. Захарян

[1]Ереванский госуниверситет, [2]Международный научно-образовательный центр НАН Армении

Статья посвящена изучению методов и механизмов укрепления научного потенциала посредством организации исследовательского образования в Республике Армения, факторов, определяющих их эффективное использование, а также вопросов стимулирования инновационного развития сферы науки. В статье на примере Республики Армения рассмотрены возможности организации и финансирования исследовательского образования, а также разработаны некоторые механизмы стимулирования инновационного развития экономики посредством организации исследовательского образования.

Ключевые слова: наука, образование, инновационное развитие, финансирование, научная и научно-техническая деятельность, развитие, эффективность

PROBLEMS OF ORGANIZING RESEARCH EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

[1]V. Bostanjyan, [2]A. Zakharyan

[1]Yerevan State University, [2]International Scientific and Educational Center of NAS RA

The article is devoted to the study of methods and mechanisms for strengthening scientific potential through the organization of research education in the Republic of Armenia, the factors, that determine their effective use, as well as issues of stimulating innovative development in the spheres of science. Using the example of the Republic of Armenia, the article examines the possibilities of organizing and financing research education, and develops some mechanisms for stimulating innovative economic development through the organization of research education.

Keywords: science, education, innovative development, financing, scientific and scientific-technical activity, development, efficiency

DOI: 10.61484/29538181-sj.10.24-02

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Լուսյա Մկրտչյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 12.05.24, գրախոսված է 14.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, չնայած զարգացած երկրների կառավարությունների և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից այն հաղթահարելուն ուղղված միջոցառումներին, շարունակվում է տարածվել՝ զգալի սոցիալ-տնտեսական վնասների պատճառ դառնալով համարյա բոլոր տարածաշրջաններում: Այն ունի տարբեր արտահայտություններ, այդ թվում՝ զարգացման տեմպերի անկում կամ նույնիսկ հեգընթաց, գործազրկության աճ, եկամուտների և սպառման նվազում, ներդրումների կրճատում, կազմակերպությունների սնանկացում և լուծարում, բնակչության կենսամակարդակի իջեցում: Աշխատանքում ներկայացված է հակաճգնաժամային միջոցառումների ծրագիրը, որով հնարավոր դարձավ պահպանել մակրոտնտեսական կայունությունը:*

Հիմնաբառեր. *ֆինանսական ճգնաժամ, գործազրկություն, տնտեսական աճ, համաշխարհային շուկա:*

Հակաճգնաժամային կառավարումը տնտեսագետների կողմից բնորոշվում է որպես կազմակերպության գոյությանը սպառնացող դրության հաղթահարման համար անհրաժեշտ գործունեություն, որը բնութագրվում է անհրաժեշտ միջոցների և մեթոդների կիրառման բարձր ինտենսիվությամբ: Որոշ հետազոտողների կարծիքով, այս դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է կարճաժամկետ խնդիրների վրա, որոնք կապված են խիստ և արագ որոշվող միջոցառումների իրականացման հետ: Մյուս հեղինակները, որոնք ցանկանում են ընդգծել ճգնաժամերի դրական բնույթը, հակաճգնաժամային կառավարումը բնորոշում են որպես գործիքների ստեղծում, որոնք թույլ են տալիս հաղորդել մոտեցող անկման կետի մասին և մշակել զարգացման նոր ուղղություն:

Կազմակերպության հակաճգնաժամային կառավարումը սկսվում է նրա առաքելության ընտրությունից [1]: Կազմակերպության զարգացման հաջորդող փուլերում նրա ղեկավարության ուշադրությունը պետք է կենտրոնանա կազմակերպության դրության, նրա մրցակցային դիրքի հնարավոր վատթարացման մաին վկայող նշանների ժամանակին ընկալման վրա: Այդ նշանները (սկզբում թույլ) տեղեկատվության կուտակմանը զուգահեռ աստիճանաբար ուժեղանում են և թույլ են տալիս կազմակերպության ղեկավարությանը ձեռնարկել միջոցառումներ ճգնաժամային իրավիճակների կանխման ուղղությամբ:

Հակաճգնաժամային կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է սնանկության գծով կառավարիչի վճռական գործողություններից: Սնանկության գծով կառավարիչը նշանակվում է դատարանի կողմից և նրան փոխանցվում են պարտապանի գույքի արտաքին կառավարման գործառույթները: Պարտապանի գույքի արտաքին կառավարումը ստեղծում է իրական հնարավորություններ վերականգնելու կազմակերպության (պարտապանի) վճարունակությունը և շարունակելու նրա գործունեությունը գույքի մի մասի իրացման և այլ կազմակերպա-տնտեսական միջոցառումների իրականացման ճանապարհով: Հակաճգնաժամային կառավարումը կարող է և պետք է լինի արդյունավետ, դրա համար կարևոր է զբաղվել գործընթացի տարբեր կողմերով: Հարկ է կառավարել.

1. կազմակերպության ակտիվները (պասիվները),
2. գործարարության գործընթացի փուլերը (վաճառք, արտադրություն, մատակարարում, հաշվառում),
3. գույքի պաշտպանության և գործարարության անվտանգության ծրագրերը,
4. կադրերը (ներառյալ՝ կադրային քաղաքականության ձևավորման, սոցիալական հարցերը և արհմիությունների հետ փոխհարաբերությունները),
5. բաժնետերերի, գործընկերների, պետական իշխանության մարմինների հետ փոխհարաբերությունների կառուցման ծրագրերը,
6. տեղեկատվական օժանդակության ծրագրերը (ներառյալ՝ կառավարման պլանների, մեթոդների և սկզբունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը աշխատանքային անձնակազմին, ինչպես նաև սոցիալական նշանակության ոլորտների գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը լայն հասարակությանը):

Խոշոր արդյունաբերական օբյեկտների հակաժգնաժամային կառավարման գծով գործունեությունը կնպաստի երկրի արդյունաբերական ներուժի պահպանմանն ու զարգացմանը [2]:

Կազմակերպա-արտադրական կառավարումը կազմակերպությունում կազմակերպա-կառավարչական բնույթի միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է մրցունակ արտադրանք ստեղծելու նպատակով արտադրության արդյունավետության բարձրացմանը: Հակաճգնաժամային կառավարման կառուցվածքում առանցքային տեղ է զբաղեցնում կազմակերպա-արտադրական կառավարումը, քանի որ այն հիմքն է կազմակերպության կառավարման բոլոր կառուցվածքային տարրերի գործունեության համար՝ անկախ նրա կազմակերպա-իրավական ձևից:

Հակաճգնաժամային կառավարումը ներառում է մի քանի փուլեր՝

1. Ֆինանսական դրության ախտորոշում.

ա) գործարարության գնահատում՝ անշարժ գույք, այդ թվում՝ հող, մեքենաներ և սարքավորանքներ, արժեթղթեր, ոչ նյութական ակտիվեր, այդ թվում՝ ինտելեկտուալ և այլ սեփականություն, այլ ակտիվներ,

բ) ֆինանսական վիճակի վերլուծություն:

2. Մարքեթինգ
3. Ներդրումներ
4. Անձնակազմի կառավարում՝ վարչական և արտադրական
5. Արտադրական կառավարում (արտադրության օպերատիվ կառավարում)
6. Վերակազմակերպական-լուծարային ընթացակարգեր՝ գույքի արտաքին կառավարում, մինչդատարանային առողջացում (ֆինանսական առողջացում), հարկադրաբար լուծարում, կամավոր լուծարում:

Կազմակերպության (այդ թվում՝ անվճարունակ) բարեփոխման և առողջացման հիմնական կազմակերպական մեխանիզմը, անկախ նրա կազմակերպա-իրավական ձևից, վերակառուցումն է, այսինքն՝ կազմակերպության ռեսուրսների (նյութական և ոչ նյութական) կառուցվածքային փոփոխությունների գործընթացն է շուկայական պայմաններում, նրա արդյունավետության և կայունության բարձրացման համար:

Կազմակերպության բարեփոխման հիմքում ընկած հիմնական սկզբունքը գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման սկզբունքն է, որը որոշում է բաժանել կամ միավորել գույքը կամ դրա նկատմամբ իրավունքը այնպես, որ այդ գույքի և դրա նկատմամբ իրավունքի արժեքը աճի, այսինքն՝ ավելանա կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից եկամտաբերությունը: Ճգնաժամային իրավիճակում հայտնված կազմակերպության արդյունավետ արտադրական գործունեության վերականգնման համար կարող են օգտագործվել օրենսդրությամբ սահմանված առողջացման կազմակերպական մեխանիզմներ, այդ թվում՝

1. Արտադրության վերապրոֆիլավորում, կոնվերսիա և այլն,
2. Անեկամտաբեր արտադրությունների փակում (լուծարում):

Գիտատեխնիկական հետազոտությունների և կոնստրուկտորա-տեխնոլոգիական աշխատանքների կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունը արտադրության հակաճգնաժամային կառավարման գործընթացում կապված է մրցունակ արտադրանքի տեսակների, ներդրումների աղբյուրների և չափերի, արտադրանքի արտադրության տեղի որոշման հետ: Ճգնաժամային պայմաններում արտադրանքի արտադրության գիտական հիմնավորումը ուղղակիորեն կապված է ճյուղային և տեխնոլոգիական առանձնահատկությունների, արտադրության վերակառուցման խնդիրների, մրցունակ արտադրանք թողարկելու համար սկզբունքորեն նոր տեխնոլոգիական և արտադրական հզորությունների ստեղծման հետ [3]:

Ընդհանուր դեպքում արտադրության հակաճգնաժամային կառավարման ռազմավարությունը կայանում է արտադրության պահանջների բավարարման և կազմակերպության արտադրանքի պահանջարկի ապահովման համար տեխնոլոգիաների նորացման ծրագրերի մշակման և իրացման մեջ, ինչպես նաև կառավարչական և արտադրական անձնակազմի պատրաստման և վերապատրաստման մեջ:

Հակաճգնաժամային կառավարումը պետք է կառուցվի ընտրության սկզբունքով՝ նկատի ունենալով կազմակերպության գործունեության հիմնական, այդ թվում՝ շուկայական ցուցանիշները: Դրանք են՝

1. կազմակերպության հասարակական նշանակությունը,
2. թողարկվող արտադրանքի պահանջարկը,
3. կազմակերպության տեխնոլոգիական մակարդակը,
4. ընդհանուր առմամբ արտադրության գիտատարությունը,
5. արտադրական հզորությունների և ֆոնդերի վիճակը,
6. շուկայում սեփական դիրքի գրավման պոտենցիալ հնարավորությունը:

Հակաճգնաժամային գիտատեխնիկական քաղաքականության կազմակերպումն ու իրականացումը արտադրության հակաճգնաժամային կառավարման շրջանակներում կապակցվում է արտադրանքի արտադրության ժամանակակից տեխնոլոգիական գործընթացների որոշման, կազմակերպության օպտիմալ տեխնիկական պլանավորման ստեղծման և կառավարչական ու արտադրական ստորաբաժանումների կառուցվածքի ձևավորման հետ: Դա հնարավոր է մինչդատարանային ընթացակարգերի կամ արտաքին կառավարման փուլում: Արդյունաբերական անկման անուղղակի տնտեսական պատճառը այն փաստն է, որ արտադրությունը եկել է իրական հակասության վճարունակ պահանջարկի կրճատման հետ, այդ թվում՝ արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքում այլ ծախսերի կտրուկ աճի պատճառով: Այդ ծախսերի մեկ երրորդից ավելին դարձել են հատկացումները արտաբյուջետային ֆոնդերին, այդ թվում՝ տեղական: Նկատվում է բանկերին վարկերի տոկոսների վճարման, հարկերի (ինքնարժեքում ներառվող), ոչ նյութական ծառայությունների վճարումների և այլ ծախսերի ոչ մեծ տեսակարար կշիռ: Տվյալ միտումը բնութագրական է արդյունաբերության բոլոր ճյուղերի համար:

Կազմակերպությունները պետք է իրականացնեն մշտական կիրառական հետազոտություններ՝ ուղղված արդեն թողարկվող արտադրանքի վերափոխմանը, նոր կոնստրուկտորական և տեխնոլոգիական մշակումներ թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով: Կիրառական հետազոտությունները և կոնստրուկտորա-տեխնոլոգիական մշակումները պետք է իրականացվեն (շուկա-արտադրություն) համակարգում հակադարձ կապի ապահովման համար: Բացի դրանից, կազմակերպության գործու-

նեության կոնստրուկտորա-տեխնոլոգիական ուղղվածությունը, որպես կանոն, արտադրությանը ապահովում է օժանդակ և ոչ ստանդարտ սարքավորումների, գործիքների, ինչպես նաև սեփական առանձնահատուկ կամ մասնագիտացված սարքավորումների մշակումով, որը կարող է դառնալ արտադրության ինքնուրույն մրցունակ արտադրանք կազմակերպությանը անվճարունակության դրությունից դուրս բերելիս:

Կազմակերպության գիտատեխնիկական քաղաքականությունը կառուցվում է գոյություն ունեցող ոչ նյութական ակտիվների հիման վրա, դրանք են՝ գյուտերի պատենտներն ու հեղինակային իրավունքները, ռացիոնալիզատորական առաջարկները, գիտահետազոտական մշակումները, կոնստրուկտորական և տեխնոլոգիական նախագծերը, ինչպես նաև լաբորատորա-հետազոտական և կոնստրուկտորա-տեխնոլոգիական բազաները: Այդ նպատակով անվճարունակ կազմակերպությունում անհրաժեշտ է իրականացնել ունեցած կոնստրուկտորական և տեխնոլոգիական մշակումների ցուցակագրում և վերլուծություն, ինչպես նաև գիտական բազայի օգտագործման արդյունավետության և ոչ նյութական ակտիվների նյութականացման գործընթացների կառավարման գնահատում: Կազմակերպության (պարտապանի) ոչ նյութական ակտիվների դրության վերլուծության իրականացման համար անհրաժեշտ է անցկացնել քանակական ցուցանիշների մոնիտորինգ, որոշել դրանց կառուցվածքը, տարբերակել ըստ օգտագործման ժամանակի և պաշտպանվածության աստիճանի, գնահատել ոչ նյութական ակտիվներում ներդրումները: Ոչ նյութական ակտիվների օգտագործման տնտեսական արդյունավետությունը որոշիչ ցուցանիշ է կազմակերպությանը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու համար կառավարչական որոշումների ընդունման դեպքում:

Կազմակերպությանը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու և մրցունակ արտադրանք (ծառայություն) թողարկելու գործընթացում դրական արդյունքը կարող է պայմանավորված լինել արտադրությունում կազմակերպության ոչ նյութական ակտիվների կիրառման մակարդակի և արտադրանքի վաճառքի բարձրացման հետ:

Արտադրանքի համար այլ էական հատկանիշ կարող է լինել կազմակերպության ոչ նյութական ակտիվների ներդրումային գրավչությունը, որը որոշում է դրանց իրացվելիությունը և ներդրումային ռիսկի աստիճանը: Ոչ նյութական ակտիվների բարձր ներդրումային գրավչությունը հակաճգնաժամային ծրագրերի իրականացման գործընթացում բերում է կազմակերպության ունեցվածքում դրանց արժեքի մեծացմանը և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների նվազմանը, ինչը իր հերթին կարող է բերել հակառակ արդյունքի և կազմակերպությանը հասցնել անվճարունակության: Կազմակերպության արդյունավետ ոչ նյութական ակտիվները, փաստորեն, միշտ արտահայտվում են իրացվող կոնստրուկտորական և տեխնոլոգիական մշակներում, այսինքն՝ կազմակերպությանը ճգնաժամային իրավիճակից դուրս

բերելու համար անցկացվող իրական տեխնիկական քաղաքականության մեջ: Մրցունակ արտադրանքի թողարկումն ապահովող տեխնոլոգիայի միայն բարձր մակարդակը կարող է երաշխավորել իրական հակաճգնաժամային ծրագրերի իրականացում:

Գիտատեխնիկական և տեխնոլոգիական քաղաքականությունների միասնությունը որոշում է կազմակերպության տեխնիկական և տեխնոլոգիական վերակառուցման մակարդակը և վերջին հաշվով ներդրումների ներգրավումն ու նոր մրցունակ արտադրանքի արտադրության նախագծերի ֆինանսավորումը, մինչդատարանային առողջացման և արտաքին կառավարման փուլում:

Գրականություն

1. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Երևան, 2016
2. Մկրտչյան Լ., Տնտեսության հակաճգնաժամային կարգավորման հիմնական ուղղությունները, Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ-ի գիտաժողովի նյութեր, 2007
3. Մկրտչյան Լ., Տնտեսության հակաճգնաժամային կառավարման հիմնախնդիրները, ԵՀՀ գիտական հանդես, հատոր 8, 2023

ОБ УПРАВЛЕНИИ АНТИКРИЗИСНЫХ МЕРОПРИЯТИИ Р.А.

Лусине Мкртчян

Ереванский университет Айбусак

Несмотря на серьезные мероприятие на преодоление мирового финансово-экономического кризиса, проводимые развитыми странами определенными международными организациями продолжает распространяться и стал причиной социально-экономических ущербов во всех регионах. Представлена правительственная программа антикризисных мероприятий, которая дала возможность сохранить макроэкономическую стабильность.

Ключевые слова: финансовый кризис, безработица, экономический рост, мировой рынок.

RA GOVERNMENTAL ANTICRISIS PROGRAMS

Lusine Mkrtchyan
Yerevan «Haybusak» University

Despite the immense efforts of the governments of developed countries and some international organizations to overcome the world financial and economic crisis, it continues to cause social and economic harm in almost all regions. The paper presents governmental anticrisis programs that enable to maintenance of macroeconomic stability.

Keywords: financial crisis, unemployment, economic growth, world

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, հատոր 10, 2024

DOI: 10.61484/29538181-sj.10.24-03

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ում

Գայանե Գևորգյան, Աննա Հարությունյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է՝ 15.05, գրախոսված է՝ 17.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Հանրային ֆինանսների կառավարման գործում կարևորվում է հանրային ներդրումների կառավարումը, որը հանրային ֆինանսների կառավարման շրջանակներում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, ընտրության և դրանց իրականացման նկատմամբ կիրառելի կարգավորումներ և վերահսկողական մեխանիզմներ նախատեսող համակարգ է: Հանրային ներդրումը համախմբված բյուջեի ոչ ֆինանսական ակտիվի ձեռքբերումն է, կամ ոչ ֆինանսական ակտիվի ստեղծումը, փոխարինումը, կամ էական բարելավումը, որը Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի համար առաջացնում է ծախս կամ պայմանական պարտավորություն: Էական բարելավում են համարվում ակտիվի արտադրողականության բարձրացմանը կամ շահագործման ժամկետի ավելացմանն ուղղված ակտիվի վերականգնումը, վերակառուցումը կամ ընդլայնումը:*

Հիմնաբառեր. *հանրային ֆինանսներ, հանրային ներդրումներ, ներդրումային ծրագիր, հանրային գնումներ, պետություն-մասնավոր գործընկերություն, վենչուրային կապիտալ:*

Հանրային կառավարման արդյունավետությունը գնահատվում է կառավարման համապատասխան մակարդակում կատարված ծախսերի և ստացված արդյունքների համադրմամբ: Հանրային ներդրումների կառավարումը հանրային ֆինանսների կառավարման շրջանակներում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, ընտրության և դրանց իրականացման նկատմամբ կիրառելի կարգավորումներ և վերահսկողական մեխանիզմներ նախատեսող համակարգ է: Վերջինիս նպատակն է հանրային ներդրումային միջոցներն արդյունավետ բաշխելու և վերաբաշխելու միջոցով ապահովել ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված հանրային ներդրումային միջոցների առավել նպատակային օգտագործումը, ինչպես նաև հանրային ներդրումների արդյունավետության բարձրացմանը նպաստելը:

Հասարակության կյանքում դրսևորվող հասարակական,խմբային և անհատական շահերը օպտիմալացնելու, արտադրության արդյունավետությունը բարձրացնելու ճանապարհը անցնում է դրամական փոխհարաբերություններում համապատասխան մոտեցումներ դրսևորելով: Հասարակության մասշտաբով ֆինանսներն ունեն դրամական ֆոնդերի ձևավորման տարբեր դրսևորումներ, կարող են հանդես գալ կենտրոնացված և ապակենտրոնացված ձևերով, բայց բոլորը միտված են ամբողջ հասարակության և նրա առանձին

տարրերի պահանջների բավարարման խնդիրների լուծմանը: Պետության կառավարման մարմինների տնօրինությանը հանձնված դրամական միջոցները հանդիսանում են հանրային ֆինանսներ: Հանրային ֆինանսներին բնորոշ են որոշակի սկզբունքներ ու հատկանիշներ: Դրանց են վերաբերում դրամական միջոցների պարտադիր, անվերադարձ, հարկադրական հավաքագրման, և դրանց նպատակային վերաբաշխման անհրաժեշտությունը: Դրամական հարաբերությունների միջև եղած առանձնահատկությունները հատկապես զգալի են ՀՆԱ-ի և ԱԵ-ի բաշխման և վերաբաշխման գործընթացներում [1]: Ֆինանսների բաշխման գործընթացը տեղի է ունենում իրական արտադրության ոլորտում՝ կազմակերպություններում և տնային տնտեսություններում: Պետական ու համայնքների բյուջեների միջոցով հավաքագրվում են պետության հիմնական կենտրոնացված ֆոնդերը, և տեղի է ունենում միջոցների վերաբաշխում տնտեսության ճյուղերի, երկրի առանձին տարածաշրջանների և բնակչության խմբերի միջև: Հանրային ֆինանսներում ներառվում են՝

1. պետական բյուջեն,
2. համայնքային բյուջեները,
3. արտաբյուջետային ֆոնդերը,
4. պետական և մունիցիպալ վարկը:

Պետական բյուջեն ֆինանսական համակարգի առաջատար օղակն է, հանդիսանում է դրամական միջոցների կազմավորման ու օգտագործման տնտեսական հիմնքը, որի հիման վրա կենտրոնացվում է երկրի ֆինանսական ռեսուրսների նշանակալի մասը, նախանշվում է դրանց օգտագործման ուղղությունները: Արտաբյուջետային հատուկ ֆոնդերը ունեն խիստ նպատակային ուղղվածություն, կրում են ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական բնույթ: Պետական և մունիցիպալ վարկը իրենից ներկայացնում է մի կողմից պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի և մյուս կողմից իրավաբանական ու ֆիզիկական անձանց, այլ պետությունների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջև վարկ ստանալը կամ տրամադրելը: Այն իրականացվում է արժեթղթերի էմիսիայի, տեղաբաշխման, մասնագիտացված ֆինանսական ինստիտուտներից ու արտերկրներից վարկ ստանալու ուղիով:

Հանրային ֆինանսների ներդրումների կառավարման մարմինը Հանրային ներդրումների կոմիտեն է: Այս մարմինը ստեղծվել է 2023 թվին, որի նպատակն է գնահատել հանրային ներդրումների առաջնահերթությունները, որոշումներ կայացնելիս կարողանալ առաջնորդվել ըստ օգտակար գործողության առավելագույն գործակցի, ինչպես նաև բյուջեի պլանավորման ընթացքում օգտվել դրանից: ՀՀ կառավարությունը կարևորում է տարբեր ոլորտներում ներդրումային կապիտալ ծրագրերի արդյունավետ իրականացումը, ինչը կնպաստի համայնքների զարգացմանը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և այլ խնդիրների լուծմանը:

Պետությանը որպես գործատու պետություն-մասնավոր համագործակցությանը վերաբերվում է որպես աշխատաշուկայի մարտահրավերներին դիմակայելու և հնարավորություններն օգտագործելու միջոց: Պետությունը իր գերատեսչություններով միշտ էլ բաց է մասնավորի համար: Մասնավոր սեկտորում լավագույն աշխատակիցներին առաջարկներ անելու հնարավորությունները մեծ են, դրա պատճառը այն է, որ մասնավոր հատվածը ավելի նախաձեռնող է: Ժամանակակից արտադրահարաբերություններում պետություն – մասնավոր համագործակցությունը կարող է իրականացվել երկու ճանապարհով՝ հանրային գնումների և պետություն-մասնավոր գործընկերության ձևով: Սրանք երկուսն էլ կոչված են ապահովելու հանրության կարիքների բավարարմանը, սակայն իրենց գործունեության արդյունավետությամբ բավականին տարբեր են [2]:

ՄԳ-ն հանրային և մասնավոր գործընկերների միջև ծառայությունների մատուցման պայմանագրային հարաբերություն է, որն ուղղված է ենթակառուցվածքների ֆինանսավորմանը, կառուցմանը, վերանորոգմանը, կառավարմանը, պահպանմանը, շահագործմանը և հիմնված է մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացի (ՄԳԸԳ) միասնական, մրցակցային, թափանցիկ, հրապարակային սկզբունքներով և ոչ խտրական հիմունքներով երկարաժամկետ համագործակցության վրա:

Աղյուսակ 1 Հանրային գնումների և ՊՄԳ – ի բնութագրերը

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐ	ՊՄԳ
1. Կարճաժամկետ պայմանագիր է:	1.Երկարաժամկետ պայմանագիր է:
2.Ծրագիրը ֆինանսավորվում է միայն պետական և համայնքային բյուջեների միջոցներից:	2.Ծրագիրը ամբողջությամբ կամ մասնակի ֆինանսավորում է մասնավոր հատվածը:
3.Պետության և մասնավոր հատվածի միջև փոխհարաբերությունները ավարտվում են պայմանագրի պարտավորությունների ավարտով: Մասնակցի կողմից պայմանագրի կատարողականը մշտադիտարկում է գործողության ողջ ընթացքում:	3.Հանրային և մասնավոր հատվածների միջև փոխհարաբերությունները շարունակվում են պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո և ակտիվների տնօրինման իրավունքը վերադարձվում է պետությանը:
4.Պատասխանում է «ինչպես ձեռք բերել». հարցին.	4.Պատասխանում է «ինչ ձեռք բերել» հարցին:
5.Ռիսկերը ստանձնվում են միայն պատվիրատուի կողմից:	5.Ռիսկերը բաշխվում են հանրային և մասնավոր գործընկերների միջև:

ՊՄԳ-ն երկարաժամկետ պայմանագիր է մասնավոր հատվածի և պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմն-

ների (հանրային գործընկեր) միջև՝ հանրային ծառայությունների մատուցման, ինչպես նաև հանրային ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման համար:

Աղյուսակ 2. Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունները՝ ըստ կառավարող մարմինների և թվի

Ընկերություններ	Քանակը
1.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	48
2.ՀՀ առողջապահության նախարարություն	13
3. ՀՀ վարչապետի աշխատակազմ	3
4. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	7
5. ՀՀ պաշտպանության նախարարություն	2
6. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	5
7.ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	12
8. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	1
9 ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե	3
10.ՀՀ արդարադատության նախարարություն	1
11 ՀՀ Ֆինանսների նախարարություն	1
12.ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	48
13. ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ	15
14. Երևանի քաղաքապետարան	12
15.ՀՀ Շիրակի մարզպետարան	6
16.ՀՀ Լոռու մարզպետարան	6
17ՀՀ Սյունիքի մարզպետարան	6
18.ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	7
19.ՀՀ Արարատի մարզպետարան	4
20.ՀՀ Կոտայքի մարզպետարան	5
21. ՀՀ Արմավիրի մարզպետարան	3
22. ՀՀ Արագածոտնի մարզպետարան	3
23. ՀՀ Տավուշի մարզպետարան	
24. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	
Ընդամենը	215

Հանրային ներդրումները ընդգրկում են պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները: Համաձայն «ՀՕ-188 պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի պետական մասնակցությամբ ընկերություն են համարվում այն ընկերությունները, որտեղ պետության մասնաբաժինը կազմում է 50 % կամ ավելի:

Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների պորտֆելը

ընդգրկում է ընդհանուր թվով 215 ընկերություն, որից 48-ը գտնվում է Երևանի քաղաքապետարանի կառավարման ներքո, իսկ 168-ում պետությունն ունի մասնաբաժին:

168 ընկերությունից 154-ում պետության մասնակցությունը կազմում է 50%-ից ավել: 48 կազմակերպություն գտնվում են Երևանի քաղաքապետարանի կառավարման ներքո, սակայն ֆիսկալ ռիսկերի կառավարման տեսանկյունից պետության համար ունեն կարևոր նշանակություն: Նշված 215 ընկերությունների սեփական կապիտալի հանրագումարը կազմում է 279.36 մլրդ ՀՀ դրամ, իսկ ակտիվները՝ 790.45 մլրդ ՀՀ դրամ:

Պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվների 60%-ը Էներգետիկայի ոլորտում են,12%-ը՝ առողջապահության,12%-ը՝ տրանսպորտի, իսկ 16%-ը այլ ոլորտներում: «Երևանի ՋԷԿ», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ - ները հանդիսանում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով այդ ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողները: Միաժամանակ, այդ ընկերությունները նաև ապահովում են պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների եկամուտների զգալի մասը՝42%:

Աղյուսակ 3. Գործող ՊՄԳ պայմանագրերը

Անվանում	Ոլորտ	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների հարկաբյուջետային կարգավիճակ
«Արմենիա միջազգային օդանավակայան» ՓԲԸ	Տրանսպորտ	2002թ.	2032թ.	Նշանակալի վատթարացում
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Տրանսպորտ	2008թ	2038թ.	Նշանակալի անփոփոխ
«Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ	Էներգետիկա	2019թ.	2041թ.	Միջին անփոփոխ
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային էլեկտրակայան, ԷԳՊ	Էներգետիկա	2021թ.	2041թ.	Նշանակալի անփոփոխ
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Ջրամատակարարում և կեղտաջրի հեռացում	2016թ.	2031թ.	Նշանակալի անփոփոխ

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկի աստիճանը հիմնականում նշանակալի է համարվել ՊՄԳ բոլոր

պայմանագրերի համար, հաշվի առնելով, որ իրար հաջորդող ճգնաժամերը տարբեր բնույթի ազդեցություն են ունեցել ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայմանագրի վերաբանակցման կամ պայմանագրի վաղաժամ դադարեցման ռիսկերը, ինչն իր հերթին կարող է ավելացնել ՀՀ կառավարության պարտավորությունները:

Արժույթի միջազգային հիմնադրամը պետական մասնակցությամբ ընկերությունների վիճակի գնահատման մոդելի [3] կիրառմամբ ընտրվել է պետական մասնակցությամբ խոշոր ընկերություններից՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Երևանի ՋԷԿ» և «Հայփոստ» ՓԲԸ-ները և իրականացրել վերջիններիս ֆիսկալ ռիսկերի գնահատում: Ընտրված 3 ընկերության ակտիվները կազմում են ընդհանուր պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվների 37%-ը: Ֆիսկալ ռիսկերի գնահատումը կատարվել է շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ցուցանիշների հիման վրա: Մոդելը ներառում է ռիսկի հինգ կատեգորիա, որոնցից I կատեգորիան ներկայացնում է ռիսկի ավելի ցածր մակարդակ ունեցող, իսկ V կատեգորիան՝ ռիսկի ավելի բարձր մակարդակ ունեցող ընկերությունները: 2021թ. մոդելի արդյունքներով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների ռիսկայնությունը կազմել է 3.54, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ը՝ 3.694 [4]: Սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերը առաջանում են պայմանական պարտավորությունների կամ այլ անորոշ իրադարձությունների նյութականացման արդյունքում: Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը կարող է ենթադրել անհապաղ կամ շարունակական ծախսեր՝ պայմանավորված ՀՀ կառավարության բացահայտ պարտավորություններով, որոնք ունեն իրավական կամ պայմանագրային հիմք կամ թաքնված պարտավորություններով, որոնք սահմանված չեն որևէ օրենքով կամ պայմանագրով:

Բյուջետային վարկավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ պետական բյուջեից, միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ներգրաված վարկային միջոցների հաշվին 2023թ. դրությամբ տրամադրված բյուջետային վարկերի և ենթավարկերի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 307 մլրդ ՀՀ դրամ, որից 84%-ը ուղղվել է ենթակառուցվածքային ոլորտին: 2023թ. Դրությամբ ՀՀ կառավարությանը տրված վարկերի կառուցվածքում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով կազմակերպություններին տրամադրված բյուջետային վարկերի մնացորդը կազմել է մոտ 161 մլրդ ՀՀ դրամ կամ տրամադրված ընդհանուր վարկային պորտֆելի 52%-ը:

Աղյուսակ 4 ՀՀ վարկային պորտֆելը

Պորտֆելը	Արժեքը/մլրդ ՀՀ դրամով	Կշիռը /%
ՀՀ դրամով	104.5	34
ԱՄՆ դոլարով	102.0	33
Եվրոյով	32.0	10
Ճապոնական իենով	60.7	20
ՀՓԻ-ով	7.8	3
Ընդամենը	307	100

Ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 34% կամ 104.5 մլրդ, ԱՄՆ դոլարով՝ 102 մլրդ ՀՀ դրամ, կամ 33%, Եվրոյով՝ 10% կամ 32 մլրդ ՀՀ դրամ, ճապոնական իենով՝ 20% կամ 60.7 մլրդ ՀՀ դրամով, 3%-ը ՀՓԻ-ով: Պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 66%-ը ներգրավված է արտարժույթով, իսկ վարկառուների եկամուտները հիմնականում ՀՀ դրամով են: Ենթակառուցվածքային ոլորտում տրամադրված վարկերի չմարված մասի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն էներգետիկայի ոլորտի վարկերը՝ 251.3 մլրդ ՀՀ դրամ (82%): Տրամադրված վարկերից 72%-ը ապահովված են գրավով (հող, շինություն և այլն), իսկ 28%-ը կազմում են գրավով չապահովված վարկերը: Վերջիններս պետական ծրագրերի իրականացմանը կամ պետական մասնակցությամբ ընկերություններին ուղղված միջոցներն են: Վարկային պորտֆելի 5%-ը վերակառուցված վարկեր են:

Բացի բյուջետային վարկերից 2023թ.առկա է բյուջետային երաշխիքների փաթեթ, այդ թվում՝ Արտարժույթով երաշխիքների մասով՝ 92.8 մլն ԱՄՆ դոլար մնացորդով, ՀՀ դրամով արտահայտված երաշխիքների մասով՝ 8,575 մլն դրամ՝ գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող աջակցության ծրագրի շրջանակներում:

2018 թ.-ից սկսած՝ ՀՀ կառավարությունը պարբերաբար շրջանառում էր Ազգային վենչուրային ֆոնդ (ԱՎՖ) ստեղծելու գաղափարը: 2019 թ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և «Գրանատուս վենչուրսի» Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամի հետ համաձայնագրի ստորագրմամբ ստեղծվեց Granatus Tech4SDG հիմնադրամը՝ 40 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ: Վերջինիս նպատակն է բարձր տեխնոլոգիաներն ու տեխնոլոգիական ներուժն ուղղել սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծմանը: «Գրանատուս վենչուրսն» աջակցում է ստարտափներին ամբողջ աշխարհում, որոնք օգտագործում են Հայաստանի ներուժը՝ որպես զարգացող տեխնոլոգիական կենտրոն: 2023 թ. հունիսի դրությամբ՝ հիմնադրամի պորտֆելային ընկե-

րությունների թիվը հասել է 18-ի: Միաժամանակ, կարևոր է ընդգծել, որ պետության մասնակցությունը վենչուրային հիմնադրամներին ունի ոչ միանշանակ ազդեցություն: «Պետական մասնակցությամբ վենչուրային կապիտալի ազդեցությունները. Միջազգային փորձից բխող ապացույցներ» հետազոտության հեղինակները, եկել են այն եզրակացության, որ կառավարության կողմից փոքր աջակցությամբ ձեռնարկությունների կատարողականի մակարդակը բարձրանում է՝ համեմատած այն ձեռնարկությունների հետ, որոնք ներդրումներ են ստացել բացառապես մասնավոր վենչուրային ֆոնդերից: Միաժամանակ, ի հակադրություն դրա, պետական աջակցությամբ վենչուրային ֆոնդերի աջակցության մեծ ծավալները զուգորդվում են ցածր կատարողականի հետ: Այլ կերպ ասած, կառավարության փոքր աջակցությունն ավելացնում է ներդրումներից եկամուտները, մինչդեռ մեծ աջակցությունը հակառակ ազդեցություն է ունենում: Ըստ հեղինակների՝ զգալի է տարբերությունը պետական աջակցությամբ և պետության սեփականությամբ վենչուրային ֆոնդերի միջև՝ այն առումով, որ վերջիններիս արդյունավետությունն ավելի ցածր է [5]: ՀՀ-ում գրանցված ստարտափների համար հասանելի վենչուրային հիմնադրամները նախասաղմնային, սաղմնային և նախնական փուլում են ներդրումներ կատարում, իսկ ավելի բարձր փուլերում (Series A, B, C, D) ներդրումներ ներգրավելու համար հայկական ստարտափները կարիք ունեն դիմելու միջազգային վենչուրային հիմնադրամների: Երկրում վենչուրային կապիտալի ներգրավման համար կարևոր են ներդրումային միջավայրի գրավչությունն ընդհանրապես և վենչուրային կապիտալի ներգրավման գրավչությունը՝ մասնավորապես: Վերջինիս գնահատման նպատակով օգտագործվում է 2021 համաթիվը, որը վարկանշավորում է աշխարհի 125 երկրներն ըստ այդ բաղադրյալ ցուցանիշների, որոնց համընդհանուր գնահատականը ցույց է տալիս, թե ինչքանով է այս կամ այն երկիրը գրավիչ վենչուրային կապիտալի ներգրավման համար: Հայաստանը 2020-2021 թթ. զբաղեցրել է 90-րդ հորիզոնականը՝ որոշակի հետընթաց գրանցելով 2017-2019 թթ.-ի համեմատ: «Վենչուրային կապիտալի և բաժնեմասնակցության» համաթիվը հաշվի է առնում տնտեսական ակտիվությունը, կապիտալի շուկայի չափն ու իրացվելիությունը, հարկային համակարգը, ներդրողների պաշտպանությունը և կորպորատիվ կառավարումը, մարդկային և սոցիալական միջավայրը, ձեռնարկատիրական մշակույթն ու հնարավորությունները:

Հանրային ներդրումային ծրագրերի գնահատման չափորոշիչներն են՝

1.մարդկային կապիտալի վրա ազդեցությունը,

2.ենթակառուցվածքի հանրային նշանակությունը,

3.համապատասխանությունը ոլորտի ռազմավարությանը,

4.ծրագրի ռիսկայնությունը,

5.տնտեսական շահութաբերության ներքին դրույքը:

Ներկա պահին հանրային ֆինանսների ներդրումները կենտրոնացված են տնտեսության արդիականացման միջոցառումներում, որը ընդգրկում է.

1. Արտադրական կարողությունների արդիականացման միջոցառում.
2. Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում.
3. Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառում.
4. Թողարկման եվ վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր.
5. Տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիր.

Գծապատկեր 1. ՀՀ վենչուրային կապիտալի և բաժնեմասնակցության համաթիվը, 2017-2021 [6]



Հանրային ֆինանսների կառավարման ներկա փուլը բավականին բարդ է, ոչ միայն ՀՀ-ում, այլև ամբողջ աշխարհում: Դա պայմանավորված է համաշխարհային տնտեսության վրա ազդող բացասական ազդակներով՝ համավարակ, հակամարտություններ, տնտեսական պատժամիջոցներ: ՀՀ տնտեսությունը վերջին տարիներին ենթարկվում է աննախադեպ ցնցումների: Պետական բյուջեն և Պետական ՄԺԾԾ-ն ընդունելուց հետո բյուջետային տարվա ընթացքում անհրաժեշտություն է առաջանում շտկումներ կատարել (համաճարակով, արցախյան պատերազմով, արցախցիների բռնագաղթով պայմանավորված): Այս իրադարձությունները խաթարում են ներդրումային միջավայրի արդյունավետությունը, այդ թվում նաև հանրային ներդրումների: Սակայն սրանից բացի կարևորվում է ներդրումների կառավարման վատ որակը: Ոչ մի կերպ կառավարությունը չի կարողանում այնպիսի ներդրումային կառավարման մարմին ձևավորել, որը կապահովի ոլորտի համակարգված

կառավարումը: Մեկ ստեղծում են Հայաստանի հետաքրքրությունների հիմնադրամ, /ԱՆԻՖ/, հետո անարդյունավետ համարում, ձևավորում են Հանրային ներդրումների կոմիտե, որի կազմում Էկոնոմիկայի նախարարությունը՝ հանձինս նախարարի, ներդրումների արդյունավետությունը կապում է տնտեսական աճի հետ, իսկ ֆինանսների նախարարությունը՝ հանձինս նախարարի, կարևորում է ֆինանսական կայունությունը, առավել հիմնվելով ոչ իրական հատվածի, այլ կապիտալի շուկայում ներդրումների վրա:

Իրավիճակն այսպիսին է քանի որ ներդրումային ռազմավարություն մշակված չէ: Եթե պարզ չէ թե ուր ենք գնում, ապա ճանապարհային քարտեզն էլ հայտնի չէ:

Այդ առումով առաջարկվում է.

1. Նոր ձևավորված Հանրային ներդրումների կոմիտեն համալրել մասնագիտական բարձր կարողություններով օժտված անձնակազմով:
2. ՀՀ Հանրային ներդրումների ռազմավարությունը մշակել հիմնվելով երկրի առաքելության վրա՝ օգտվելով ԱՄՀ խորհրդատվությունից:
3. Հանրության համար ապահովել հանրային ներդրումային գործընթացի իրական թափանցիկություն:
4. Բյուջեի կատարման գործընթացի բարելավում. մինչև 1միլդ դրամի ներդրումները վստահել բյուջետային համակարգին:

Առաջարկությունները կնպաստեն ՀՀ Հանրային ներդրումների արդյունավետության բարձրացմանը:

Գրականություն

1. Լ. Բաղանյան, Ֆինանսներ, դրամաշրջանառություն, վարկ, 2007
2. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-284-Ն օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետը
3. «STATE-OWNED ENTERPRISE HEALTH CHECK TOOL» մոդել
4. ՀՀ 2024-2026թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
5. https://blog.iese.edu/vcpeindex/armenia/The Venture Capital and Private Equity Country Attractiveness Index
6. https://blog.iese.edu/vcpeindex/armenia/The Venture Capital and Private Equity Country Attractiveness Index

ГОСУДАРСТВЕННЫЕ ИНВЕСТИЦИИ РА

Гаяне Геворгян, Анна Арутюнян

Ереванский университет Айбусак

В управлении государственными финансами важное значение имеет управление государственными инвестициями, которое представляет собой систему, обеспечивающую регулирование и механизмы контроля, применимые к выбору, разработке, отбору и реализации программ государственных инвестиций в рамках управления государственными финансами. Государственные инвестиции – это приобретение нефинансового актива консолидированного бюджета либо создание, замена или значительное улучшение нефинансового актива, вызывающее расходы или условное обязательство консолидированного бюджета Республики Армения. Существенным улучшением считается восстановление, реконструкция или расширение актива, направленное на повышение производительности актива или увеличение срока службы актива.

Ключевые слова: государственные финансы, государственные инвестиции, инвестиционная программа, государственные закупки, государственно-частное партнерство, венчурный капитал.

RA PUBLIC INVESTMENTS

Gayane Gevorgyan, Anna Harutyunyan

Yerevan «Haybusak» University

In the management of public finances, the management of public investments is important, which is a system providing regulations and control mechanisms applicable to the selection, development, selection, and implementation of public investment programs within the framework of public finance management. Public investment is the acquisition of a non-financial asset of the consolidated budget, or the creation, replacement, or significant improvement of a non-financial asset, which causes an expense or contingent liability for the consolidated budget of the Republic of Armenia. A significant improvement is considered to be the restoration, reconstruction or expansion of the asset aimed at increasing the productivity of the asset or increasing the life of the asset.

Keywords: public finance, public investment, investment program, public procurement, public-private partnership, venture capital.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-04

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արմինե Մաճկալյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է՝ 15.05, գրախոսված է՝ 17.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփում. *Տնտեսագիտական հետազոտություններում վիճակագրական նյութերի մշակման պրակտիկայում ծառանում են խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում են տարբեր միջիններ: Մաթեմատիկական վիճակագրությունը դուրս է բերում տարբեր միջինները աստիճանային միջինից: Վիճակագրական պրակտիկայում հաճախ օգտվում են միջին թվաբանականից, կշռված միջինից, պայմանական միջինից և այլն: Այն դեպքում երբ համակցությունը արտահայտված է եռանիշ, քառանիշ կամ հնգանիշ թվերով, միջինի հաշվարկման համար նպատակահարմար է օգտվել պայմանական միջին արժեքից: Պայմանական միջինի օգտագործումը հեշտացնում է միջին թվաբանականի հաշվարկը՝ եռանիշ, քառանիշ, հնգանիշ թվերը դարձնելով միանիշ, երկանիշ և այլն, որոնց հետ գործողություններ կատարելն ավելի դյուրին է:*

Հիմնաբառեր. *կշռված միջին, պայմանական միջին, վիճակագրական տվյալներ, համակցություն*

Շուկայական տնտեսության պայմաններում վիճակագրությունը լուծում է իր առջև դրված խնդիրները: Վիճակագրական տվյալների մշակումը թույլ է տալիս արտադրությունում մեծ ճշտությամբ կազմակերպել դետալների ստացումն ու հաստոցների նախագծումը: Գիտությունն ու տեխնիկան ղեկավարվում են վիճակագրության օրենքներով, հետազոտման վիճակագրական մեթոդներով:

Միջին մեծությունը վիճակագրական գիտության կարևորագույն կատեգորիաներից է: Այն սոցիալ-տնտեսական հետազոտություններում վիճակագրական ցուցանիշների գնահատման ամենատարածված ձևն է: Փորձարար քիմիկոսն ու ֆիզիկոսը, կենսաբանն ու տնտեսագետը իրենց գիտական և աշխատանքային գործունեությունում կիրառում են վիճակագրության մեթոդներն ու հաշվարկները:

Միջին մեծությունները բազմաթիվ են, և քանակապես դրանք արտահայտում են վիճակագրական համախմբության որոշակի հատկություններ: [1-2]

Վիճակագրության պրակտիկայում հաճախ օգտվում են միջինի հետևյալ տեսակներից:

- Միջին թվաբանական
- Կշռված միջին
- Պայմանական միջին
- Միջին հարմոնիկ

- Միջին երկրաչափական
- Միջին քառակուսային
- Խորանարդ միջին

Միջին թվաբանականը որոշվում է հատկանիշի արժեքների գումարի և անդամների թվի հարաբերությամբ

$$\overline{X} = \frac{X_1 + X_2 + \ldots + X_n}{n} = \frac{\sum_{i=1}^{n} X_i}{n} \qquad (1)$$

Միջին թվաբանականի հաշվարկման օրինակ

Նկար 1. Միջին արտանետման հաշվարկը Excel ծրագրով



Աղյուսակ 1 Արտանետումներ անշարժ աղբյուրներից (2017-2023թթ)(հազ.տ)

Տարեթվեր	***2017***	***2018***	***2019***	***2020***	***2021***	***2022***	***2023***
Արտանետումներ	***14,1***	***15.2***	***16.6***	***21.2***	***30.4***	***18***	***22***

$$\overline{X} = \frac{\sum_{i=1}^{n} X_i}{n} = \frac{14{,}1+15.2+16.6+21.2+30.4+18+22}{7} = 19.64$$

հազ. տոննա

Այսպես վնասակար նյութերի՝ անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների միջինը ըստ տարիների կազմում է 19,64 հազ. տոննա:

Աղյուսակ 1-ի տվյալներով որոշենք մթնոլորտային արտանետումների միջինը՝ օգտագործելով պայմանական միջինի բանաձևը: [3]

$$\bar{X} = \frac{\sum_{i=1}^{n} (X_i - a)}{n} + a \qquad (2)$$

որտեղ a-ն պայմանական միջինն է, Xi-ն հատկանիշի արժեքը, (Xi-a) պայմանական միջինից անհատական արժեքների շեղումներն են:

Որպես պայմանական միջին ընտրենք a=17, / կարող ենք ցանկացած թիվ վերցնել հաշվարկի համար, բացի եզրային թվերից /13,9 և 21/

Այնուհետև հաշվարկում ենք անհատական արժեքների շեղումները պայմանական արժեքից (Xi-a), ապա որոշում այդ շեղումների գումարը:

X1-a=13,9-17=-3,1, X2-a=14,2-17=-2,8

Xi	13,9	14.2	16.4	21.7	30.3	17	21	Գումար
Xi-a	-3,1	-2,8	-0,6	4,7	13,3	0	4,0	15,5

Օգտվելով պայմանական միջինի հաշվարկման բանաձևից՝ կստանանք

$$\bar{X} = \frac{15.5}{7} + 17 = 19.214$$

հազ. տ

Այն դեպքում, երբ համակցությունը արտահայտված է եռանիշ, քառանիշ կամ հնգանիշ թվերով, միջինի հաշվարկման համար նպատակահարմար է օգտվել պայմանական միջին արժեքից: Որպես այդպիսին կարելի է ընտրել համակցության ցանկացած թիվ՝ բացառելով եզրային արժեքները:

Պայմանական միջինի օգտագործումը հեշտացնում է միջին թվաբանականի հաշվարկը՝ եռանիշ, քառանիշ, հնգանիշ թվերը դարձնելով միանիշ, երկանիշ և այլն, որոնց հետ գործողություններ կատարելն ավելի դյուրին է:

Միջակայքային բաշխման շարքի պարագայում միջին թվաբանականը կարելի է որոշել մոմենտների եղանակով, հետևյալ բանաձևով:

$$\bar{X} = \frac{\sum_{i=1}^{n} (\frac{X_i' - a}{K}) f_i}{\sum f_i} \cdot K + a \qquad (3)$$

որտեղ Xi միջակայքերի միջին արժեքն է, a-ն պայմանական միջինն է, տեսականորեն ընտրվում է այն թիվը, որի հաճախականությունը ամենամեծն է, K–ն միջակայքի լայնությունն է:

Աղյուսակ 2. Մոմենտների եղանակով միջին արժեքի հաշվարկը

Ավանդներ X_i	**Ավանդատուների թիվը fi**	**Կենտրոնի արժեքը** X_i'	$X_i' - a$	$\frac{X_i' - a}{K}$	$(\frac{X_i' - a}{K}) f_i$
1	2	3	4	5	6
10-14	5	12	-16	-4	-20
14-18	10	16	-12	-3	-30
18-22	15	20	-8	-2	-30
22-26	18	24	-4	-1	-18
26-30	21	28	0	0	0
30-34	14	32	4	1	14
34-38	7	36	8	2	14
38-42	6	40	12	3	18
42-46	4	44	16	4	16
Ընդամենը	100	-	-	-	-36

Լուծման ալգորիթմը հետևյալն է.
որոշում ենք միջակայքի կենտրոնի արժեքները ',որը հավասար է միջակայքի ստորին և վերին սահմանների կիսագումարին $X' = \frac{X_1 + X_2}{2}$ (սյունակ 3):

Ընտրում ենք պայմանական միջինը a=28 և միջակայքի լայնությունը K=4

Ստացված արժեքները տեղադրելով մոմենտների եղանակով հաշվարկման բանաձևի մեջ ստանում ենք 26, 56-հազար դրամ:

Այսպիսով, մեկ ամսվա ընթացքում բանկ դրվող ավանդների միջին արժեքը կազմում է 26.56 հազ. դրամ:

Նույն արդյունքը կստանանք եթե հաշվարկը կատարենք կշռված միջինով:

$$\overline{X} = \frac{x_1 f_1 + x_2 f_2 + \ldots x_n f_n}{f_1 + f_2 + f_3 + \ldots f_n} = \frac{\sum_{i=1}^{n} x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i} = 26.56 \qquad (4)$$



	A	B	C
1	Ավանդատուների թիվը fi	Կենտրոնի արժեքը Xi	
2			
3			XI*fI
4	5	12	60
5	10	16	160
6	15	20	300
7	18	24	432
8	21	28	588
9	14	32	448
10	7	36	252
11	6	40	240
12	4	44	176
13	100		2656
14			

Այսպիսով, կատարված հաշվարկները փաստում են, որ տարբեր միջին մեծությունների հաշվարկման արդյունքները ստացվում են նույնը, սակայն բանկային ոլորտի վերլուծություններում նպատակահարմար է օգտվել պայմանական միջինի մոմենտների բանաձևից:

Կրթական ոլորտում բուհական ընդունելության միջին գնահատականը հաշվարկում են կշռված միջինով, օգտվելով քննական գնահատականի միջակայքի կենտրոնից և քննությանը մասնակցած ուսանողների թվաքանակից:

Օրինակ՝ մաթեմատիկայի միասնական քննությանը մասնակցած 1000 ուսանողների գնահատականները ներկայացված են աղյուսակում 3-ում

Աղյուսակ 3. Մաթեմատիկայի միասնական քննության արդյունքները 2021թ. [3]

Ուսանողների թիվ fi	Գնահատական Xi X_1, X_2	Գնահատականի միջակայքի կենտրոն՝ $X' = \frac{X_1 + X_2}{2}$

100	8-10	9
300	10-12	11
320	12-14	13
140	14-16	15
120	16-18	17
20	18-20	19

$$\overline{X} = \frac{x_1 f_1 + x_2 f_2 + \ldots x_n f_n}{f_1 + f_2 + f_3 + \ldots f_n} = \frac{\sum_{i=1}^{n} x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i}$$

Հաշվարկի արդյունքնում կստացվի



Միջին գնահատական - 12, 88

Վիճակագրական միջինները շատ կիրառական են սոցիալ-տնտեսական, այդ թվում նաև կրթական ոլորտի վերլուծական հաշվարկներում:

Գրականություն

1. Ա. Պետրոսյան, Վիճակագրության տեսություն /ուս. ձեռնարկ/, Եր., 2005
2. Կ. Հակոբյան, Վիճակագրության տեսություն /ուս. ձեռնարկ/, Եր., Եվրասիա, 2004թ.

3. https://www.usanogh.am/krtutyun/miasnakan-qnnutyun-matematika-gtk-test-patasxan-dimord/
4. Մ. Ֆահրադյան, Կ. Գալստյան Ժողովրդագրական խնդիրների ժողովածու, Եր., 1998

ПРИМЕНЕНИЕ УСЛОВНОЙ СРЕДНЕЙ В СТАТИСТИЧЕСКОМ АНАЛИЗЕ

Армине Мачкалян
Ереванский университет Айбусак

В практике обработки статистических материалов в экономических исследованиях возникают проблемы, для решения которых требуются различные средние значения. Математическая статистика извлекает из среднего ранга разные средние значения. В статистической практике часто используют среднее арифметическое, средневзвешенное, условное среднее и т. д. В случае, если комбинация выражается трехзначными, четырехзначными или пятизначными числами, для расчета среднего желательно использовать условное среднее значение. Использование условного среднего упрощает вычисление среднего арифметического за счет превращения трехзначных, четырехзначных, пятизначных чисел в однозначные, двузначные и т. д., с которыми легче производить операции.

Ключевые слова: средневзвешенное, условное среднее, статистические данные, комбинация

APPLICATION OF CONDITIONAL MEDIUM IN STATISTICAL ANALYSIS

Armine Machkalyan
Yerevan «Haybusak» University

In the practice of processing statistical materials in economic research, there are problems that require different averages to solve. Mathematical statistics derive different averages from the rank mean. In statistical practice, arithmetic mean, weighted mean, conditional mean, etc. are often used. In case the combination is expressed in three-digit, four-digit or five-digit numbers, it is advisable to use the conventional average value for calculating the average. The use of the conditional mean simplifies the calculation of the arithmetic mean by turning three-digit, four-digit, five-digit numbers into one-digit, two-digit, etc., which are easier to perform operations with.

Keywords: weighted average, conditional average, statistical data, combination

DOI: 10.61484/29538181-sj.10.24-05

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

Սահականուշ Ավետիսյան

ԵՀՀ, Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է՝ 15.05.24, գրախոսված է՝ 17.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր: *Ցանկացած բիզնեսի արդյունավետ կազմակերպման, ֆինանսների գրագետ կառավարման համար կարևոր պայման է դրամական միջոցների անհրաժեշտ ծավալը, դրանց համակարգված հաշվառումը, ինչպես նաև դրամական հոսքերի հմուտ կառավարումը, ժամանակի մեջ դրանց հաշվեկշռվածության ապահովումը և, ուստի շատ կարևորվում է դրամական միջոցների հոսքերի վերահսկողությունն ու կանխատեսումը, ինչ էլ հնարավորություն է տալիս ապահովել կայունությունն ու վճարունակությունը ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններում:*

Հետազոտության նպատակն է՝ Ներկայացնել դրամական միջոցների հոսքերի վերահսկողության մոտեցումները կազմակերպության դրամական միջոցների առավել արդյունավետ օգտագործման, կառավարման և ֆինանսական կայունության վերաբերյալ որոշումներ ընդունելիս: Առաջարկված են դրամական միջոցների հոսքերի վերահսկողության կատարելագործման ուղիներ, որոնք նպաստում են կազմակերպության դրամական միջոցների արդյունավետ ֆինանսական կառավարման համար օպերատիվ կառավարչական որոշումներ իրականացնելուն:

Հիմնաբառեր՝ *դրամական միջոցների հոսքեր, դրամական միջոցների հոսքերի վերահսկողություն, վերահսկողության մեթոդներ*

Ներածություն

Դրամական միջոցների հոսքերի կառավարումն ու վերահսկումը ֆինանսական կառավարման մի մասն է և տեղի է ունենում կազմակերպության ֆինանսական քաղաքականության շրջանակներում: Վերջինիս խնդիրը արդյունավետ ֆինանսական կառավարման համակարգ կառուցելն է, որն ապահովում է կազմակերպության նպատակների իրագործումը, կայուն աճը, ֆինանսական կայունությունը:

Յուրաքանչյուր կազմակերպության ընթացիկ ակտիվների մեջ որոշակի տեղ ունեն դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Կազմակերպությունների ֆինանսական և տնտեսական գործունեության հաջողությունը կախված է միջոցներ ստեղծելու, կենտրոնացնելու և արդյունավետ օգտագործելու կարողությունից: [1]

Կազմակերպությունների տնտեսական գործունեության ընթացքում նրանց դրամական միջոցներն անընդհատ գտնվում են շարժման մեջ՝ ձևավորելով դրամական հոսքեր: Դրանք դրամական միջոցների և դրան համարժեքների ներհոսքն ու արտահոսքն է, որոնց տարբերությանը անվանում են *զուտ դրամական հոսք* [2]:

Դրամական միջոցների փոխանցումը դրամարկղից հաշվարկային հաշիվ կամ նման կարգի ներքին փոխադրումները չեն դիտվում որպես դրամական հոսք: Դրամական հոսքի գոյացման կարևորագույն պայմանը կազմակերպության «սահմանի» հատումն է [3]:

Դրամական միջոցների մուտքա- ու ելքա-գրումների որոշ մասը անմիջականորեն ազդեցություն չի ունենում հաշվետու ժամանակի ֆինանսական արդյունքների վրա, քանի որ չի դիտվում որպես եկամուտ կամ ծախս (ապագայում ստացվելիք եկամուտներ, կատարվելիք ծախսեր, կանխավճարի ստացում և տրամադրում) կամ ընդհանրապես չի դիտվում որպես եկամուտ և ծախս (վարկերի ստացում և մարում, հիմնական միջոցների ձեռքբերում, ֆինանսական ներդրումներ և այլն): Եվ վերջապես, կան ծախսեր, օրինակ՝ ամորտիզացիոն մասհանումները, որոնք ազդում են ֆինանսական արդյունքների վրա, բայց չեն հանդիսանում դրամական միջոցների շարժ: Հետևաբար, անհրաժեշտ է վերլուծել ոչ միայն կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքները, այլ նաև դրամական արդյունքները, որոնք արտահայտվում են դիտարկվող ժամանակահատվածում դրամական միջոցների մնացորդի փոփոխությամբ և կառուցվածքով [4]:

Կազմակերպության դրամական հոսքերի մասին տեղեկատվությունն օգտակար է այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տրամադրում է հիմքեր՝ գնահատելու կազմակերպության՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ստեղծելու կարողությունը և այդ դրամական հոսքերի օգտագործման նրանց պահանջները: Օգտագործողների կողմից տնտեսական որոշումների կայացումը պահանջում է գնահատել դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ստեղծելու կազմակերպության կարողությունը, ինչպես նաև դրանց ստեղծման ժամանակը և որոշակիությունը[5]:

Դրամական միջոցների մուտքերի և ելքերի մասին տեղեկատվությունը՝ դասակարգված ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունների, կարելի է ստանալ կազմակերպության ֆինանսական հաշվետվության փաթեթի կարևոր բաղադրիչ հանդիսացող դրամական միջոցների հոսքերից:

Կազմակերպության դրամական միջոցների հոսքերի հաշվետվության օգտագործումը ներկայացնենք հետևյալ ձևաչափով՝

Գծապատկեր 1. Դրամական միջոցների հոսքերի հաշվեկշռվության օգտագործումը
** Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից*



Հետազոտական արդյունքներ

Դրամական միջոցների հոսքերի վերահսկողությունը կարևոր է, քանի որ դրամական միջոցների բացակայությունը նշանակում է հետաձգել շատ, նույնիսկ հրատապ, վճարումներ, գնումներ, որն էլ կարող է ընկերությանը տանել դեպի ֆինանսավորման ծախսատար տարբերակներ՝ ավելացնելով պարտքի սպասարկման ծախսերը:

Դրամական միջոցների հոսքերի վերակսկողությունը ներառում է՝ [6]

- Կազմակերպության դրամական միջոցների մնացորդների ամենօրյա գործառնական հսկողություն
- Կազմակերպության դրամական միջոցների նպատակային օգտագործման վերահսկողություն
- Կազմակերպության դրամական միջոցների սահմանված կարգերով, պայմաններով ճիշտ և ժամանակին վճարումների նկատմամբ

Դրամական միջոցների հոսքերի վերահսկումը ֆինանսական կառավարման կարևորագույն գործողություններից է և ներառում է դրամական միջոցների շրջանառության ժամանակի (ֆինանսական ցիկլ) հաշվարկ, դրամական միջոցների հոսքերի վերլուծություն և կանխատեսում, միջոցների օպտիմալ մակարդակի որոշում, միջոցների բյուջետավորում և այլն:

Դրամական միջոցների հոսքերի վերահսկողության բացակայությունը կարող է հանգեցնել կազմակերպության սնանկացման: Սակայն, կանխիկի անբավարարությունը կարող է լինել ժամանակավոր և երկարաժամկետ

ազդեցություն չունենա ընկերության երկարաժամկետ շահութաբերության կամ կենսունակության վրա: Ամեն դեպքում, դրամական միջոցների հոսքերի նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը միանշանակ է, քանի որ դրամական միջոցների բացակայության դեպքում կազմակերպությունը կբախվի լուրջ դժվարությունների: Ուստի, դրամական միջոցների հոսքերի կարևորությունն ու դերը պահանջում են դրամական միջոցների հոսքերի նկատմամբ վերահսկողության գործընթացի արդյունավետության բարձրացում, ինչ էլ կնպաստի ֆինանսական հավասարակշվածության ապահովմանը:

Դրամական միջոցների հոսքերի վերահսկողությունը ունի այն իրականացնելու համար իր սկզբունքները, մեթոդները: Դրամական միջոցների հոսքերի վերահսկողության մեթոդներից մեկը ընթացիկ դրամական հոսքերի բյուջեի մշակումն է որպես ապագա ժամանակաշրջանի համար միջոցների ստացման և ծախսման պլան, որը կազմակերպությանը տալիս է հետևյալ առավելությունները.

- ռազմավարական և մարտավարական պլանավորում, որը թույլ է տալիս ավելի մանրամասն վերահսկել գործընթացները,
- կատարողականի արդյունքների օբյեկտիվ գնահատում,
- տարբեր ստորաբաժանումների գործունեության համակարգում,
- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում՝ հաշվի առնելու գործունեության արդյունավետության բարձրացման և ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խթանման խնդիրները:

Պատշաճ կազմակերպված բյուջետավորման համակարգը նվազեցնում է ծախսերի մակարդակը 10-15%-ով, ապահովում է ընկերության ընթացիկ հաշվին փողի մշտական առկայությունը, համակարգում է ծախսերը, ապահովում է, որ կազմակերպության ընթացիկ գործունեությունը համապատասխանի իր կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներին, նույնականացնում և օգտագործում է կազմակերպության ազատ կապիտալը, պահպանում է հավասարակշռությունը շահութաբերության և իրացվելիության միջև: [7]

Դրամական միջոցների հոսքերի վերահսկողության մեթոդներից մեկն էլ իր գործնական կիրառումն է գտնում ներքին աուդիտի շրջանակում: Ներքին աուդիտը պետք է դիտարկել որպես գնահատման գործունեություն, որը ստեղծվում է կազմակերպության ներսում կամ տրամադրվում է կազմակերպությանը՝ որպես ծառայություն: Այն կարող է ներառել հետևյալ գործառույթները՝

- Ֆինանսական հոսքերի մոնիթորինգ
- Ֆինանսական և գործառնական տեղեկատվության ուսումնասիրություն
- Ֆինանսական ռիսկերի կանխարգելում
- Տնտեսող, արդյունավետ գործառնությունների վերհանում
- Ֆինանսական ներքին հաշվետվողականության կազմակերպում

- Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության հավաստում

Նշված գործառույթների շրջանակում անհրաժեշտ է, որ կազմակերպությունը իրականացնի որոշ միջոցառումներ, օրինակ, խրախուսի պարտապանների արագ կատարվող վճարումները՝ նրանց տրամադրելով արտոնյալ պայմաններ, սահմանի ընթացիկ գործունեության մեջ չօգտագործվող գույքի ցանկը դրա հետագա վաճառքի կամ վարձակալության նպատակով, վերահսկի կրեդիտորական պարտքերի կարգավիճակը և դրամական միջոցների չափը՝ մատակարարներին առաջարկելով վճարման տարբեր սխեմաներ, որոնք թույլ են տալիս ժամանակին և առանց հիմնական բիզնեսի համար վտանգի մարել պարտքերը, ավելացնել սեփական կապիտալը՝ առանց ֆինանսավորման արտաքին աղբյուրների վրա հենվելու (օրինակ՝ կանոնադրական կապիտալի ավելացում՝ ընդունելով նոր մասնակիցների), վերլուծել վաճառվող ապրանքների գները, ծավալները, շուկան, գտնել լուծում, որը կօգնի ավելացնել լրացուցիչ դրամական հոսքը՝ առանց արտադրության ծավալների մեծացման, ստեղծել մեթոդաբանություն, որը գնահատում է գործունեության և իրադարձությունների ազդեցությունը դրամական միջոցների հոսքերի վրա, կազմել միջոցների ստացման և ծախսման պլան՝ ժամանակին կանխատեսելու տարբեր տեսակի գործունեության համար համախառն և զուտ դրամական հոսքերը և ապահովելու վճարունակությունը հետագա պլանավորման ժամանակաշրջաններում:

Եզրակացություն

Այսպիսով, դրամական միջոցների հոսքերի վերահսկման կատարելագործումը նպատակահարմար է իրագործել հետևյալ ուղղություններով.

Առաջին, ներդնել բյուջետավորման համակարգ, որպես ապագա ժամանակահատվածի համար միջոցների ստացման և ծախսման պլան, որը հնարավորություն կտա կազմակերպության դրամական միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը և կհանգեցնի ֆինանսական կայունության ապահովմանը:

Երկրորդ, ստեղծել ներքին վերահսկողական այնպիսի համակարգ, որը կապահովի կապը դրամական միջոցների արդյունավետ օգտագործմանը առնչվող օղակների միջև, կներկայացնի ֆինանսական կառավարման առանցքային խնդիրները և հնարավորություն ստեղծի իրականացնելու կառավարչական հիմնավոր որոշումներ դրամական միջոցների արդյունավետ կառավարման, բացահայտված խնդիրների լուծման հիմնավորված և արդյունավետ ուղիների հայտնաբերման ուղղությամբ:

Գրականություն

1. Soboleva, Y.P., Matveev, S.A. Ilminskaya, I.S. Efimenko, I.V., & Rezvyakova, L.V. Mazur (2018) Monitoring of Businesses Operations with Cash Flow Analysis. International Journal of Civil Engineering and Technology, 9(11): pp. 2034–2044.
2. Սարգսյան Ա., Առաքելյան Կ., Տնտեսական գործունեության վերլուծություն, Երևան, <<Տնտեսագետ>>, 2005, էջ 162:
3. Ռ. Ա. Սահակյան, Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ, Երևան, «Տնտեսագետ», 2006, էջ 40
4. Шеремет А. Д.,Комплексный анализ хозяйственной деятельности, Москва 2006,стр. 326
5. ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» https://anaudit.am/sites/default/files/IAS%2007-Arm.pdf
6. А.А.Адаменко, О.В. Жердева, И.А. Вихренко. Понятие и методы контроля за движением денежных потоков коммерческой организации.// Международный журнал-"Естественно-гуманитарные исследования" № 34(2), 2021, -261с
7. Щиборщ, К.В. Бюджетирование деятельности промышленных предприятий России [Текст]: учебное пособие / К.В. Щиборщ. – М.: Издательство «Дело и Сервис», 2013. – 592 с

CASH FLOW CONTROL

Sahakanush Avetisyan

Ереванский университет Айбусак

An important condition for the effective organization of any business, the competent management of finances is the necessary volume of funds, their systematic accounting, as well as the skillful management of cash flows, ensuring their balance in time, and therefore the control and forecasting of cash flows are very important, whatever makes it possible to ensure stability and solvency in current and future periods.

Management and control of cash flows are a part of financial management and take place within the framework of the organization's financial policy, and the latter's task is to build an effective financial management system that ensures the achievement of the organization's goals, sustainable growth, and financial stability.

Keywords: cash flows, cash flow control, control methods

КОНТРОЛЬ ДЕНЕЖНЫХ ПОТОКОВ

Саакануш Аветисян
Yerevan «Haybusak» University

Важным условием эффективной организации любого бизнеса, грамотного управления финансами является необходимый объем денежных средств, их систематический учет, а также умелое управление денежными потоками, обеспечение их сбалансированность во времени, и поэтому, контроль и прогнозирование денежными потоками очень важны, и это позволяет обеспечить стабильность и платежеспособность в текущем и в будущем периодах.

Управление и контроль денежными потоками являются частью финансового менеджмента и происходят в рамках финансовой политики организации, а задачей последней является построение эффективной системы финансового менеджмента, обеспечивающей достижение целей организации, устойчивый рост и финансовое благополучие и стабильность.

Ключевые слова: денежные потоки, контроль денежных потоков, методы контроля

DOI:10.61484/29538181-sj.10.24-06

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ (2014-2023 թթ.)

Աննա Հարությունյան, Սոնա Հովհաննիսյան

ԵՀՀ տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է՝ 12.04.2024, գրախոսված է՝ 24.05, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Երկրի համագործակցումը այլ երկների հետ արտացոլվում է նրա վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը հանդիսանում է երկրի արտաքին տնտեսական կապերը արտահայտող առանցքային հասկացություններից մեկը: Այն համակարգում և դրանով իսկ հնարավորություն է ընձեռում վերլուծել երկրի փոխհարաբերությունները արտաքին աշխարհի հետ:*

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ վճարային հաշվեկշռի կառուցվածքը, միտումները վերջին տաս տարիների ընթացքում: Հետազոտության արդյունքում առաջարկվել են ՀՀ վճարային հաշվեկշռի կարգավորման եղանակներ, որոնք կնպաստեն հնարավորինս բացասական հաշվեմնացորդից անցում կատարել դրական հաշվեմնացորդի:

Բանալի բառեր*: վճարային հաշվեկշիռ, առևտրային հաշվեկշիռ, կապիտալի հաշիվ, ֆինանսական հաշիվ, հաշվեկշռի հաշվեմնացորդ*

Ներածություն: Ժամանակակից աշխարհում գրեթե հնարավոր չէ պատկերացնել մի իրավիճակ, որում երկրները չեն համագործակցում միմյանց հետ: Աշխատանքի միջազգային բաժանման հետևանքով խորացավ երկրների մասնագիտացման մակարդակը, որի հետևանքով անխուսափելի դարձավ երկների միջև համագործակցությունը: Համագործակցությունը չի վերաբերում միայն ապրանքների և ծառայությունների արտահանմանը և ներմուծմանը, այն ներառում է նաև դրամական ներդրումները, կապիտալի արտահանումը և ներմուծումը և այլն: Այս ամենի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի երկրի վճարային հաշվեկշիռը: Ինչպես յուրաքանչյուր կազմակերպության համար կարևոր նշանակություն ունի հաշվապահական հաշվեկշիռը, այնպես էլ յուրաքանչյուր երկրի համար՝ վճարային հաշվեկշիռը մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում: Այն ամբողջովին ներկայացնում է երկրի ազգային տնտեսության վիճակը և արտաքին փոխհարաբերությունները այլ երկների հետ որոշակի ժամանակահատվածում: Վճարային հաշվեկշիռը փաստաթուղթ է, որը արտացոլում է երկրի դրամական մուտքերն ու ելքերը, կապված արտաքին տնտեսական գործունեության հետ, ինչպիսիք են արտադրության գործոնները, ապրանքներն ու ծառայությունները, դրամական փոխանցումները, կապիտալի հոսքերը: Այն հնարավորություն է ընձեռում հասկանալ երկրի արտաքին առևտրի զարգացման միտումները տվյալ տարում: Փաստաթուղթն ունի բարդ կառուցվածք, և նրա կազմման գործընթացները

յուրաքանչյուր երկրի կողմից իրականացվում են հիմք ընդունելով Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ուղեցույցը» [1]: Յուրաքանչյուր երկրի կողմից մշակվում են համապատասխան մեթոդաբանություն վճարային հաշ-վեկշիռը վարելու համար: ՀՀ-ում վճարային հաշվեկշռի վիճակագրությունը իրականացնում է ՀՀ ԿԲ-ը վճարահաշվարկային համակարգի միջոցով [2]: ՀՀ վճարային հաշվեկշիռը որպես վիճակագրական հաշվետվություն, բաղկացած է հետևյալ բաժիններից [3]՝

Ընթացիկ հաշիվ. այն արտացոլում է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը: Այն իր մեջ ներառում է ՀՀ առևտրային հաշվեկշիռը:

Կապիտալի և ֆինանսական հաշիվները. այս հաշիվներում արտացոլվում են երկրի արտաքին տնտեսական քաղաքականության հետևանքով տեղի ունեցող կապիտալի ներհոսքը և արտահոսքը:

Սխալներ և բացթողումներ, որոնք կարող են ի հայտ գալ և բացահայտվել հաշվարկային գործառույթներ իրականացնելիս:

Վերլուծություն

Վճարային հաշվեկշիռը յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական գործունեության մասին լիարժեք տեղեկատվություն տվող փաստաթուղթ է: Հաշվեկշռում ներառվում են յուրաքանչյուր երկրի այլ երկրների հետ իրակացվող տնտեսական գործարքների արդյունքները: Վճարային հաշվեկշռի միջոցով բացահայտվում են տվյալ երկրի մասնագիտացման մակարդակը, արտաքին տնտեսական հարաբերությունների մակարդակը, արտահանման և ներմուծման ծավալները և կառուցվածքը, այլ երկրների հետ ունեցած ֆինանսատնտեսական հարաբերությունների մակարդակը:

ՈՒսումնասիրելով երկրի վճարային հաշվեկշիռը՝ հստակ կարելի է պատկերացում կազմել, թե ինչպիսի զարգացման կամ նվազման միտումներ կան միջազգային առևտրի, ֆինանսական և կապիտալ հոսքերի ոլորտներում: Այն մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման կարևորագույն գործիքներից մեկն է: Յուրաքանչյուր պետության համար կարևոր են ոչ միայն վճարային հաշվեկշռի արդյունքներն ու բաղադրիչները, այլև, թե ինչպես են ձևավորվում վճարային հաշվեկշռում առկա բաղադրիչները: Վճարա-յին հաշվեկշռի հաշվեմնացորդը բնութագրում է երկրի բոլոր ռեսուրսների օգտագործումից ստացված արդյունքի հանրագումարը՝ իր 4 տնտեսական կտրվածքով՝

1.ընթացիկ հաշիվ,
2.զուտ ֆինանսական հաշիվ,
3.կապիտալի հաշիվ,
4.զուտ սխալներ և բացթողումներ:

Ուսումնասիրելով ՀՀ վճարային հաշվեկշիռը 2014-2023թթ.՝ կարելի է հստակ նշել, որ այն ներկայացված տարիների ընթացքում ցուցաբերել է ավելի շատ բացասական սալդո: Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդները 2014-2023թթ. համար արտահայտված մլն ԱՄՆ դոլարով (գրաֆիկական ներկայացմամբ տե՛ս նկարը):

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշռի կառուցվածքը 2014-2023 թթ. (մլն ԱՄՆ դոլարով): Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Անվանում	***2014***	***2015***	***2016***	***2017***	***2018***	***2019***	***2020***	***2021***	***2022***	***2023***
Ընթացիկ հաշվի մնացորդ	-899,8	-280,5	-100,9	-145,3	-900,5	-961,1	-505,4	-483	151	-510,1
Զուտ կապիտալի հաշիվ	70,4	65,3	34,9	55,8	75,0	66,3	179,4	63,5	76,5	48,4
Զուտ ֆինանսա-կան հաշիվ	-837,4	-345,9	-415,8	-530,2	-689,8	-463	-691	-371,6	248,3	-375,7
Զուտ սխալներ և բացթո-ղումներ	-8,1	-130,2	-349,8	-440,7	135,7	431,8	-365,1	47,9	20,8	86,0
Վճարային հաշվեմ-նացորդ	-1674,9	-691,3	-831,6	-1060,4	-1379,6	-926	-1382,1	-743,2	496,6	-751,4

Վերլուծելով ներկայացված տվյալները կարելի է հստակ նշել, որ 2014-2023թթ. ՀՀ վճարային մնացորդը միայն 2022թ.-ին է ունեցել դրական հաշվեմնացորդ՝ ի հաշիվ առևտրային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդի և հաշվեկշռի մնացած հոդվածների [4]:

Գծապատկեր 1. ՀՀ վճարային հաշվեկշռի դինամիկան 2014-2023 թթ. (մլն ԱՄՆ դոլարով):



Այսինքն 10 տարվա ընթացքում ՀՀ-ում միայն 2022թ-ին է ապրանքների և ծառայությունների ներմուծման մակարդակը զիջել արտահանման մակարդակին, իսկ զուտ ֆինանսական հաշիվները ունեցել են դրական հաշվեմնացորդ: 2023թ-ին ի տարբերություն 2022թ.-ին ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնցորդը նորից եղել է բացասական: Հաշվեկշռի պակասորդը կազմել է 751,4 մլն ԱՄՆ դոլար նախորդ տարվա 496,6 մլն դոլար հավելուրդի համեմատ:

Եզրակացություն

Որևէ երկրի վճարային հաշվեկշիռը բնութագրում է իր տնտեսական արդյունքների փոխհարաբերությունը համաշխարհային տնտեսության հետ: Այն կարևոր ցուցանիշների համակարգ է, որի միջոցով երկրի ԿԲ-ը որոշումներ է կայացնում հարկաբյուջետային, դրամավարկային, արժութային և միջազգային այլ գործարքների իրականացման գործում: Հաշվեկշիռը երկրի ֆինանսատնտեսական և արտաքին հարաբերությունների ուժեղ և թույլ կողմերը ներկայացնող ցուցանիշների համակարգ է: ՀՀ-ի դեպքում կարևոր հիմնախնդիր է վճարային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի կրճատումը, ինչը թույլ կտա նվազեցնել քաղաքական և տնտեսական արտաքին կախվածությունը:

Այսպիսով, վճարային հաշվեկշռի կարգավորման և հնարավորինս դրական հաշվեմնացորդ ապահովելու համար նպատակահարմար է՝

- Մշակել համալիր ծրագիր, որը կկրճատի առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը: Այն պետք է իրականացնել արտահանման աճի և ներմուծման կրճատման հաշվին:
- Արտահանման ծավալների աճի համար անհրաժեշտ է արտահանվող ճյուղերի համար մշակել և ներդնել բարենպաստ հարկային և մաքսային քաղաքականություն:
- Ներմուծման մակարդակի կրճատմանը հասնել պետական հովանավորչական քաղաքականության միջոցով նեքին արտադրության զարգացմամբ: Ստեղծել նպաստավոր պայմաններ տեղական արտադրության նոր ֆիրմաներ հիմնելու համար:
- Հարկային համակարգի վերանայման, արտոնությունների սահմանման միջոցով բարենպաստ պայմաններ ստեղծել օտարերկրյա ուղղակի ներդրումների, բարձրագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և կապիտալի ներգրավման համար:

Գրականություն

1. Международный валютный фонд. Руководство по платежному балансу и международной инвестиционной позиции. Шестое издание. 2012 /https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf
2. ՀՀ օրենքը « Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի մասին» https://www.irtek.am/views/act.aspx?aid=150062
3. ՀՀ վճարային հաշվեկշիռը: Ամենամյա հաշվետվություն: https://www.cba.am/stat/stat_data_arm/PRESS%20RELEASE-2023-Q4.pdf
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազա, վճարային հաշվեկշիռ www.armstat.am,
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազա, առևտրային հաշվեկշիռ www.armstat.am,
6. Միջազգային տնտեսագիտություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան 2018, էջ 292-295

THE PAYMENT BALANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

Anna Harutyunyan, Sona Hovhannisyan

Yerevan Haybusak University, Institute of Economics, Management and Informatics

Summary. Every country is part of the global economy. It is rare to find countries that are isolated and do not cooperate with other countries. It is difficult for them to create a healthy economy isolated from the global economic system. Foreign economic relations between countries were initiated through trade. Countries' cooperation with other countries is reflected in the country's balance of payments. The balance of payments is one of the key concepts expressing the country's external economic relations. It coordinates and thusallows the country to analyze itss relations with the outside world.

Keywords: Balance of payments, the balance of trade, capital account, financial account, saldo of balance

ПЛАТЕЖНЫЙ БАЛАНС РА

Анна Арутюняан, Сона Оганнисян

Ереванский университет «Айбусак», Институт экономики, менеджмента и информатики

Резюме. Каждая страна является частью глобальной экономики. Редко можно найти страны, которые изолированы и не сотрудничают с другими странами. Им сложно создать здоровую экономику, изолированную от глобальной экономической системы. Внешнеэкономические связи между странами были инициированы посредством торговли. Сотрудничество стран с другими странами отражается на платежном балансе страны. Платежный баланс является одним из ключевых понятий, выражающих внешнеэкономические связи страны. Он координирует и тем самым дает возможность проанализировать отношения страны с внешним миром.

Ключевые слова: Платежный баланс, торговый баланс, счет операций с капиталом, финансовый счет, сальдо баланса

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.61484/29538181-sj.10.24-10

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ-ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

[1,2]Նաիրա Բալայան

[1]Երևանի Հայբուսակ համալսարան, [2]ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ

Մուտքագրված է՝ 30.0522, գրախոսված է՝ 12.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Հոդվածը նվիրված է սփյուռքահայ գրող Նշան Պեշիկթաշլյանի «Թատերական դեմքեր» ստեղծագործությանը, որը 1968 թ արժանացել է Գեորգ Միլետինեցու գրական մրցանակին, տպագրվել ու դարձել է հայ թատրոնի մասին եղած լավագույն ուսումնասիրություններից մեկը: Հոդվածում գրականագիտության մեթոդաբանությամբ փորձ է արվում պարզելու մինչ այս երբևէ համակողմանիորեն չուսումնասիրված գրքի գեղարվեստական, պատմավավերագրական արժեքը հայկական մշակույթի և ազգային ինքնության համատեքստում: Դա պարզելու նպատակով ուսումնասիրվել են ինչպես բուն նյութը, այնպես էլ այս թեմային առնչակից, նույն հեղինակի՝ թատրոնի մասին այլ հոդվածներ, որոնք լույս են սփռում հեղինակի սկզբունքների, ընդհանրապես՝ թատրոնի շուրջ ձևավորված ողջ հայեցակարգի վրա: Երեսունութ դիմանկարից կազմված, հազարից անց աղբյուր պարունակող «Թատերական դեմքեր» ստվար ուսումնասիրությունը յուրօրինակ փաստավավերագրություն է, որը հեղինակը կառուցել է ոչ միայն իրական փաստերի, հուշերի և այլ ուսումնասիրությունների հիման վրա, այլ նաև գեղարվեստական շարադրանքով: Հետազոտության ընթացքում պարզել ենք, որ հայ թատերական մի շարք գործիչների դիմանկարները կերտելիս Պեշիկթաշլյանը առաջնորդվել է ազգայնության առաջնահերթությամբ, ընդգծել է տվյալ հերոսի՝ թատերական արվեստում ունեցած ձեռքբերումները ազգային-մշակութաբանական ինքնության արժեքայնության համատեքստում: Հոդվածում արձանագրում ենք, որ հեղինակը թատերական գործիչների հանդեպ դրսևորել է քննախուզական, քննադատական վերաբերմունք, թեպետ շատ դեպքերում նրանց տվել է բարձրագույն գնահատականների հավակնող գեղարվեստական բնութագրումներ: Գրքի ուսումնասիրության վերջնարդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ Պեշիկթաշլյանը հետապնդել է մի քանի կարևոր նպատակ՝ ստեղծել մշակութապատմական դեպքերի ու դեմքերի մասին վավերագրական շքեղ կոթող, այն ի պահ տալ սերունդներին, և ամենակարևորը՝ ստեղծել մի հզոր կռվան՝ հայ երախտավորների հանդեպ առաջացող հպարտության միջոցով օտար եզերքում ազգային արմատները պահպանելու, ուծացման չգնալու համար:*

Հիմնաբառեր. *Ն. Պեշիկթաշլյան, թատրոն, դիմանկար, իրական փաստեր, ժամանակագրություն, հայ ինքնություն և մշակույթ:*

Ներածություն

Սփյուռքահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշլյանի[1] գրական ժառանգությունը բազմազան է ու հարուստ. նա գրել է չափածո և արձակ բանաստեղծություններ, պոեմներ, առակներ, մանրապատումներ, նորավեպեր, պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, թատերգություններ, դիմանկարներ, թատերագիտական ուսումնասիրություններ: Ն. Պեշիկթաշլյանի հետաքրքրությունների շրջանակում մեծ տեղ է գրավել թատրոնը: Նա ոչ միայն գրել է պիեսներ՝ թատրոնում բեմադրելու համար, այլև հանդես է եկել դերասանական խաղով և «թատրոնի փորձառութեան մը տէր եղած է»[1, 683]:

Պեշիկթաշլյանը հանդես է եկել նաև թատրոնին վերաբերող ուշագրավ գիտահանրամատչելի հոդվածներով: Հատկապես նշելի են «Հայրենիք» պարբերականում տպված «Խաղ ու խնջոյք քրիստոնէութեան առաջի դարուն» (1953, թիվ 12388), «Խաղերը ազատներուն դահլիճներուն մէջ» (1953, թիվ 12395), «Պայքար թատրոնին դէմ» (1953, թիվ 12403), «Միջնադարեան հայ թատրոնը», «Միջնադարեան հայ թատրոնին վերջալոյսը» (1953, թիվ 12408) հոդվածները և այլն, որոնցում նա անդրադարձել է վաղ միջնադարյան հայկական թատրոնի ձևերին՝ ներկայացնելով իր դատողությունները ընդդեմ թատրոնը մերժող վաղ քրիստոնեական հայեցակետերին [2]: Թատրոնի դերը Պեշիկթաշլյանը մեծագույն համարումով հավասարեցնում է ժողովրդի ապրելու պայմանին «Իր մէջ խանդավառութիւն ունեցող ժողովուրդ մը չէր կրնար ապրիլ առանց թատրոնի: Քանզի թատրոնը հաւաքականութեան մը կենսունակութեան մեծագոյն նշանն է: Անթատրոն գոյութիւն մը հաւասար է մեռեալ վիճակի» [3]: Այս առումով հոդվածներում գրողը եկեղեցին դիտարկում է թատրոնին հակընդդեմ՝ գտնելով, որ վաղ և ուշ միջնադարյան եկեղեցին, բարձրաստիճան հոգևորականությունը ոչ միայն խանգարել են թատրոնի զարգացմանը Հայաստանում, այլև արգելել կամ սաստիկ պայքարել են նրա դեմ [4]:

Թատրոնի հանդեպ գրող-հրապարակախոս - վավերագրողի խանդաղատալից վերաբերմունքը լավագույնս ի հայտ է գալիս նրա կոթողային աշխատանքում՝ «Թատերական դեմքեր» ստվար գրքում, որտեղ ամփոփված են ժամանակի լավագույն թատերական դեմքերի գրական դիմանկարները: Եթե ժամանակին Ն. Պեշիկթաշլյանի ստեղծագործություններին հայ գրականագիտության պատմության մեջ եղել են անդրադարձներ, տարաբնույթ

1 Ն. Պեշիկթաշլյանը ծնվել է Կ. Պոլսում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղում, սակայն Զմյուռնիայի աղետից հետո՝ 1922 թ մշտապես տեղափոխվել է Փարիզ, որտեղ դասավանդել է հայերեն և իրեն ամբողջովին նվիրել գրականությանը: Հինգ տասնամյակից ավել նա գրել, հրատարակել է բազմաթիվ ստեղծագործություններ, աշխատակցել տարբեր պարբերականների ու խմբագրել սփյուռքահայ զանազան հանդեսներ՝ «Ազատ օր» (Աթենք), «Ազդակ», «Ակոս», «Բագին», «Սփիւռք» (Բեյրութ), «Հայրենիք» ամսագիր, «Հայրենիք» օրաթերթ (Բոստոն), «Ալիք» (Թեհրան), «Ճակատամարտ», «Մարմարա», «Շանթ» (Կ. Պոլիս), «Անահիտ», «Անդաստան», «Արևմուտք», «Բժիշկ», «Զուարթնոց», «Մենք», «Յառաջ» (Փարիզ), «Ասպարեզ» (Ֆրեզնո) և այլն:

գնահատումներ, ապա նոր ժամանակում նրա գործերը, հատկապես կոթողային «Թատերական դեմքեր» աշխատություն-գիրքը քիչ են ուսումնասիրված: Հոդվածի նպատակն է լրացնելու այդ բացը, պարզելու այդ գրքի իմացաբանական շերտերը և հեղինակի՝ հայկական մշակույթի և ազգային ինքնության համատեքստում թատերական գործիչներին համապարփակորեն, գեղարվեստավավերագրական ձևով ներկայացնելու հայեցակետտերը: Սույն հետազոտությունը հավակնում է լինելու առաջինը Ն. Պեշիկթաշլյանի «Թատերական դեմքեր» գրքի գրականագիտական ուսումնասիրության առումով, ինչը նաև պայմանավորում է հոդվածի արդիականությունը:

* * *

Ընդհանրապես՝ Պեշիկթաշլյանի գրական հարուստ ու բազմաժանր ժառանգության մեջ հիմնորոշ նշանակություն ունի **գրական դիմանկար**ի ժանրը. նա ստեղծել է մոտ հարյուր գրական դիմանկար, որոնք տպագրվել են և՛ մամուլում, և՛ զետեղված են տարբեր գրքերում. դիմանկարները, երբեմն դառնալով յուրատեսակ գրական պատկեր-կերպարներ, բաժանվում են 2 մեծ խմբերի՝ երգիծական[1] և կենսագրական: Պեշիկթաշլյանի դիմանկարները, որոնք ստեղծաբանված են իրական մարդկանց մասին, հուշագրական-կենսագրական բնույթ ունենալով հանդերձ, հաճախ ձեռք են բերում անհատական տարեգրության արժեք. սրանցում դրսևորվում են հեղինակի գրաքննադատական, հրապարակախոսական, ակնարկային, հուշագրական հայեցակետերը, երբեմն բանաստեղծական, քնարական մոտեցումները զուգադրվում են պատումային ընթացքին: Գրական ժանրերի պատմական զարգացման գործընթացում զանազան փոխակերպումներ ու տարբեր հատկանիշներ ստանալով՝ գրական–գեղարվեստական դիմանկարի տեսակի բնութագիրը հստակ չէ, ինչպես իրավամբ նշում են մի քանի ուսումնասիրողներ: «Գրական դիմանկարը միջժանրային երևույթ է. շատ դժվար է հստակ տարանջատել նրա սահմանները. այն կարող է հանդես գալ և՛ գեղարվեստական գրականության մեջ, և՛ ինքնորոշվել դեպի քննադատությունը՝ ելնելով նորմատիվ պահանջներից, ու ժանրային այդ անստուգության մեջ է, թերևս, նրա ինքնատիպության հիմնական հատկանիշը»[6, 18-19]:

Շուրջ քառասուն տարվա ընթացքում անդրադառնալով թատրոնի նշանավոր գործիչներին, հայ գրականության պատմության դիմակերտման լավագույն ավանդույթները պահպանելով, երբեմն կրելով ազդեցություններ և ունենալով նմանություններ՝ Ն. Պեշիկթաշլյանը ի վերջո այս մարդկանց

1 Նշան Պեշիկթաշլյանի երգիծական դիմանկարների կերպարները կամ իրական մարդիկ են՝ հայ հասարակական-քաղաքական, մշակութային գործիչներ, կամ գրական կերպարներ դարձած մարդկային առանձնահատկությունների հավաքական կրողներ կամ որևէ խմբի պատկանող մարդիկ [5, 115-129]:

դիմանկարներից 38-ը հավաքածուի տեսքով մեկտեղել է մի աշխատանքում, որը 1968 թ արժանացել է Գեորգ Միլետինեցու գրական մրցանակի և դարձել հայ թատրոնի մասին եղած լավագույն ուսումնասիրություններից մեկը: Գրքի առաջաբանում, որը շարադրված է յուրօրինակ բանաստեղծական արտահայտչականությամբ, ցուցանվում են հեղինակի ներզգայական ընկալումները մշակույթի կարևոր ոլորտի՝ թատրոնի և թատրոնի ստեղծագործողների՝ թատերագրի, բեմադրի և նկարչի գործառույթների մասին: Թատրոնը համարելով մշակույթի տարբեր ճյուղերի համակցում՝ հեղինակը այն չափազանց բարձր է դասում. «Թատրոնը, պարին ու երգին նման, բոլորովին, ինքնաբուխ արուեստ մըն է, ծնած մարդուս խորքէն ու խորհուրդէն, ենթագիտակցութենէն ու գիտակցութենէն, բնութենէն ու բնազանցութենէն, անձնականութենէն ու առհաւութենէն» [7, 7]:

«Թատերական դեմքեր» ուսումնասիրությունը ընդգրկում է բավական մեծ ժամանակաշրջան՝ շուրջ հարյուր տարի. սա թատրոնի մասին մի ողջ համայնապատկեր է, որը կառուցված է ըստ հստակ ժամանակագրության, ներկայացված են թատրոնի այն երախտավորները, որոնք սկսել են իրենց գործունեությունը 1900 թվականից առաջ, և որոնք «մենէ մեկնած են անդարձ»: Պեշիկթաշլյանը իր այս սկզբունքը խախտել է մեկ անգամ միայն տաղանդավոր դերասան Վրթանես Փափազյանի դիմանկարը վրձնելիս: Ուշագրավ է, որ այս հանգամանքը հեղինակը պարզաբանում է նրանով, որ Փափազյանի տաղանդը և իր՝ երկրպագության հասնող հիացմունքը նրա դերասանական խաղի հանդեպ արժանի են նրա դիմանկարը իր գրքում զետեղելու համար. կարևոր գործոն է նաև, ըստ Պեշիկթաշլյանի, իր՝ Փափազյանին տված խոստումը:

Գիրքը, ընդգրկելով երեսունութ դիմանկար, ունի բավական ստվար բովանդակություն. կազմված է շուրջ 1130 էջից (օրինակ՝ Պետրոս Ադամյանի դիմանկարը մոտ 220 էջ է, զետեղված են անգամ Ադամյանի բանաստեղծություններից, չնայած որ հեղինակը փաստում է, որ Ադամյանը բանաստեղծ չէ[1]) և պարունակում է նաև թատերական գործիչների կարճ կենսագրություններ և օգտագործած աղբյուրների մեծածավալ բառացանկ, որի մեջ ներառվել են այլ ուսումնասիրողների տարաբնույթ գրքեր և հոդվածներ, ինքնակենսագրականներ, հուշեր, մամուլի հրապարակումներ և ազդեր, թատերախաղերի անվանացանկեր և այլն: Պեշիկթաշլյանը այս դիմանկարներից շատերը դեռևս 1920-ականներից սկսել է տպագրել տարբեր գաղթօջախների պարբերականներում. «Ամէնուն տարեցոյց»-ում 1926 թ. տպագրած «Ալիքսանյան» (Հարություն Ալեքսանյան) [8, 413-430] և 1929 թ. «Մառի-Նուարդ»[9, 376-395] դիմանկարները հատկապես լայն արձագանք

1 Այս թեմայով Պեշիկթաշլյանը գրում է. «Բանաստեղծական հոգի մըն է միայն, եւ իր գործերէն արտագրումներ կը կատարենք, իբրեւ որ կենսագրութեան օժանդակ մասեր» [7, էջ 498]:

են ստանում և հայտնի դարձնում հեղինակին:

Հիրավի կոթողային այս ուսումնասիրությունը գրեթե կեսդարյա տքնաջան աշխատանքի արդյունքում ստեղծված դիմանկարների հսկայածավալ գիրք է, յուրօրինակ փաստավավերագրություն: Ինքը հեղինակը գրքի վերջում ներկայացնում է 1104 աղբյուր, ընդ որում՝ աղբյուրները նաև օտարալեզու են՝ հունարեն, ֆրանսերեն և թուրքերեն: Դիմանկարները ուղեկցվում են այդ աղբյուրներից լայնածավալ մեջբերումներով, որոնք դիմանկարներին հաղորդում են նաև գիտական, գիտափաստագրական բնույթ: Նման աշխատանքի առանձնահատկությունն այն է, որ հեղինակը, համակցելով տարբեր աղբյուրներից նյութեր, խստիվ պահպանում է **դեպքերի ժամանակագրությունը** և միևնույն ժամանակ թատերական գործչի կենսագրությանն անդրադառնում ամենայն մանրամասնությամբ՝ ժամանակի և սերունդների համար ստեղծելով յուրօրինակ հսկայական փաստավավերագրական շտեմարան՝ համեմելով գեղարվեստական մեծ լիցքով ու ազգային ինքնության գիտակցման զգալի պաշարով:

Անդրադառնալով օտար աղբյուրներից պարտադիր հղում կատարելուն՝ Պեշիկթաշլյանը նկատում է, որ օտար աղբյուրներում գրված վերլուծությունները, իրենց երկրից դուրս հանրաճանաչ դարձնելով թատերական գործիչներին, պատիվ են բերում ոչ միայն նրանց, այլև ողջ հայ ժողովրդին: Այսպես օրինակ՝ հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանի մասին նա գրում է. «Ադամեանով մարդիկ սկսան հետաքրքրուիլ հայերով ու հայ մշակոյթով: Հայութեան պատիւը վերելակած էր: Ժողովուրդները, փոքրերը մանաւանդ, բախտաւոր են երբ կ'ունենան իրական հանճարներ: Քանի մը հանճարեղ զաւակներ բաւական են, որ ամբողջ ժողովուրդ մը դրուի լոյսի մէջ եւ լերան կատարը, ծանօթութիւններ, հետաքրքրութիւն, յարգանք ու հիացում ստեղծուին այդ ժողովուրդին շուրջը» [7, էջ 458]:

Ի մի բերելով հայի հարափոփոխ ինքնության[1] գեղակերտման դրույթները ընդհանուր հղացքի ներքո՝ նա առանձնահատուկ է դիմանկարում իր յուրաքանչյուր հերոսին՝ պայմանավորված մարդկային ու դերային պարտադրումներով, դերասանի արժեհամակարգով ու հայեցակարգով: Յուրաքանչյուր դիմանկար կերտելիս Պեշիկթաշլյանը մարդկային որակների կարևորության կողքին ընդգծում է դիմանկարի հերոսի՝ ազգի համար կարևորությունը: Թատրոնի ու նրա երախտավորների հանդեպ ակնածանքն ու հարգանքը Պեշիկթաշլյանը հավասարազոր է դիտարկում հայ մշակույթի հանդեպ գնահատականներին և գտնում, որ թատրոնի մշակները իրենցով մեծ բարձունքի հասցրին հայկական մշակույթը:

«Անգամ մը եւս, նոյնիսկ երի՛ցս, օրհնեա՛լ ըլլան մեր բեմին բոլոր փառաւոր ու փոքր մշակները, որոնք իրենց հերոսի հոգիին մէջ ու մարտիրոսի մարմնոյն

1 «Հայ ազգի ինքնությունը ապրիորի անփոփոխ չէ, այն անցել է պատմական զարգացման երկար և ինքնօրինակ ճանապարհ»,- գտնում է Օ. Սարգսյանը[10, 31]:

վրայ՝ կրեցին հայ թատրոնը, հրաշագործ խաչի մը պէս զայն բարձրացնելով այնքան վեր, որուն երբեք չհասան մեզի հարեւան բազմաթիւ ժողովուրդներ, հակառակ որ անոնցմէ ոմանք պետական ազգ էին» [7, 15]:

Միով բանիվ՝ դիմանկարների բազմակողմանի քննության մեջ բնակենտրոն նշանակություն տալով ազգայնությանը՝ Պեշիկթաշլյանը իր եզրահանգումներում ուրվագծում է **հայկականությունը**՝ որպես ազգապահպան նշանակություն ունեցող իմացաբանական խորք: Այսպես օրինակ՝ խոսելով Ազնիվ Հրաչյայի տաղանդավոր խաղի մասին՝ Պեշիկթաշլյանը մեջբերում է Մնակյանի կարծիքը, որ դերասանուհին եվրոպացի շատ այլ գործընկերուհիներից առավել էր իր դերասանական ձիրքով ու խաղով, իսկ նրա հռետորական հարցին առ այն, թե հետո այդ կարծիքին ով պիտի հավատար, գրողը պատասխանում է «Բոլոր անոնք, որոնք կը ճանչան հայութիւնը իր անսահման ու այլազան կարողութիւններով՝ կը հաւատան: Այսինքն՝ իրական հայերը կը հաւատան»[7, 675]:

Հիշարժան է նաև այն հանգամանքը, որ Պեշիկթաշլյանը կարևորել է **պատմական փաստերը համադրելու սկզբունք**ը, նա օգտագործել է բազմաթիվ խաղացանկեր՝ ճշգրտելու համար դերերը, տարեթվերը և խաղացանկերում ներառված այլ դերասանների անունները: Սակայն գիրքը սոսկական փաստավավերագրություն չէ հայ թատրոնի և նրա գործիչների մասին: Այս ուսումնասիրությունը նաև արժեքավոր և ներհուն իմացաբանությամբ ստեղծված գրական-գեղարվեստական գործ է, որը բազմաշերտ է ու խորախորհուրդ: Յուրաքանչյուր դիմանկար, պատմական փաստերի հիմք ունենալով, ստեղծված է կոմպոզիցիոն ամուր շրջանակներով, կա դիպաշարային գիծ՝ լարված ընթացող պատումային գունեղ մանրամասներով, լեզվաոճական հյութեղ ելևէջումներով, որ լարվածություն է հաղորդում տեքստին ու գրավում է ընթերցողին:

Դիմանկարների կուռ համամասնության մեջ դերակատարում ունեն նաև ժամանակակիցների բազմաթիվ **հուշապատումներ**ը, անգամ բանավոր հուշերն ու կարծիքները, որոնք հեղինակը հրաշալիորեն համադրել է կոմպոզիցիոն մյուս տարրերին և հասել դիմանկարի յուրօրինակ ամբողջացման: Կարևորելով ոչ միայն թատերական տաղանդն ու համբավը՝ Պեշիկթաշլյանը ուշադրություն է դարձրել նաև թատերական գործիչների մարդկային հատկանիշներին, մատնանշել ամենից առաջ մարդ լինելու, մարդկային որակական հատկանիշներ ունենալու գործոնները: Այսպես օրինակ՝ խոսելով Սիպիլի՝ Սիրանույշի մասին հաճոյական գնահատականից՝ Պեշիկթաշլյանը նկատում է, որ նա «իր պսակը հիւսելու համար կ՚ անցնի ծուռ ճամբաներէ... Սիպիլ, ինչպէս կը վկայէ Անայիս ալ իր «Յուշերս» գրքին մէջ, երբեք ալ եղած չէ անկեղծ» [7, 817]: Մյուս դեպքում մարդկային նախանձն է համարում երկու դերասանուհիների՝ Արուսյակի և Երանուհի Գարագաշյանի առճակատման, այնուհետև Արուսյակի՝ հայ բեմի երբեմնի պայծառ աստղի

հասարակությունից վտարված ու մոռացված խղճուկ գոյության ու սոսկալի վերջաբանի պատճառը: Միևնույն ժամանակ, գրողը չի տատամսում անկեղծ, արդար լինել իր ձևակերպումներում՝ անկախ դիմանկարի հերոսի փառքի աստիճանից: Այս կերպ նա Պ. Ադամյանի, Սիրանույշի և այլոց գրական ստեղծագործությունները, ինչպես նաև դերասանուհիների մասին մյուսների բանաստեղծությունները համարում է գրականության հանդեպ մեղանչումներ[7, 817]: Բայց և թատերական դեմքերի մարդկային վատ բնավորությունների կամ գծերի մասին նա խոսում է հպանցիկ, գտնում, որ դրանց վրա պետք չէ ծանրանալ, հակառակը՝ պետք է ընդգծել նրանց կարևորությունը թատրոնի և, առհասարակ, ազգի մշակույթի համատեքստում: Գեղարվեստաբանական այդպիսի օրինակ է մեծ դերասանուհի Սիրանույշի մասին գրական ամփոփ եզրահանգումը. «Սիրանոյշ կուռք մըն է: Մեր բոլոր դերասանուհիներուն մէջ Սիրանոյշն է, որ խորհրդանշան մը եղաւ: Այսօր, մեր ժողովուրդի բերնին ու բանականութեան մէջ, Սիրանոյշ գլխագիր, զարդագիր ու բարձրադիր անուն մըն է: Զինքը տեսնողներուն եւ չտեսնողներուն համար հաւասարապէս հմայք մը, համբաւ մը, հրոչակեալ մըն է» [7, 792]:

Մարդկային հատկություններից զատ՝ նա կարևորել է դերասանի տաղանդի մյուս կարևոր ցուցիչները, շեշտել դերասանի բեմական կեցվածքի կարևորագույն տարրերը՝ նրա արտաքինը, ձայնային տվյալները, խոսքը, շարժասությունը (ժեստիկուլյացիա): Հատկապես ակնառու է նրա բացառիկ դրվատանքը Փափազյանի՝ իբրև դերասանի քանքարի մասին: «Բացառիկ կերպով լավ խաղ մը ունի, շքեղ ու շլացուցիչ խաղ մը: Փափազեանի տաղանդը տրամադրութեան վրայ կը փայլի» [7, 1030]: Անշուշտ, գործուն նշանակություն ունի նաև նրա ենթակայական գնահատականը անվանի դերասանի շնորհների մասին: «Իր գեղեցկութիւնը, իր կենդանութիւնը, իր իտէալական ձեւերը, իր ինքնաբուխ, ճարտար, ճարպիկ, ներդաշնակ դիրքերն ու դերակատարութիւնը գերազանց, տիրատուր, կատարեալ, շլացնող էին ու անկարելի էր մեծապէս չխանդավառուիլ, չլեցուիլ, չհորդիլ իրմով» [7, 1024]:

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն ևս առանձնացնում է «Թատերական դեմքեր» գիրքը նմանատիպ այլ աշխատանքներից. գեղարվեստականության ցուցանիշ է նաև հեղինակի զգայական-հուզական, բայց միաժամանակ վերլուծական, քննախուզական, ինչու չէ, նաև **քննադատական վերաբերմունք**ը թատերական գործիչների հանդեպ: Այս առումով տեղին է սույն մեջբերումը Սիրանույշի մասին. «Հակառակ չափազանց տպաւորուող ըլլալուս, պատանութեանս շրջանին յուսախաբ եմ եղած Սիրանոյշէն. իր հռչակը և իր խաղարկութիւնը համեմատական չէին: Գուցէ պատճառը իր տարիքն էր: Իմ տեսած շրջանիս՝ Սիրանոյշ 53 տարեկան էր: Կար նաեւ այլ պատճառ մը. նէ միշտ, իբրեւ սիրահար, իր դիմացը ունէր Վահրամ Փափազեանը, հազիւ 27 տարեկան, հանճարալոյս քանքարով ու գեղեցկութեամբ, որ կեանք էր համակ եւ թարմութիւն ու իտէալական երեւոյթ: Տարիքոտ կնոջ մը՝ շատ

երիտասարդ ու աստուածագեղ սիրահար մը ունենալը այլանդակութիւն մըն էր եւ, դժբախտաբար, որոշապէս զգալի, ինծի համար» [7, 782]: Պետք է, սակայն, փաստել, որ առարկայական այս վերաբերմունքից չի տուժում երկը, ընդհակառակը, նման միջամտումները էլ ավելի են շեշտադրում դիմանկարի գեղարվեստականությունը, քանի որ հեղինակը այն անցկացնում է իր՝ բանաստեղծի ու գեղագիտական տեսաբանի պրիզմայով:

Այո՛, Նշան Պեշիկթաշլյանը նաև թատրոնի տեսաբան է, որի հայեցակարգում թիրախային խնդիրները լիովին լուծվում են ժամանակի հայտնի մեթոդաբանությամբ: Թատրոնի տեսաբանի գրիչը ոչ մի կախման կետ չի դրել, թատերական կյանքի ոչ մի մանրամասն զանց չի առնվել՝ դարձնելով այս աշխատանքը ինքնատիպ դասագիրք իր ժամանակի, նաև այսօր հայ թատրոնին աղերսակից մարդու համար:

Ուսումնասիրության լավագույն լուծումներից մեկը դիմանկարներն ուղեկցող լուսանկարների և պաստառների հրատարակումն է, որը այն դարձրել է **յուրատեսակ մշակութային դասագիրք**՝ միտված դիմանկարի գեղարվեստական ընդհանրացմանը, և նոր որակի ճանաչողական ու փաստավավերագրային արժեքայնություն է հաղորդել Պեշիկթաշլյանի կատարած տիտանական աշխատանքին:

Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներն այսօր էլ շարունակում են կենսունակ մնալ ու առանձնանում են արդիական շեշտադրումներով: Հայ թատրոնի երախտավորների մասին այս փայլուն, անչափ բովանդակ ու խորքային աշխատությունը՝ **հայ թատրոնի յուրատեսակ անձնագիրը**՝ «Թատերական դեմքեր»-ը, մշակութային ու պատմական մեծ արժեք ներկայացնելուց զատ, դարձել է նաև ուծացման վտանգի դեմ հզոր կռվան՝ հայ երախտավորների հանդեպ առաջացող հպարտության միջոցով օտար եզերքում ազգային արմատները պահպանելու համար:

Եզրակացություն

Գրականագիտական տեսանկյունից ուսումնասիրելով Նշան Պեշիկթաշլյանի «Թատերական դեմքեր» գիրքը՝ հանգեցինք հետևյալ եզրակացությունների: Նախևառաջ հեղինակը կատարել է բազմակողմանի, համապարփակ, փաստավավերագրական աշխատանք՝ ներկայացնելով հայ թատերական մի շարք գործիչների, նրանց դիմանկարները կերտելիս ստեղծաբանել է գեղարվեստորեն, յուրաքանչյուր թատերական դեմքի անդրադառնալիս առաջնորդվել է ազգայնության առաջնահերթությամբ, ընդգծել է տվյալ հերոսի՝ թատերական արվեստում ունեցած ձեռքբերումները հայկական մշակույթի և ազգային ինքնության արժեքայնության համատեքստում: Հետևելով պատմական և ժամանակի ճշգրիտ աղբյուրներ օգտագործելու և դրանք քննադատաբար համադրելու, թատերական դեմքերի հանդեպ քննախուզական վերաբերմունք ունենալու սկզբունքներին՝ Պեշիկթաշլյանը հետապնդել է մի

քանի կարևոր նպատակ՝ ստեղծել մշակութային վավերագրական շքեղ կոթող, մշակութապատմական դեպքերի ու դեմքերի մասին վավերագրությունը ի պահ տալ սերունդներին և ամենակարևորը՝ ստեղծել մի հզոր կռվան՝ հայ երախտավորների հանդեպ առաջացող հպարտության միջոցով օտար եզերքում ազգային արմատները պահպանելու, ուծացման չգնալու համար:

Հղումներ

1. Գրիգոր Պլտեան, «Ֆրանսահայ գրականութիւն, 1922-1972», Երևան, 895 էջ, 2017:
2. Նշան Պէշիկթաշլեան, «Խաղ ու խնջոյք քրիստոնէութեան առաջի դարուն», Հայրենիք, Բոստոն, թիվ 12388, 1953:
3. Նշան Պէշիկթաշլեան, «Խաղերը ազատներուն դահլիճներուն մէջ», Հայրենիք, Բոստոն, թիվ 1239, 1953:
4. Նշան Պէշիկթաշլեան, «Միջնադարեան հայ թատրոնին վերջալոյսը», Հայրենիք, Բոստոն, թիվ 12408, 1953:
5. Նաիրա Բալայան, «Հայ ինքնության կերպավորումը Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներում», Պատմա-բանասիրական հանդես, Եր., թիվ 2, 115-129 էջ, 2019:
6. Ալբերտ Մակարյան,«Արևմտահայ գրական դիմանկարը», Երևան, 308 էջ, 2002:
7. Նշան Պէշիկթաշլեան, «Թատերական դէմքեր», Անթիլիաս, էջ 1140, 1969:
8. Նշան Պէշիկթաշլեան, «Ալիքսանյան», Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, «Մասիս» հրատ., էջ 413-430, 1926:
9. Նշան Պէշիկթաշլեան, «Մառի-Նուարդ», Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, «Մասիս» հրատ., էջ 376-395, 1929:
10. Саркисян О.Л., Армянская идентичность: проблема синтеза моделей «Культурно -исторической» и «Государственной» нации.- Проблемы национальной идентичности в контексте современной глобализации (Материалы международной научной конференции 3-4 ноября 2017г.), Ереван, с.с. 28-34, 2017.

“ТЕАТРАЛЬНЫЕ ЛИЦА» – ДОКУМЕНТАЛЬНО-ЛИТЕРАТУРНОЕ ПРОИЗВЕДЕНИЕ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

[1,2]Н.Балаян

[1]ЕУА, [2]Институт литературы им. М. Абегяна НАН Армении

Статья посвящена произведению армянского писателя Диаспоры Ншана Пешикташляна «Театральные лица» (1968), который получил литературную премию Георг Милетинеци и стало одним из лучших исследований об

армянском театре. Эта книга никогда прежде не подвергалась всестороннему изучению с использованием методологии литературоведения. В статье предпринята попытка выяснить художественную и историко-литературную ценность произведения в контексте армянской культуры и национального идентичностьи. Для того, чтобы это выяснить, был изучен как оригинальный материал, так и другие статьи того же автора, которые посвящены театру и проливают свет на всю концепцию автора. «Театральные лица» — уникальное документальное исследование, составленное из тридцати восьми портретов и содержащее более тысячи источников. Автор построил книгу не только на основе реальных фактов, мемуаров и других исследований, но и с художественном изложением. В ходе исследования мы выяснили, что Пешикташлян при создании портретов ряда деятелей армянского театра руководствовался приоритетом национализма. Он подчеркнул достижения данного театрального деятеля в контексте ценности национально-культурной идентичности. В статье мы отмечаем, что автор хоть проявлял расследовательное, критическое отношение к деятелям театра, но часто давал им самые высокие художественные оценки. В результате изучения книги мы приходим к выводу, что Пешикташлян преследовал несколько важных целей: создать великолепный документальный памятник о культурно-исторических событиях и личностях, сохранить его для поколений, а главное, создать мощную опору за сохранение национальных корней на чужбине.

Ключевие слова - Н. Пешикташлян, театр, портрет, реальные факты, хронология, армянская идентичность и культура.

“THEATRAL FACES” - A DOCUMENTARY- LITERARY WORK BY NSHAN PESHIKTASHLYAN

[1,2]N. Balayan

[1]Yerevan Haybusak University, [2]Institute of Literature after M.Abeghyan, NAS Armenia

The article is devoted to the work of the Armenian Diaspora writer Nshan Peshiktashlyan “Theater Faces” (1968), which received the Georg Miletinets literary prize and became one of the best studies on Armenian theater. This book has never before been subjected to comprehensive study using the methodology of literary criticism.

The article attempts to find out the artistic, historical, and literary value of the work in the context of Armenian culture and national identity. To find out, the original material and other articles by the same author were studied, which are dedicated to the theater and shed light on the author’s entire concept.

"Theatrical Faces" is a unique documentary study made up of thirty-eight portraits and containing more than a thousand sources. The author built the book based on real facts, memoirs, and other research with an artistic presentation. During the research, we found out that Peshiktashlyan, when creating portraits of many figures of the Armenian theater, was guided by the priority of nationalism. He emphasized the achievements of this theater figure in the context of the value of national and cultural identity. In the article, we note that although he showed an investigative, critical attitude toward theater workers, the author often gave them the highest artistic assessments. Because of studying the book, we conclude that Peshiktashlyan pursued several important goals: to create a magnificent documentary monument about cultural and historical events and personalities, preserve it for generations, and most importantly, create a powerful support for the preservation of national roots in a foreign land.

Keywords- N. Peshiktashlian, theater, portrait, real facts, chronology, Armenian identity and culture.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-11

МОТИВ СМЕРТИ И ПОИСКИ СМЫСЛА ЖИЗНИ В «КОЛЫМСКИХ РАССКАЗАХ» ВАРЛАМА ШАЛАМОВА

Марианна Балоян

Ереванский университет «Айбусак», Чанчуньский университет, Китай

Поступила 10.05.24, рецензирована 15.06, принята 26.06.

Абстракт. *В статье рассматривается творчество узника сталинских лагерей Варлама Шаламова, его «Колымские рассказы», воспоминания, переписка и др., а также исследуется психология, сочетающая прозу Шаламова и исследования пережившего Освенцим Виктора Франкла. В «Колымских рассказах» писатель показывает, как в условиях лагерной жизни деградирует человечность и в человеке преобладает животное начало, как человек в лагерях теряет способность чувствовать, спрашивать, спрашивать, внутри все испорчено, разрушено, завершено. равнодушие ко всему, только внешняя сила, как отмечает Шаламов, могла вытащить человека из этого равнодушия, прочь от медленно приближающейся смерти. В работе рассматриваются этапы психологической реакции человека в лагере, изучаются сами реакции заключенных, причем не всех, потому что не каждый способен пройти через это, и не каждый очерчивает ту или иную психологическую реакцию, внутреннюю переживания, которые сохраняют люди, — это желание жить, вера в жизнь.*

Ключевые слова: *Шаламов, ГУЛАГ, Франкл, смерть, узник, смысл жизни, Колыма.*

«Мне пятьдесят семь лет. Около двадцати лет я провел в лагерях и в ссылке. По существу, я еще не старый человек, время останавливается на пороге того мира, где я пробыл двадцать лет. Подземный опыт не увеличивает общий опыт жизни - там все масштабы смещены, и знания, приобретенные там, для «вольной жизни» не годятся. Человек выходит из лагеря юношей, если он юношей арестован… Жизнь требовала некого резкого поворота, и я нашел его» - «Моя жизнь – несколько моих жизней». {1}

В настоящей статье мы обращаемся к творчеству узника ГУЛАГа - Варлама Шаламова, поэта, прозаика, драматурга, пережившего тюрьму и исправительные трудовые лагеря, исследуем документальную хронику – ужасающие воспоминания из лагерной жизни на Колыме, написанные по возвращении писателя из сталинских лагерей, его письма и очерки. Шаламов был обвинен в «троцкизме», в контрреволюционной деятельности, Сам писатель считал, что его осудили «в войну за заявление, что Бунин — русский классик». Шаламов был реабилитирован в 2000 году посмертно.

В последнее время особенно возрос интерес к творчеству «запрещенных»

писателей, жертв сталинских репрессий. Однако до сих пор недостаточно исследовано конкретно творчество Варлама Шаламова и других забытых «узников» ГУЛАГа.

Актуальность настоящего исследования обусловлена попыткой особенно последние несколько лет реабилитации образа Сталина, распространением неосталинизма среди молодежи России, не имеющей истинного представления о времени. «Каждый мой рассказ — пощечина сталинизму и, как всякая пощечина, имеет законы чисто мускульного характера», - пишет Шаламов (из воспоминаний о Варламе Шаламове «Долгие, долгие годы бесед» Ирины Сиротинской).

Цель настоящей работы – исследовать «Колымские рассказы» Варлама Шаламова в контексте нравственно-философском, показать утрату надежды и неизбежности конца, потерю человечности на «Планете Колыма» и вновь приобретения человеком себя - «воскрешения лиственницы», показать психологизм, объединяющий прозу Шаламова и исследования пережившего Освенцим Виктора Франкла, сказавшего жизни «да!»

Методом данного исследования явилась совокупность теоретического метода, а именно: метод анализа синтеза и сравнения, обобщения и аналогии, и эмпирического метода.

О каторжных трудах русская литература знакомит по прозе Достоевского - «Записки из Мертвого дома», «Записки из подполья», но можно ли ставить знак равенства между каторгой Империи и Сталинскими лагерями, можно ли подойти к творчеству Шаламова с точки зрения литературного классического анализа текста, сюжетной линии, психологизма, коим можно было рассмотреть произведения 19 века? В Рассказе «Татарский мулла», вошедшим в сборник «Колымские рассказы» Шаламов пишет: «… нет нужды полемизировать с Достоевским насчет преимущества «работы» на каторге по сравнению с тюремным бездельем и достоинствами «чистого воздуха». Время Достоевского было другим временем, и каторга тогдашняя еще не дошла до тех высот, о которых здесь рассказано. Об этом заранее трудно составить верное представление, ибо все тамошнее слишком необычайно, невероятно, и бедный человеческий мозг просто не в силах представить в конкретных образах тамошнюю жизнь…» {2. с334}.

Шаламов – явление новое для русской прозы, он шел своим новым путем, считая «себя наследником не гуманной русской литературы XIX века, а наследником модернизма начала века», писал он в воспоминаниях. Сам автор «Колымских рассказов» признавался, как он создавал свои произведения. Он не переписывал черновик, его рассказы первозданные, как выкрик после напряжения, «Все мои рассказы прокричаны…»— писал он в письме к И.

Сиротинской[1] в 1971 году {3}.

О чем же Колымские рассказы? Сам Шаламов дает объяснение своим рассказам так - «это попытка поставить и решить какие-то важные нравственные вопросы времени, вопросы, которые просто не могут быть разрешены на другом материале. Вопрос встречи человека и мира, борьба человека с государственной машиной, правда этой борьбы, борьбы за себя, внутри себя – и вне себя. Возможно ли активное влияние на свою судьбу, перемалываемую зубьями государственной машины, зубьями зла. Иллюзорность и тяжесть надежды. Возможность опереться на другие силы, чем надежда». «Проверка на звук. Многоплановость и символичность.» {4}.

Литература, написанная узниками ГУЛАГа, зачастую представляют собой мемуары, документальную хронику, распространяющуюся далеко за пределами страны. Сам Шаламов определил жанр «Колымских рассказов» как документальный очерк, доведенный до крайней степени художественности.

В письме к Фриде Вигдоровой Шаламов писал: «Растлевающая сила лагерей велика и многообразна. (Даже желание изобразить характеры «устоявших» связано с этой растлевающей силой.) Опыт лагерной жизни — весь отрицательный. Даже день, даже час не надо там быть. Я видел много такого, чего человек не должен, не имеет права видеть. Душевные травмы — непоправимы. Душевные «обморожения» — необратимы. Остатки мяса на костях колымских «фитилей» — лишь для злобы или безразличия, равнодушия. И вдруг оказывается, что и душевных, и физических сил хватает еще на что-то, что позволяет держаться, жить… И еще — в «Колымских рассказах» нет осуждения. Моральные барьеры отодвинуты, нравственные масштабы смещены. Все это надо было показать людям, не знающим этого страшного мира» {5}.

В своих воспоминаниях «О Колыме», автор выражает сомнение по поводу, кто же на самом адресат этой скорбной повести, нужна ли будет она кому-либо. «Повесть не о духе победившем, но о духе растоптанном. Не утверждение жизни и веры в самом несчастье, подобно «Запискам из Мертвого дома», но безнадежность и распад. Кому она нужна будет как пример, кого она может воспитать, удержать от плохого и кого научить хорошему? Будет ли она утверждением добра, все же добра — ибо в этической ценности вижу я единственный подлинный критерий искусства» {4}.

Вопреки мнению о том, что писатель должен знать близко то, о чем пишет, Шаламов утверждает, что писателю нужен «опыт небольшой и неглубокий», так, чтобы он не мог оказать решающего воздействия на эмоциональную

1 Сиротинская Ирина Павловна (5 октября 1932 г. — 11 января 2011 г.) — близкая подруга Шаламова, которая сберегла и обеспечила сохранность его наследия. Правопреемница писателя, составитель и автор комментариев к его книгам, в т. ч. собраниям сочинений.

оценку излагаемого, художественного мышления. «Писатель не должен хорошо знать материал, ибо материал раздавит его… Но как рассказать о том, о чем рассказывать нельзя? Нельзя подобрать слова. Может быть, проще было умереть. Нельзя рассказать хорошо о том, что знаешь близко» {4}.

Колымские рассказы были написаны через 20 лет после освобождения писателя, и невозможным представлялось точно передать в мельчайших подробностях увиденное и пережитое, утрачено было многое, начиная с пейзажа, заканчивая «последовательностью ощущений», записей в лагере Шаламов не вел, и нельзя было вести, единственной целью тогда было – выжить. помимо этого, как отмечает Шаламов, человеческой памяти свойственно помнить добро, и забывать зло, - выражение в высшей степени нравственности. «Воспоминания злые — гнетут, и искусство жить, если таковое имеется, — по существу есть искусство забывать» {6}

В «Колымских рассказах» писатель показывает, как в условиях лагерной жизни деградирует человечность в человеке и преобладает звериное начало. В рассказе «На представку» в бараке блатные собирались играть в карты, Гаргунов проигрывает телогрейку, под телогрейкой у него был свитер, который он никогда не снимал – шерстяной свитер – последняя передача от цены перед отправкой в дальнюю дорогу. Жители барака избивают его до смерти, снимают с него окровавленный свитер: «Сашка растянул руки убитого, разорвал нательную рубашку и стянул свитер через голову. Свитер был красный, и кровь на нем была едва заметна… Игра была кончена, я мог идти домой. Теперь надо было искать другого партнера для пилки дров» {2, с54}. Так завешается одна из историй – примечательно, что автор словно остается в стороне, лишь излагая факты, не выражая ни сожаления, ни упрека, автор оставляет читателю найти ту грань, где начинается разложение души человека.

На планете «Колыма» оказался интеллигент, врач Глебов, врачом он был в другой жизни, и эта жизнь казалась настолько далекой, словно была сном, выдумкой, реальная же жизнь была здесь, минута, час, день, никто не загадывал жизнь наперед, как и Глебов. Видя, как Багрецов высасывает кровь из грязного пальца, врач молчит, не находит в себе сил на ответ - «утрачен был не только автоматизм суждений, но и автоматизм наблюдений». Они стащили с трупа рубашку и кальсоны. «Белье мертвеца согрелось за пазухой Глебова и уже не казалось чужим». В своих воспоминаниях о Колыме Шаламов замечает: «Интеллигент не мог обдумать лагерь заранее, не мог его осмыслить теоретически. Весь личный опыт интеллигента — это сугубый эмпиризм в каждом отдельном случае. Как рассказать об этих судьбах? Их тысячи, десятки тысяч» {6}. Он приходит к убеждению, что интеллигент оказывался слабее, нежели крестьянин, что допросы во второй половине 37 года, когда стали

применять метод 3, вышиб из интеллигента весь героизм.

Разложению человеческой души способствовал не только голод, но и мороз, тот самый, который на лету слюну превращал в лед, добрался и до человеческой души. Нельзя было обвинять людей в равнодушии, «если могли промерзнуть кости, мог промерзнуть и отупеть мозг, могла промерзнуть и душа». Умирал один, просто умирал, не просыпался, остальные даже не интересовались, почему он умер, как будто причина была одна и известна всем. Человек, оказавшийся в лагерях, терял способность чувствовать, просить, спрашивать, внутри все было выжжено, опустошено, полное безразличие ко всему, только внешняя сила, как отмечает Шаламов, могла вывести человека из этого безразличия, отвести от медленно приближающейся смерти.

Виктор Франкл выделяет следующие фазы в психологических реакция заключенных: Фаза первая – прибытие в лагерь, вторая фаза – жизнь в лагере и третья фаза – после освобождения. Собственно, упомянутые фазы проходит Шаламов, герой Шаламова. В данном контексте мы рассмотрим именно те реакции заключенных, причем не всех, так как не все способны пройти через это и не у каждого проявляется та или иная психологическая реакция, внутренние переживания, которые поддерживают в людях желание жить, веру в жизнь. В первую очередь - это уход в себя. Так Франкл отмечает, что чувствительные люди, живущие духовным, переносили лагерную жизнь тяжело, но она действовала на них менее деструктивно, в сущности, то же самое заметил Шаламов, будучи в лагере, и в своих воспоминаниях «Что я видел и понял в лагере» {7} Шаламов пишет, что единственная группа людей, которая держалась хоть чуть-чуть по-человечески в голоде и надругательствах, — это религиозники — сектанты — почти все и большая часть попов. Так человек, живущий духовной жизнью, согласно Франклу, легче переносится в мир внутренней духовной свободы, внутреннего богатства. Так в самые тяжелые моменты арестанты думают о своих женах: «Если бы наши жены нас сейчас видели! … Они, надеюсь, не представляют себе, что тут с нами» {8,с141}. И перед Фраклом возникает образ жены. Он беседует с женой, видит ее улыбку. Франкл провозглашает освобождение через любовь: «И вдруг меня пронзает мысль…: я понял, я принял истину – только любовь есть то конечное и высшее, что оправдывает наше здешнее существование, что может нас возвышать и укреплять! Освобождение – через любовь, в любви! … Человек, у которого все отнято, может духовно, пусть на мгновение – обладать самым дорогим для себя – образом того, кого любит.» {8, с142} Ангелы счастливы бесконечным созерцанием Бога. И среди всего серого, мрачного, когда человек в холод стоит долбит землю, он снова ведет мысленный диалог с любимым человеком, и в тысячный раз в ответ на вопрос, в чем смысле страдания человека, его жертвы, медленного умирания, вдруг в человеке

все восстает против безнадежности, бессмысленности, и на вопрос, «есть ли смысл?» откуда-то звучит «твердое, ликующее «да!»

Но если Франкл смысл существования видит в любви, в воле к жизни, Шаламов отрицает волю, надежду, и только инстинкты, чувство самосохранения заставляет человека жить дальше, тем же началом, что живет все в природе. Но не продиктованы ли наши инстинкты волей, чувство самосохранения не проявление ли воли к жизни?

Пройдя через Колымский ад, Шаламов не потерял в себе человеческое, за что и в праве гордится собой: «Горжусь, что решил в самом начале, еще в 1937 году, что никогда не буду бригадиром, если моя воля может привести к смерти другого человека — если моя воля должна служить начальству, угнетая других людей — таких же арестантов, как я» {7}. Такое отношение к явлениям, к ситуациям Франкл объясняет внутренней свободой человека. Человек даже под внешним давлением, способен противостоять им внутренне, духовностью, сохранить остатки человечности.

Поиски смысла жизни. В части «Спиноза как воспитатель», Франкл выдвигает тезис: вопреки лагерной действительности, человека необходимо обратить к будущему, к какой-то значимой для него цели в будущем. Человек инстинктивно поддерживает себя мыслью о будущем. Тот, кто не верит в будущее, в свое будущее, тот в лагерях погиб.

В лагерной жизни не бывает одинаковых судеб. Если Франкл видит в страданиях подвиг, то Шаламов считает каждую минуту лагерной жизни – отравленной минутой, «Там много такого, чего человек не должен видеть, а если видел – лучше ему умереть» {2, 562}. На Колыме моральные барьеры отодвинуты, «можно делать подлости и все же жить, … можно лгать и жить, … интеллигент напуган навечно, дух его сломлен, и эту надломленность, напуганность он переносит в вольную жизнь» {7}.

В сущности, Колымские рассказы про разрушительную силу, растлевающую души людей лагерную жизнь, но тем не менее, в 1966 году Шаламов выпускает сборник рассказов «Воскрешение лиственницы», в которой изложена идея веры человека в чудо - а значит - веры в жизнь, символом жизни становится лиственница, она свидетель истории России 100, 300 и 600 лет. «И только лиственница наполняет леса смутным своим скипидарным запахом. Сначала кажется, что это запах тленья, запах мертвецов. Но приглядишься, вдохнешь этот запах поглубже и поймешь, что это запах жизни, запах сопротивления северу, запах победы… Лиственница – дерево очень серьезное. Это – дерево познания добра и зла, – не яблоня, не березка! – дерево, стоящее в райском саду до изгнания Адама и Евы из рая. Лиственница – дерево Колымы, дерево концлагерей» {9}. И человек обязан помнить о миллионах погибших в лагерях, и, конечно, она символизирует бессмертие человека.

Вся жизнь Варлама Шаламова, все его творчество – это познание добра и зла, но невольно напрашивается вопрос, а зачем человеку познание такой ценой, прав был автор, настаивая на том, что лагерная жизнь никому и никогда не приносила пользы, что час жизни в лагере – час растления души, жизнь в лагере ничему не учит, она никому не нужна, она только разрушает душу человека, его психику. В лагере человек живет либо злобой, либо равнодушием. «После риторики моралиста Толстого и бешеной проповеди Достоевского были войны, революции, Хиросима и концлагеря, доносы, расстрелы. Лиственница сместила масштабы времени, пристыдила человеческую память, напомнила незабываемое» {9}.

Не бывает одинаковых судеб, как утверждает Виктор Фракл, каждый по-своему пережил, выжил и не выжил в лагерях ГУЛАГа и Освенцима, но, тем не менее, нами была сделана попытка показать, что объединяет людей, оказавшихся в этих местах, в самом аду 20 века, какая сила их заставила выжить – Франкл называет это волей к жизни, Шаламов – инстинктом самосохранения. «Наконец, к III тысячелетию Варлам Шаламов вступает в жизнь после смерти реабилитированным. Двадцать лет тюрем, лагерей, истязаний и бесправия. Можно успокоиться — он ни в чем не виноват» {10}.

Что помогло обоим устоять физически и нравственно, большинство заключенных на Колыме не могли противостоять нравственному растлению, Шаламов смог, сам считал, что ему помог пережить Колыму опыт в Бутырской тюрьме.

Лагерная жизнь дала возможность Франклу заглянуть в самые глубины человеческой души, и в этих глубинах обнаруживается все, что свойственно человеку. «Человеческое – это сплав добра и зла. Рубеж, разделяющий добро и зло, проходит через все человеческое и достигает самых глубин человеческой души. Он различим даже в бездне концлагеря» {8, с320}

Так что же такое человек? – задается вопросом Франкл. И выносит формулу: «Это существо, которое всегда решает, кто он. Это существо, которое изобрело газовые камеры. Но это существо, которое шло в эти камеры, гордо выпрямившись, с молитвой на губах».

Варлам Шаламов – лишь единичный случай среди миллионов узников, многие из которых бесправно забыты, творчество которых требует тщательного исследования и включения в программы по литературе как средней школы, так и вузов. Данную задачу считаем необходимой и неотлагательной на фоне растущей тенденции реабилитации образа Сталина в России.

Литература

1. Шаламов В. «Моя жизнь – несколько моих жизней» //URL: **Error! Hyperlink reference not valid.** - дата обращения: 15.06.2024

2. Шаламов В. Собрание сочинений в 6 т. Т.1. М.: Книжный Клуб «Книговек», 2013, 672с.
3. Сиротинская И. Долгие, долгие годы бесед. О Шаламове. https://shalamov.ru/memory/37/1.html - дата обращения: 15.06.2024
4. Шаламов В. Воспоминания. «О Колыме» Предисловие. URL: https://shalamov.ru/library/25/1.html - дата обращения: 15.06.2024
5. Филимонова К. Литература свидетельства между забвением и умолчанием. Варлам Шаламов и «лагерная» проза польской эмиграции. // Вопросы литературы. 2023. No 6. С. 94-105
6. Шаламов В. Воспоминания. «О Колыме» Память. URL: Error! Hyperlink reference not valid. - дата обращения: 15.06.2024
7. Шаламов В. Воспоминания. «Что я видел и понял в лагере» URL: https://shalamov.ru/library/29/
8. Франкл В. Сказать жизни: «Да!»: психолог в концлагере. Перевод на рус.яз. 2004, «Смысл», 2009. 446 с.
9. Шаламов В. «Воскрешение лиственницы». URL: **Error! Hyperlink reference not valid.** - дата обращения: 15.06.2024
10. Сиротинская И. «Реабилитирован в 2000 году» URL: **Error! Hyperlink reference not valid.** - дата обращения: 15.06.2024

ՄԱՀՎԱՆ ԹԵՄԱՆ և ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՈՐՈՆՈՒՄԸ ՎԱՐԼԱՄ ՇԱԼԱՄՈՎԻ «ԿՈԼԻՄՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ»

Մարիանա Բալոյան

Երևանի Հայբուսակ համալսարան, Չանչունի համալսարան, ՀԺՀ

Ուսումնասիրված է Ստալինյան ճամբարների բանտարկյալ Վառլամ Շալամովի «Կոլիմյան պատմվածքները», հիշողությունները, նամակագրությունը և այլն, անրադառնում է հոգեբանությունը, որը միավորում է Շալամովի արձակը և Օսվենցիմը վերապրած Վիկտոր Ֆրանկլի հետազոտությունը: «Կոլիմյան պատմվածքներում» գրողը ցույց է տալիս, թե ինչպես է ճամբարային կյանքի պայմաններում մարդկությունը դեգրադացվում է և մարդու մեջ գերակշռում է կենդանական սկիզբը, թե ինչպես է ճամբարներում հայտնված մարդը կորցնում զգալու, խնդրելու, հարցնելու ունակությունը, ներսում ամեն ինչ մոխրացած է, ավերված, լիակատար անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: Աշխատությունը ուսումնասիրում է ճամբարում հայտնված անձի հոգեբանական արձագանքի փուլերը, ուսումնասիրում է բանտարկյալների հենց այդ արձագանքները, և ոչ բոլորը, քանի որ ոչ բոլորն են ի վիճակի անցնել դրա միջով, և ոչ բոլորն են ուրվագծում այս կամ այն հոգեբանական

արձագանքը, ներքին փորձառությունները, որոնք մարդկանց մեջ պահպանում են ապրելու ցանկությունը, հավատը կյանքի նկատմամբ:

Հիմնաբառեր՝ Շալամով, Գուլագ, Ֆրանկլ, մահ, բանտարկյալ, կյանքի իմաստ, Կոլիմա:

THE MOTIVE OF DEATH AND THE SEARCH FOR LIFE IN "KOLYMA TALES" BY VARLAM SHALAMOV

Marianna Baloyan

Yerevan Haybusak University, Changchun University, China

The article studies the work of the Gulag prisoner Varlam Shalamov, his "Kolyma Tales", his memoirs, letters, etc. It shows the psychology that unites Shalamov's prose and the book by Viktor Frankl, who survived Auschwitz. In "Kolyma Tales" the writer shows how in the conditions of camp life the humanity in a person degenerates and the animal beginning prevails; how a person, who finds himself in the camps, loses the ability to feel, to ask, to ask, inside everything is scorched, devastated, complete indifference to everything, only external force, as Shalamov notes, could bring a person out of this indifference, take him away from the slowly approaching death. The work explores the phases of the psychological reaction of a person who found himself in the camp, highlighted by Frankl, and examines exactly those reactions of prisoners, and not all of them, as not everyone is able to go through it and not everyone is marked by this or that psychological reaction, inner experiences that maintain in people the desire to live, faith in life.

Keywords: Shalamov, Gulag, Frankl, death, prisoner, purpose of life, Kolyma.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.61484/29538181-sj.10.24-07

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ամալիա Սահակյան

ԵՀՀ «Ռոսլին» ակադեմիա

Մուտքագրված է՝ 10·05, գրախոսված է՝ 16.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր՝ *Աշխատանքում բացահայտված են մարդկային ստեղծագործական ներուժի կառուցվածքային բաղադրիչները՝ ստեղծագործական մտածողություն, երևակայություն, հնարամտություն, ըմբռնման չափ, իրերի ու երեւույթների խորքը թափանցելու, ներքին կապերը բացահայտելու ցանկություն, գեղեցկության զգացում: և այլն: Անհատական բաղադրիչների առկայությունը դիտարկվում են որպես անձի ստեղծագործական կարողությունների ձեւավորման ու զարգացման չափանիշներ:*

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունները հիմնականում զարգանում են ուսումնական գործընթացում՝ ուսուցչի առաջատար, առաջնորդող դերով, ուսուցման ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ և դրա համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների ապահովմամբ, ինչի մասին կխոսենք: հաջորդ ենթաբաժնում

Հիմնաբառեր՝ *ստեղծագործական կարողություններ, զարգացում, կրտսեր դպրոցական, խաղ, ստեղծագործական գործունեությունը:*

Որպեսզի որոշակենք կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները, նախ պետք է բացահայտենք անձի ստեղծագործական գործունեության բնութադրիչները: Ամերիկացի խոշորագույն մանկավարժ Լի Շուլմանը կարևորում էր մանկավարժի բացառիկ դերը աճող սերնդին հասարակության հոգևոր, բարոյական արժեքների, մարդկության մշակութային, ինտելեկտուալ, գեղագիտական ձեռքբերումների փոխանցման գործում [4, էջ368]: Ասվածը ենթադրում է, որ սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող հիմնական գործոններից մեկը ուսուցչի ստեղծագործականությունն է և սովորողների հետ համաստեղծագործական գործունեության կոմպետենտ իրականացումը:

Մյուս կարևոր գործոնը զգացմունքների, հոգևոր, բարոյական արժեքների համախումբի ձևավորվածությունն է: Լ.Վ. Տրուբայչուկը նշում է, որ մարդու մեջ

այդ հատկանիշների միասնությունը նրա համար ստեղծագործ անձ լինելու և արարելու նախադրյալներ է ստեղծում: Առհասարակ ընդունված է համարել, որ ստեղծագործական գործունեության չափանիշը բարու առկայությունն է: Եթե ստեղծագործական գործունեության մեջ չկա բարին, ապա այդ գործունեության արդյունքը ուղղված է ոչնչացման (ատոմային ռումբ, թունավոր նյութեր և այլն), այլ ոչ թե խաղաղությանն ու արարմանը [8, էջ34]:

Բ. Ստրուգացկին այն գիտական մոտեցումն ունի, որ եթե լայն առումով դիտարկենք ստեղծագործական գործունեությունը՝ որպես առհասարակ նորի, անսպասելիի, անսովորի ու անկրկնելիի ստեղծում, ապա կարելի է ենթադրել, որ և հոյակերտ տաճարների, և եգիպտական բուրգերի, և արվեստի հրաշալի ստեղծագործությունների, և ատոմային ռումբի ստեղծողներն օժտված են ստեղծագործական վառ երևակայությամբ, քանի որ Չարի արարումն անգամ պահանջում է այնքան ստեղծագործական լարվածություն ու ներշնչանք, որքան խելամիտ, բարի, հավերժական արարչագործությունը[7, էջ 71]:

Ժամանակակից փիլիսոփաները ստեղծագործությունը համարում են ոչ թե գործունեության արդյունք, այլ ստեղծագործական կարողության արգասիք:

Մեր հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից մենք համամիտ ենք Ա.Ն. Լեոնտևի, Ի.Ս. Կոնի, Վ.Ս. Մերլինի ինքնագիտակցության և ստեղծագործական մտածողության զարգացման վերաբերյալ հետազոտություններում արտացոլված այն գաղափարի հետ, որ կրտսեր դպրոցական տարիքում արդեն առկա են հոգևոր արժեքների վրա հիմնված ստեղծագործական կարողությունների զարգացման նախադրյալներ[5]:

Վերոբերյալը մեզ հիմք է տալիս պնդելու, որ կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոններից են նաև համամարդկային հոգևոր-բարոյական արժեքները:

Ըստ Վ.Վ. Դավիդովի՝ կրտսեր դպրոցական տարիքում արդեն ձևավորվում է անձի՝ ստեղծագործական գործունեության նկատմամբ հուզական վերաբերմունքի և ստեղծագործության հուզական ընկալման հիմքը: Նա նշում է, որ երեխան պետք է հաճույք և բավականություն ստանա ստեղծագործական գործունեությունից. «Եթե կրտսեր դպրոցական տարիքում այդ ձգտումը դեռևս ձևավորված չէ, ապա հետագայում ոչ ջանասիրությունը, ոչ բարեխղճությունը չեն կարող արդյունավետ և ստեղծագործ ուսուցման հոգեբանական աղբյուր դառնալ [4]: Մեր կարծիքով Վ.Վ. Դավիդովի նշած ստեղծագործական գործունեության նկատմամբ հուզական վերաբերմունքի և ստեղծագործության հուզական ընկալման հիմքը սովորողի կողմից իր ստեղծագործական ներուժի դուրս մղումն է, դրսևորումը, որով և պայմանավորվում է նրա ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Այս տեսանկյունից էլ, մենք այն համոզմանն ենք, որ կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը սերտորեն կապված է նրանց հոգևոր ներաշխարհի ձևավորման հետ, որի առկայությունը

հետագայում ապահովում է ստեղծագործական գործունեության առաջընթացը:

Ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոններից են կրտսեր դպրոցականների կազմաբնախոսական, հոգեբանական, սոցիալ-անձնային, խոսքային և ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները, որոնց հաշվառումը դիտարկվող գործընթացում էական դեր է կատարում:

Այս տարիքում ձևավորվում են վարքի և գործունեության նոր մեխանիզմներ՝ նորագոյացություններ, ծագում են գործունեության դրդապատճառային նոր տեսակներ՝ պայմանավորված կրտսեր դպրոցականի պատկերավոր-առարկայական մտածողությամբ. նրանք հեշտությամբ ընկալում և յուրացնում են այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, և աշխարհն ընկալում են գույներով, ձևերով ու ձայներով: Այս շրջանում նրանք իրականացնում են գործունեության երեք տեսակ՝ խաղ, ուսում, աշխատանք:

Խաղը երեխային հնարավորություն է ընձեռում ստեղծագործելու, երևակայելու, սովորելու, ուշադրությունը կառավարելու, համագործակցելու և, իհար կե, զարգանալու:

Տարրական դպրոցում շատ ուսումնադաստիարակչական խնդիրներ լուծվում են խաղի միջոցով:

Բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, որ խաղը, հեքիաթը, ստեղծագործական առաջադրանքը զարգացնում են կրտսեր դպրոցականների երևակայությունը. նա ստեղծում է իր երևակայական աշխարհը, հրճվում իր ստեղծած երևակայական պատկերներով ու ապրում հերոսների զգացումներով: Գիտելիքների ձեռքբերման գործընթացը երեխայի համար վերածվում է ստեղծագործական ակտիվ գործունեության. նրա ամենօրյա ուսումնական գործունեությունը՝ գրել, նկարել, ներկել, մտածել, համեմատել, հակադրել, հիշել, արտահայտել, երգել, խոսել, պատմել և այլն, նոր գիտելիքների յուրացման և իմաստավորման գործընթաց է, որտեղ գործի են դրվում բոլոր զգայարանները:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի հոգևոր-ստեղծագործական կայացման փուլն է. ձևավորվում են բարոյակամային որակները, մտածողության ձևերը, հետաքրքրությունները, զգացմունքները, արժեքային կողմնորոշումները, դիրքորոշումները, որոնք դրսևորվում է նրանց արարքներում, նյութական և հոգևոր մշակութային արժեքների ընկալման մեջ, բնության և մարդկանց հետ հարաբերութուններում: Կրտսեր դպրոցականը գիտակցում է իր սոցիալական «Ես»-ը. նա ձգտում է իր տեղն ու դերն ունենալ շրջապատում, զգայուն է միջավայրի վերաբերմունքի նկատմամբ, աչքի է ընկնում ներշնչվածությամբ, դյուրությամբ արձագանքում է արտաքին աշխարհի ներգործությանը:

Իհարկե, այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը որոշակի նպաստել է կրտսեր դպրոցականի մտածողության նոր ձևերի զարգացմանը՝ էականորեն ազդելով են նրանց ինքնավերահսկման, ինքնա-

գնահատման, ռեֆլեքսիվ գործընթացների վրա: Երեխաները գիտակցում են իրենց ծավալած ուսումնահիմացական և ստեղծագործական գործունեության արժեքն ու նշանակությունը: Ի դեպ, ուսումնական գործունեությանը զուգահեռ շարունակվում են դերային խաղերը, որոնց ընթացքում ձևավորվում են գնահատողական վերաբերմունքը, ստեղծագործական գործունեություն կատարելու պահանջմունքներն ու դրդապատճառները, զարգանում են ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցային կարողությունները: Խաղը բացահայտում է երեխայի անհատական ընդունակությունները, կարողությունները, նպաստում է երեխայի անձի զարգացմանը:

Ինչպես գիտենք, կրտսեր դպրոցական տարիքը ունի բացառիկ նշանակություն երեխաների ֆիզիկական, հոգեկան զարգացման համար և այդ տարիքում խաղի կարևոր նշանակությունն այն է, որ երեխան հայտնվում է որոշ մարդու դերում՝ կարծեք թե նայելով աշխարհին մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Այստեղ երեխան հուզական ճանապարհով կանխազգում է ապագա, լուրջ, հասարակական արժեք և գնահատում ունեցող գործունեության ուրախությունը: Ստեղծագործական գործունեությունը աստիճանաբար դառնում է կրտսեր դպրոցականի ուսումնահիմացական գործունեության առաջատար ուղղվածությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստեծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացումն անմիջականորեն առնչվում է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների, հոգևոր-բարոյական որակների ձևավորման հետ և փոխպայմանավորում են միմյանց:

Լ.Վ. Տրուբայչուկն արտահայտում է այն ուշագրավ տեսակետը, որ ստեղծագործ անձի գլխավոր հատկանիշը նրա ստեղծագործական ակտիվությունն է, որն արտահայտվում է համարձակությամբ, նպատակասլացությամբ, ստեղծագործական խիզախությամբ, նոր խնդիրների առաջադրմամբ և կենսական ու իմացական խնդիրների ոչ ստանդարտ, ինքնատիպ լուծումներ գտնելու ձգտմամբ, սկսած գործը տրամաբանական ավարտին հասցնելու պատրաստակամությամբ, ստեղծագործական ինքնազարգացմամբ ու ինքնիրացմամբ (8, էջ 36):

Հաշվի առնելով մանկավարժական գրականության մեջ առկա այն մոտեցումները, որ անձի մեջ հոգևորը, ստեղծագործական և ներքին կարողությունները սերտորեն միավորված են՝ գալիս ենք այն գիտական տեսակետին, որ անձի մեջ հոգևորը և ստեղծագործական կարողությունները փոխադարձ կապի ու միասնության մեջ են: Այն լավագույնս բնութագրում է «ստեղծագործական կարողություններ», «անձի հոգևոր-ստեղծագործական կայացում», «հոգևոր-ստեղծագործական գործունեություն» հասկացությունները: Հոգևորը անձի ստեղծագործական էության անբաժանելի մասն է: Հետազոտող Ա.Ի. Զելիչենկոն հոգևորի և ստեղծագործական դրսևորումների միասնությունը դիտարկում է որպես «ես»-ի անդուլ որոնում, բարձր ապրում-

ների, վարքի դրսևորումների, իմաստնության, ստեղծագործական ինքնարտահայտման ձև [6]:

Անձի մեջ հոգևորի և ստեղծագործական դրսևորումների միասնությունը գիտակցել և իմաստավորել են հայ մանկավարժական և փիլիսոփայական մտքի ներկայացուցիչները, քերթողական արվեստի կարկառուն դեմքերը:

Միջնադարի խոշորագույն գործիչ Գրիգոր Նարեկացին մարդու մեջ ստեղծագործական բռնկումների և պոռթկումների աղբյուր է դիտում նրա հոգևոր ազատությունը, աստվածային ներշնչանքը: Նա համոզված է, որ մարդը՝ «անզուգական հրաշակերտտությունը», կարող է հասնել ներքին ազատության, բարոյական ինքնամաքրման, ինքնազարգացման, իր մեջ և իր շուրջ ներդաշնակության հաստատման, արարչագործության, եթե ունենա հոգևոր էություն, ճանաչի իր ներքին ուժերն ու հնարավորությունները, իշխի իր զգացմունքների վրա [1, էջ157]:

13-րդ դարի բանաստեղծ Ֆրիկը ստեղծագործական կարողությունների դրսևորումը բխեցնում է հոգևոր զարթոնքից. ստեղծագործության պտուղը մտքի և հոգու ծաղկման արգասիք է: «Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պտուղ կու տա»,- գրում է նա:

Հայ մանկավարժագիտության մեջ մանկավարժական հոգեբանության հիմնադիր Առաքել Բահաթրյանը գրում է, որ մանկան հոգևոր էությունը ձևավորվում է խաղի մեջ, որը յուրօրինակ աշխարհ է: Այդ աշխարհում նա «դիտում ու քննում է բնության երևույթները՝ աստիճանաբար գնալով դեպի բարձր գաղափարական աշխարհը»: Նա այն կարծիքին է, որ խաղը մանկան ձգտման ազատ արտահայտությունն է, և որպեսզի երեխան կազմակերպվի, զարգանա, զբաղվի ստեծագործական գործունեությամբ, պետք է այդ ձգտումները կանոնավոր զարգացնել և ուղղորդել. «Վասնզի միայն այդպես են կարող նորա ձգտումները զարգանալ, ծաղկել և առողջ պտուղ բերել» [1, էջ417-418]:

Նա այն գիտական համոզմանն է, որ անձի ստեղծագործական կարողությունները ձևավորվում են դեռևս մանկական տարիքում. դրա նախնական դրսևորումներն են, գործողության ձգտումը, հողով խաղալը, երկիր փորփրելը, … յուր ցանած սերմի ծլելը, երբ նա դիտում է թռչունների ձագերին յուրյանց բունում ծլվլալիս, … մի խոսքով, երբ նա ինքն յուրյան գտնում է շրջապատված բնության հրաշալիքներով: Ով որ դիտել է այդ բոլորը, նա կհամոզվի, որ բնության հետ ունեցած անմիջական հաղորդակցությունը մանկանը առավել և առավել է տալիս, առավել է ուսուցանում, քան գրքերն ու դպրոցը [1, էջ 416]: Այսինքն՝ մանկան բնատուր զգայարանները ձևավորվում են բնության հետ շփմամբ, որն էլ գրգռում է նրա երևակայությունը, հետաքրքրությունը՝ նրան մղելով իր սիրած գործով զբաղվելուն: «Եվ դա միայն այն ժամանակն է տեղի ունենում, երբ նա գործում է այն, ինչ որ նորան ուրախություն է պատճառում, երբ նա տեսնում է, որ ճշմարիտ ինքը մի բան է շինում: Այդ ստեղծագործ գործողությունը արթնացնում է ու զարգացնում մարդկային ստեղծող հոգվո

առաջին սերմերը, հնարագյուտ զորությունը և փոխանակ լոկ նմանության՝ շուտով կարելի են գործում մանկան ինքնյան հնարել և շինել զանազան բաներ» [1, էջ 416]:

Ականավոր արևմտահայ մանկավարժ Հ. Հինդլյանը անձի հոգևոր-բարոյական նկարագրի մեջ կարևոր դեր է հատկացնում գեղագիտական դաստիարակությանը՝ նշելով, որ գեղագիտությունը, բարոյականությունը և ստեղծագործական գործունեությունը սերտ միասնության և փոխադարձ կապի մեջ են, նա գրում է. «Գեղեցիկը փնտրել, այսինքն ջանալ աշխատությունը խնամքով կատարել, կբարձրացնե անհատին նկարագիրը և անձնականությունը… գեղագրությունը, գծագրությունը, բանաստեղծությունը, ձեռական աշխատությունները և երաժշտությունը՝ արվեստներուն ամենեն խորթափանցը, որուն գերակշիռ դեր մը կվերագրեին նախնիք՝ առաքինության վարժեցնելու մասին, ասոնք ամենքը մասնավոր կերպով կծառայեն գեղեցկին ճաշակը զարգացնելու, միջոցներ, որոնք այնքան ավելի արդյունաշատ կբեղմնավորին, որքան միացած ըլլան բնության գեղեցկության զննությանց հետ, քանի որ, ըստ Քանդի, երկու բան կա, որոնց վեհությունը հիացմամբ և պատկառանքով կտոգորե զմեզ. աստղազարդ երկինքը՝ մեր գլխուն վերև, և պարտականության օրենքը՝ մեր սրտին խորը» [2]:

Այսպիսով՝ ստեղծագործական կարողությունները անձի հոգևոր էության, ներքին հնարավորությունների, արժեքային կողմնորոշումների, նպատակներին հասնելու միջոցների ամբողջության կարևոր բաղադրատարրն են, որոնք պայմանավորում են անձի ստեղծագործական դրսևորումները և ուղղորդում են նրա կայացումը, համակողմանի ու ներդաշնակ զարգացումը:

Անձի ստեղծագործական կարողությունները բնութագրվում են մի շարք հատկանիշներով, որոնց մեջ կարևորվում են ստեղծագործական ինքնիրացման պահանջմունքն ու հնարավորությունները: Այդ հատկանիշներն են՝

- ստեղծագործականությունը,
- ստեղծագործական ներուժը,
- ստեծագործական երևակայություն և հնարամտությունը,
- ինքնատիպությունը,
- ինքնագնահատման և գնահատման կարողությունը,
- ռեֆլեքսիան:

Մենք առանձնացրել ենք նաև ստեղծագործող անձի հետևյալ հատկանիշները՝

- հուզական-դրդապատճառային ակտիվություն,
- մտածողության ճկունություն,
- տարածական և գեղարվեստական մտածողություն,
- հակում ստեղծագործ գործունեության նկատմամբ,
- իրերի և երևույթների խորքը թափանցելու հատկություն,
- ստեծագործական երևակայություն և հնարամտություն,

- ինքնատիպություն,
- ինքնագնահատման և գնահատման կարողություն:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրել ենք անձի ստեղծագործական ներուժի կառուցվածքային բաղադրիչները՝ ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, հնարամտությունը, ներըմբռնման ուժը, իրերի և երևույթների խորքը թափանցելու, ներքին կապերը բացահայտելու ձգտումը, գեղեցիկի զգացողությունը և այլն: Առանձնացված բաղադրիչները առկայությունը մենք դիտարկում ենք որպես անձի ստեղծագործական կարողությունների ձևավորվածության և զարգացման չափանիշներ:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունները հիմնականում զարգանում են ուսումնական գործընթացում, ուսուցչի առաջնորդող, ուղղորդող դերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և դրա համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների ապահովման պարագայում:

Գրականություն

1. Ասատրյան Լ.Թ. և ուրիշներ, Մանկավարժության պատմություն, Երևան, Արտագերս հրատ., 2020, 592 էջ:
2. Հինդլյան Հ., Անկեղծ էջեր, Կ,Պոլիս, Տպագրություն Յ.Մատթեոսյան, 1913, Ա. հատոր, 378 էջ:
3. Վարդումյան Ս.Տ. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, Երևան, «Այռեքս», 2003, 264 էջ:
4. Давыдов В.В. Теория развивающего обучения.-М.: Интор, 1996.-544 с.
5. Деятельный ум (Деятельность, Знак, Личность) / А.А. Леонтьев.-М.: Смысл, 2001.-380 с.
6. Зеличенко А.И. Психология духовноси. М.: Изд. Трансперсонального института, 196.-400 с.
7. Стругацкие А. и Б. Полдень, XXII век, изд. Детгиз.- 1962.
8. Трубайчук Л.В. Становление и развитие личности младшего школьника в образовательном процессе. Монография.-Челябинск: Изд-во ЧГПУ, 2000. – 242 с.

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА РАЗВИТИЕ ТВОРЧЕСКИХ НАВЫКОВ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

А. СААКЯН

«Рослин» академия

К числу факторов, влияющих на развитие творческих способностей, относятся особенности психологической, социально-личностной, речевой и творческой деятельности младших школьников, учет которых играет значительную роль в наблюдаемом процессе.

В результате наших исследований мы выявили структурные составляющие творческого потенциала человека: творческое мышление, воображение, изобретательность, сила понимания, стремление проникнуть в глубину вещей и явлений, открыть внутренние связи, чувство прекрасного. , и т. д. Наличие отдельных компонентов мы рассматриваем как критерии формирования и развития творческих способностей человека.

Творческие способности младших школьников преимущественно развиваются в образовательном процессе при ведущей, направляющей роли учителя, использовании интерактивных методов обучения и современных технологий и обеспечении для этого необходимых педагогических условий, о чем мы и поговорим. в следующем подразделе.

Ключевые слова: творчество, развитие, младшая школа, игра, творческая деятельность.

FACTORS AFFECTING THE DEVELOPMENT OF CREATIVE SKILLS OF ELEMENTARY SCHOOLCHILDREN

Amalia Sahakyan

«Roslin» Academy

Factors influencing the development of creative abilities include the characteristics of psychological, social-personal, speech, and creative activity of primary schoolchildren, the consideration of which plays a significant role in the observed process. As a result of our studies, we identified the structural components of a person's creative potential: creative thinking, imagination, ingenuity, the power of understanding, the desire to penetrate the depths of things and phenomena, to discover inner connections, the feeling of beauty, etc.

We consider the presence of separate components as criteria for the formation

and development of a person's creative abilities. The creative abilities of younger schoolchildren are mainly developed in the educational process, in the case of the teacher's leading, guiding role, the use of interactive teaching methods and modern technologies, and the provision of the necessary pedagogical conditions for this, which we will discuss in the next sub-chapter.

Keywords: creativity, development, junior school, game, creative activity.

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, հատոր 10, 2024

DOI: 10.61484/29538181-sj.10.24-08

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԵՎՐՈԶԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստինե Պետրոսյան

Ռոսլին արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիա

Մուտքագրված է՝ 10.05., գրախոսված է՝ 18.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Պատերազմի ժամանակ առաջացող նևրոզները էականորեն տարբերվում են խաղաղ ժամանակներում դրսևորվող վնասվածքային նևրոզներից իրենց սրությամբ: Սրությունն էլ կախված է մի շարք գործոններից՝ տարիք, սեռ, մտավոր զարգացվածության աստիճան, մարտական գործողություններին մասնակցության փորձ: Նևրոզի այս տեսակը կարող է ուղեկցվել հոգեսոմատիկ խանգարումներով, որը նաև կախված է ֆիզիկական վնասվածքի տեսակից: Պատերազմական նևրոզները նեյրոպաթիկ կամ հոգեբուժական ժառանգություն են, նախկին նյարդային կամ հոգեկան խանգարման հետևանք:*

Պատերազմի նևրոզը հավաքական հասկացություն է, որն օգտագործվում է ժամանակակից պատերազմող հասարակություններում՝ զինվորների նյարդային և հոգեկան խանգարումների ամբողջական բնորոշման համար: Տերմինն ինքնին ճշգրիտ չէ և եղել է բանավեճի առարկա: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հոգեբուժական միջավայրում իր առաջին կիրառությունից ի վեր՝ տերմինը մրցել է հոգեբուժական այլ անվանումների հետ, սակայն օգտագործվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ ռազմական հոգեբուժության մեջ: Այսպիսով, պատերազմի նևրոզների պատմությունը շատ առումներով վիճելի բժշկական խոսույթի և պրակտիկայի պատմություն է, որոնք առնչվում են պատերազմի ժամանակ հոգեբանական վնասվածքին:

Հիմնաբառեր. *Պատերազմի նևրոզ, հոգեմարմնական խանգարումներ, ֆիզիկական վնասվածք, ախտորոշիչ կատեգորիա, նեյրոպատիկ, հոգեբուժական, հոգեկան խանգարում:*

Ներածություն

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը բժշկական խոսույթը հիմնականում անտեսել է զինվորների հոգեկան տառապանքները: Սա չի նշանակում, որ զինվորները հոգեկան խնդիրներ չեն ունեցել: 1914թ-ի ամռանը պատերազմի բռնկվելուց անմիջապես հետո, բոլոր պատերազմող երկրների զինվորները, ռազմական իշխանությունները և բժիշկները հայտնվեցին անհանգստացնող ախտանիշների առջև, որոնց նախկինում չէին հանդիպել: Զինվորների մոտ բազմիցս նկատվել են գրգռվածության և հյուծված վիճակ, գլխացավեր և անքնություն: Պատերազմի ընթացքում բժիշկները ականատես դարձան ավելի ու ավելի ծանր դեպքերի: Շատ տղամարդիկ դողում էին ոտքից գլուխ, անզուսպ լաց էին լինում կամ ընկնում էին ապաթիայի մեջ, հայացքը

սևեռելով դեպի անորոշ հեռուն: Մյուսները տառապում էին խոսքի, տեսողության և լսողության խանգարումներով, հիշողության կորստով: Առաջին հայացքից թվում էր, թե նրանք լիովին կորցրել են վերահսկողությունը իրենց մարմնի նկատմամբ: Ինչպես ոչ մի այլ պատերազմում, առաջին համաշխարհային պատերազմը մեծ թվով զինվորների մոտ հոգեկան խնդիրներ առաջ բերեց, առաջացնելով զինվորականների և հոգեբույժների զանգվածային արձագանքը: Ավելին, այս պատերազմը հանգեցրեց սոմատիկ մեկնաբանությունների արագ անկմանը՝ արագացնելով հոգեբուժության ոլորտում գիտելիքների ընդլայնումը և տասնամյակներ շարունակ ազդելով հոգեբուժական տեսության և պատերազմի նևրոզների վերաբերյալ որոշումների կայացման վրա, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ [2]:

Առաջին համաշխարհային պատերազմի զինվորների հոգեկան անհանգստությունը բազմիցս նկարագրվել է գրական ինքնակենսագրականներում՝ անգլիացի, գերմանացի և ֆրանսիացի հեղինակների կողմից, ինչպիսիք են Ռոբերտ Գրեյվսը «Ցտեսություն բոլորին» /1929/, Էռնստ Յունգերը «In Stahlgewittern «Storm of Steel» /1920/» կամ Անրի Բարբյուսը, «Լե Ֆեու, /1916/»: [1,3]

Ջ Լինգերը գրել է. «Պետությունը վերցնում է մեր պատասխանատվությունը, բայց չի կարող մեղմել մեր վիշտը, մենք պետք է միայնակ տանենք այն, և այն հասնում է մեր երազների խորքը» [4]:

Մեթոդ

Հետազոտություն ժամանակ հիմնականում կիրառվել են օբյեկտիվ դիտման, հարցումների մեթոդները, ինչպես նաև տեսական գրականության վերլուծությունը: Արդյունքները դիտարկվել են 2020 թվականի Հայաստանի Հանրապետության պատերազմական գործողություններից հետո դրսևորվող երևույթների օբյեկտիվ դիտման միջոցով: Այն մեզ հնարավորություն է տվել ուսումնասիրել զինվորական սպաների, զոհված զինծառայողների ընտանիքների անդամների հոգեվիճակը:

Հետազոտության հիմնական նպատակն է՝ գտնել համարժեք լուծումներ հոգեբանական աշխատանքների կազմակերպման և խնդիրների հաղթահարման համար, ինչպես նաև ուսումնասիրել պատերազմի նևրոզի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները:

Հարցումներն անց են կացվել բանավոր, որոնց հիմնական հարցումները միտված են եղել բացահայտելու նախկինում տարած սթրեսների կապը ներկայիս հոգեվիճակի հետ:

Արդյունքներ.

50-60 տարեկան թվով 40 սպաների հետ կատարված հոգեբանական աշխատանքի ընթացքում օբյեկտիվ դիտումն և բանավոր հարցումները

հանգեցրել են այն եզրակացության, որ հետպատերազմական իրավիճակում սպաներն ունենում են պատերազմի նևրոզի հետ կապված սրացումներ՝ մարտական գործողություններին իրենց մասնակցության նախկին փորձառության դրվագների դրսևորման հետ կապված: Կորստի ցավը, ազդելով նրանց հոգեկան աշխարհի հետագա մարտական գործողությունների մասնակցության վրա, հիմնականում դրսևորվում է վրեժի առկայությամբ և կտրուկ գործողությունների կիրառմամբ, զբաղեցնելով հարձակողական դիրքեր անգամ ոչ անհրաժեշտ իրավիճակներում:

Զոհված զինծառայողների 50 ընտանիքի անդամների մոտ, հիմնականում զոհվածի կին, մայր, հայր, ընդգրկելով 30-60 տարեկան տարիքային խումբը, ունեն պատերազմի նևրոզի այնպիսի դրևորումներ, որոնք հիմնականում առնչվում են վշտի ապրման և հաղթահարման, շոկի դրսևորման փուլերի հետ: Հիմնական խնդիրը ինֆորմացիայի ընկալման հետ համակերպումն է ժամանակի ընթացքում, բայց վշտի ապրման ընյթացքում մարդիկ անցնում են հիմնական հինգ փուլերի միջով՝ հերքում, զայրույթ, սակարկում, դեպրեսիա և ընդունում: Վշտի վերապրման այս մոդելի հեղինակը շվեյցարա-ամերիկյան հոգեբույժ Էլիզաբեթ Կյուբլեր-Ռոսն է, ով 1969 թվականին իր «Մահվան և մահանալու մասին» գրքում գրել է այս ամենի մասին, անբուժելի հիվանդների հետ իր կատարած աշխատանքի արդյունքում:

Այստեղ մենք կարող ենք առանձնացնել հիմնական հոգեբանական առանձնահատկությունները՝ կապված պատերազմի նևրոզի հետ, որոնք դրսևորվում են երբեմն վարքային, երբեմն հուզական պոռթկումներով:

Պատերազմի նևրոզի հոգեբանական առանձնահատկություններից մեկն այն է, որ կարող է առաջանալ զանգվածային զոհման վախ, տագնապ, ազգին սպառնացող վտանգի մասին մտքեր, որոնք առաջացնում են անպաշտպանության զգացում, հիասթափություն տեղի ունեցած իրադարձություններից: Եթե նախկին պատերազմի ժամանակ մարդիկ ինչ-որ վնասվածքներ են ունեցել, ապա դրանք կարող են վերակտիվանալ, ակտուալանալ, վերածվել կրկնավնասումների (ռետրավմատիզացիա), և կարող է լինել հակառակը՝ մարդիկ դառնան ավելի քիչ խոցելի:

Չ. Ֆիլգեյսը համարում է, որ վնասվածք տարած անձը մտնում է «վնասվածքի վերապրման մոդելի» մեջ, որը բնորոշվում է պաթոլոգիական ախտանշանների համակարգով. գիտակցության փոփոխված վիճակներ, գերտագնապայնություն, գերզգայնություն, հետապնդման մտքեր, նյարդային համակարգի գերգրգռվածություն և այլն: [2,3]

Պատերազմի նևրոզի դրսևորման հիմնական առանձնահատկություններն են՝ վարքային, հուզական, մտավոր գործունեության փոփոխություններ, որոնք ունակ են մարդուն պահել հոգեկան լարված իրավիճակում: Այս ամենը կարող է պահպանվել տևական ժամանակ և, իհարկե, սրանալ կրկնվող հուզական ապրումների դեպքում:

Քննարկում

Հետազոտության ուժեղ կողմը. կատարելով պատերազմով անցած 50-60 տարեկան 40 սպաների և զոհված զինծառայողների ընտանիքների 30-60 տարեկան անդամների հարցման ուսումնասիրություն, եկել ենք եզրահանգման, որ առավել արտահայտված են վշտի ապրման հոգեբանական շոկի փուլային հաղթահարման մեխանիզմները ներքին հույզերի հիման վրա: Որպես թույլ կողմ կարող ենք նշել մեր երկրում անընդհատ կրկնվող տարերային աղետները, պատերազմները, հոգեբանական գրոհի տարաբնույթ տեսակները՝ կապված ամբոխի հոգեբանության հետ, որը նպաստում է հոգեբանական շոկի կտրուկ սրացմանը և հասարակական գերհուզական վարքային դրսևորումներին, ինչպես նաև հարմարման մեխանիզմների խաթարմանը:

Եզրակացություն

Պատերազմի նևրոզի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների հետազոտության հիման վրա հանգում ենք հետևյալ եզրակացություններն՝

1. Պատերազմ վերապրած մարդիկ, ի դեմս մարտական գործողությունների մասնակցության փորձառություն ունեցող սպաների և հարազատի կորուստ ունեցած ընտանիքների անդամների, ունեն նևրոզների հոգեբանական դրսևորման այնպիսի առանձնահատկություններ, որոնք հիմնվում են իրենց անալիտիկ փորձի և անձնային առանձնահատկությունների վրա:
2. Պատերազմներ, արտակարգ իրավիճակներ վերապրած երկրներում նպատակահարմար է ստեղծել մասնագիտական հատուկ խմբեր, որոնք կաշխատեն հասարակական տարբեր սոցիալական շերտերի հետ և կապահովեն հոգեբանական իրավիճակի կայունությունը:
3. Կարևոր է ազգաբնակչությանը ցուցաբերվող հետպատերազմական հոգեբանական աջակցությունը, որը կարող է նպաստել առողջ հասարակության ձևավորմանը, խուսափել հասարակութայն մեջ դիտարկվող անցանկալի երևույթներից:

Գրականություն

1. Yaramishyan V.B. ''Difficulties of socio-psychological adaptation of new recruits to military service and ways to overcome them", dissertation for the scientific degree of candidate of psychological sciences, Academy of Medical Sciences Library, Yerevan, 2009.
2. Problems of military psychology, Republican scientific conference (reports and articles), Yerevan, 2013, p. 275.
3. Karayani I.G., Syromyatnikov I.V., Applied military psychology - St. Petersburg:

Peter, 2006., p. 480.
4. Dillon, Frederick: Treatment of War Neurosis, The Lancet, No. 6132, CCXL, March 8, 1941, p. 331

PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF WAR NEUROSIS

Kristine Petrosyan
«Roslin» Academy of Arts and Humanities

Wartime neuroses differ significantly from peacetime trauma neuroses in their sharpness. Severity also depends on several factors: age, gender, degree of mental development, the experience of participating in combat operations. This type of neurosis can be accompanied by psychosomatic disorders, which also depend on the type of physical injury. War neuroses are a neuropathic or psychiatric inheritance, the result of a previous nervous or mental disorder. War neurosis is a collective term used in modern warring societies to describe the full range of nervous and mental disorders of soldiers. The term itself is imprecise and has been the subject of debate. Since its first use in a psychiatric setting during World War I, the term has competed with other psychiatric names but was used during World War II in military psychiatry. Thus, the history of war neuroses is in many ways a history of contested medical discourse and practice related to psychological trauma during war.

Keywords: War neurosis, psychophysical disorders, physical injury, diagnostic category, neuropathic, psychiatric, mental disorder.

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ВОЕННОГО НЕВРОЗА

Кристина Петросян
Академия искусств и гуманитарных наук «Рослин»

Неврозы военного времени существенно отличаются от травматических неврозов мирного времени своей остротой. Тяжесть также зависит от ряда факторов: возраста, пола, степени умственного развития, опыта участия в боевых действиях. Этот вид невроза может сопровождаться психосоматическими расстройствами, что также зависит от вида физической травмы. Военные неврозы — это невропатическое или психиатрическое наследование, результат предшествующего нервного или психического расстройства. Военный невроз — собирательный термин, используемый в

современных воюющих обществах для описания всего спектра нервных и психических расстройств солдат. Сам термин неточный и является предметом дискуссий. С момента своего первого использования в психиатрической практике во время Первой мировой войны этот термин конкурировал с другими психиатрическими названиями, но использовался во время Второй мировой войны в военной психиатрии. Таким образом, история военных неврозов во многом представляет собой историю спорных медицинских дискурсов и практик, связанных с психологическими травмами во время войны. С точки зрения истории медицины в центре внимания оказались такие вопросы, как то, как врачи воспринимали влияние войны на психику, как формировались диагностические категории и как применялись терапевтические меры. Исследования в области истории культуры также вносят важный вклад в понимание военного невроза. Опираясь на широкий спектр источников, таких как письма с фронта и записи пациентов, а также фильмы, романы и популярная литература, культурная история военного невроза подчеркивает человеческий опыт, символизирует и повествует о страданиях и психологических особенностях солдат.

Ключевые слова: Военный невроз, психофизические расстройства, телесные повреждения, диагностическая категория, нейропатические, психиатрические, психические расстройства.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-09

ՄԱՐՏԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

Արսեն Զազյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան,

Մուտքագրված է՝ 30.05.24, գրախոսված է՝ 16.06, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Մարտարվեստները սպորտի տարեգրության մեջ ի սկզբանե ներառված էին որպես ինքնուրույն գործունեություն, որն ապահովում էր լրացուցիչ ֆիզիկական ակտիվություն և տեխնիկայի որոշակի տարրեր կիրառելու մասնագիտացված մոտեցում: Հետագայում ի հայտ եկան մեթոդական ծրագրեր, որոնք հնարավորություն տվեցին հետադարձ կապով գնահատել մարզվողների գործողությունները վարժության ընթացքում, որոնց մեջ միաժամանակ ներառվեցին մարզվողի մի շարք կենսական գործառույթները: Վերապատրաստման մեթոդի կիրառումը դասերի ժամանակ կարող է զգալիորեն մեծացնել շարժիչ գործողությունների ծավալը ուսումնական գործընթացում: Եթե ավելի շատ ուշադրություն դարձվի գործողությունների աստիճանական ձևավորման տեսությանը, ապա հնարավոր կլինի դասակարգել և գրանցել ուսանողի աճը ինչպես սպորտում, այնպես էլ անհատական զարգացման մեջ:*

Ուսանողների ուսուցման ոչ ավանդական մեթոդների շրջանակը չի սահմանափակվում միայն մարտարվեստի պարապմունքներով: Պարապմունքներին զուգահեռ կիրառվում է նաև բուժական մարմնամարզություն:

Հիմնաբառեր. *մարտարվեստներ, ֆիզիկական դաստիարակություն, սպորտ, մեթոդներ, տեխնիկական հնարքներ, ուսուցողական մարզումներ, ֆիզիկական վարժություններ, ուսանող:*

Ֆիզիկական վարժությունների կազմակերպված վերապատրաստման հիմնական ձևը ուսումնական հաստատություններում ֆիզկուլտուրայի դասերն են, որոնք հասկացվում են որպես ուսանողի շարժիչ հմտությունների զարգացում: Հիմնական խնդիրը, որը որոշում է ֆիզիկական դաստիարակության կարևորությունը որպես համապարփակ զարգացման հիմք՝ առողջ, ուժեղ, փորձված ուսանողի ձևավորումն է, ով լավ վերահսկում է իր շարժումները, տիրապետում է իրավիճակին և ունակ է մշտապես սովորելու և կատարելագործվելու: Կրթության և ֆիզիկական դաստիարակության ավանդական համակարգը թեև հաստատում է ֆիզկուլտուրայի համապարփակ գործընթացի սկզբունքը, միևնույն ժամանակ համապատասխան հնարավորությունների կարիք ունի դրա նպատակային կազմակերպման համար: Այս առումով հակասություն կա ուսանողի անձի ֆիզիկական զարգացման պահանջների և կրթության ու ֆիզիկական պատրաստվածության ժամանակակից համակարգի միջև:

Ֆիզիկական դաստիարակության ժամանակակից մակարդակը պահանջում է երկարաժամկետ և քրտնաջան աշխատանք՝ ուղղված ֆիզիկական որակների զարգացմանը, տեխնիկական հմտությունների յուրացմանն ու հոգեբանական կայունության զարգացմանը: Ուսումնական և վերապատրաստման դասընթացների բովանդակությունը, ձևը, մեթոդները և կազմակերպումը երկար տարիների նախապատրաստման ընթացքում էապես փոխվում են, անփոփոխ են միայն ֆիզիկական դաստիարակության միջոցների և մեթոդների վերաբերյալ ընդհանուր դրույթները:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել բուհերում մասսայականացված մարտարվեստի բազմաթիվ տեսակների (ըմբշամարտ, բռնցքամարտ, կարատե, ձյուդո, ուշու և այլն) ներկայացվածությունը դինամիկային և զարգացման մակարդակին:

Ինքնապաշտպանության այս ձևերը բուհերում զարգանում են մարզիչ-մանկավարժների խանդավառության շնորհիվ: Հայտնի է, որ մարտարվեստները ֆիզիկական զարգացման հզոր միջոց են՝ ինքնապաշտպանական հմտությունների մարզում, ֆիզիկական որակների համակողմանի զարգացում, ուժ, արագություն, ճարպկություն, համակարգում, ինչպես նաև հանկարծակի փոփոխվող իրավիճակներին արագ արձագանքելու կարողություն: Մենապայքարային մարզաձևերը ներառում են մրցակցային գործողությունների լայն շրջանակ: Բացի հակառակորդի հետ անմիջական կոնտակտից, դրանք ներառում են մարտական շարժումներ տեխնիկական միջոցներով և առանց դրանց:

Շատ երկրներում սպորտը հանդիսանում է կյանքի շատ կարևոր օղակ: Սպորտով զբաղվում են գրեթե բոլորը, սակայն, այն բնութագրելը հեշտ չէ: Սա բացատրվում է նրանով, որ «սպորտ» հասկացությունը իր մեջ ներառում է շատ տարբեր տարրեր, որոնք իրական կյանքում շատ քիչ ուշադրության են արժանանում: Սպորտը ավելորդ ճոխություն չէ, այլ մարդկության զարգացման համար կարևոր դպրոց: Այն նպաստում է մարդու բազմակողմանի զարգացմանը [3]: Ուսանողական սպորտի տարբերակիչ առանձնահատկությունը նրա կապվածությունն է ուսանողի հիմնական գերիշխող կրթական և ճանաչողական գործունեությունից: Հետևաբար, ուսանողների շրջանում սպորտային գործունեությունը կարող է ձեռք բերել հիմնական ֆիզիկական պատրաստվածության միաձուլման բնույթ՝ պրոֆեսիոնալ-կիրառական սպորտի հետ: Բուհերի ուսանողների ֆիզիկական դաստիարակության կառուցվածքում կա ֆիզիկական որակների, շարժիչ կարողությունների և հմտությունների նպատակային զարգացման և մասնագիտական-կիրառական ֆիզիկական պատրաստվածության խնդիրների լուծման համար միջոցների, մեթոդների և տեսակների լայն շրջանակ: Ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացում առանձնահատուկ տեղ պետք է հատկացվի սպորտային մասնագիտացման բազմաթիվ տեսակների

շարժիչ ներուժի ձեռքբերմանը, մրցումներին մասնակցելուն: Ֆիզիկական որակները զարգացնելու համար ուսանողները պետք է կատարեն մեծ ծավալով և ինտենսիվությամբ ուսուցողական աշխատանք: Նման աշխատանքի ընթացքում ծանրաբեռնվածությունը մարմնի վրա շատ մեծ է, սակայն, դրա արդյունքները միշտ չէ, որ ուղիղ համեմատական են ծախսված ջանքերին: Մեծամասամբ օգտագործվում են հատուկ նախապատրաստական վարժություններ, որոնք ուղղված են մկանային խմբերի զարգացմանը և որոշիչ դեր են կատարում բուհական ծրագրի կրթական բաժնում: Ֆիզիկական որակների զարգացման և առավելագույն արդյունքների հասնելու հետ մեկտեղ որոշակի միջոցի կամ վարժությունների մեթոդի կիրառման ազդեցությունը նվազում է և հետագայում մնում է այդ մակարդակի վրա: Ուսումնական ծրագրի յուրաքանչյուր բաժնի հմտությունների ուսուցման և հմտությունների զարգացման համար տրված ժամերի սահմանափակ քանակը նպաստում է մարզվածության նվազմանը: Արևելյան մարզաձևերի ուսուցման հարուստ միջազգային փորձը ցույց է տվել, որ գործընթացում գլխավոր գործող անձը լավ պատրաստված, մարտարվեստին գերազանց տիրապետող մարզիչն է, որի ձեռքի տակ մարզվողը կարող է հասնել մեծ հաջողությունների: Միայն նա կարող է դնել այն ճիշտ տեխնիկան, որը կիրառելու է մարզիկը (պաշտպանություն, հարված, տեղաշարժեր և այլն), ուշադրություն դարձնի մարզվողի թույլ տված սխալներին, պատասխանի այն բոլոր հարցերին, որոնք կծագեն մարզումների ընթացքում [4]:

Համաձայն ժամանակակից սոցիալ-տնտեսական կարիքների, նրա հետագա զարգացման և հանրակրթության էության արդյունքի՝ բուհերում ֆիզիկական դաստիարակության նպատակն է նպաստել ուսանողի համակողմանի զարգացմանը: Մարտարվեստի միջոցով ուսանողի համակողմանի զարգացման վրա կենտրոնացումը պահանջում է տիրապետել ֆիզիկական դաստիարակության հիմունքներին և մարտարվեստի հատուկ վարժություններին, որոնց բաղադրիչներն են ամուր առողջություն, լավ ֆիզիկական զարգացում, շարժիչ կարողությունների օպտիմալ մակարդակ, գիտելիքներ և հմտություններ ֆիզիկական դաստիարակության և մարտարվեստի բնագավառում: Այս նպատակին կարելի է հասնել հետևյալ հիմնական խնդիրների լուծման միջոցով.

- առողջության խթանում, նորմալ ֆիզիկական զարգացման խթանում մարտարվեստի միջոցով,
- կենսական շարժիչ հմտությունների ուսուցում,
- շարժիչ կարողությունների զարգացում մարտարվեստի հատուկ վարժություններով,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերում,
- ֆիզիկական վարժություններով ինքնուրույն զբաղվելու անհրաժեշ-

տության և կարողության դաստիարակում, դրանց գիտակցաբար կիրառումը հանգստի, մարզումների, կատարողականի բարելավման, ինքնապաշտպանական հմտությունների ձեռքբերման և առողջության բարելավման նպատակով,

- բարոյական և կամային որակների նպաստում:

Մարտարվեստի առաջին դասերը վերաբերվում են ապահովագրության տարերրի ուսումնասիրությանը, քանի որ կանգնած դիրքի բոլոր տեխնիկաները կապված են հարձակվողի և հարձակվածի անկման հետ: Միևնույն ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում հենաշարժողական համակարգի մարզմանը: Յուրաքանչյուր դաս ներառում է ինչպես ուսուցման, այնպես էլ մարզման տարրեր: Առաջին դասերին շեշտը դրվում է ուսուցման վրա, իսկ հաջորդ դասերին՝ վերապատրաստման: Հիմնական աշխատանքի հետ կապված, մարզումները թույլ են տալիս ընդլայնել շարժումների շրջանակը, բարձրացնել մկանների կարողությունը: Շարժումներն այդ դեպքում ավելի արագ են դառնում. Բացի այդ, կանխվում են հոդերի տեղաշարժերը, մկանների և կապանների ոլորումները [1]:

Մարզումները պետք է սկսել հեշտ վարժություններով և աստիճանաբար անցնել ավելի բարդ վարժությունների: Դասերի ընթացքում ուսանողները դասավանդողից պետք է ստանան տեխնիկաների ճիշտ և երկար հիշվող պատկերացումներ: Դասի նյութը պետք է դասակարգել ըստ հայտնի կանոնի՝ պարզից բարդ, հեշտից դժվար, հայտնիից անհայտ: Դասի կառուցվածքի հիմնական մասը կարող է լինել պարզ կամ բարդ՝ նայած թե որն է նպատակը: Հնարքները դասավանդվում են հետևյալ կարգով.

Դասավանդողն ամբողջովին ցուցադրում և բացատրում է հնարքը սովորական տեմպով, այնուհետև ուսանողների ուշադրությունը դանդաղ կենտրոնացնում է հիմնական կետերի վրա: Նման ընդհանուր ծանոթությունից հետո, նա ցուցադրում է հնարքը մաս առ մաս և միևնույն ժամանակ ուշադրություն է դարձնում դրա իրականացման առանձնահատկությունների և հնարավոր սխալների վրա: Նման մոտեցումը թույլ է տալիս, որ ուսանողները արագ տիրապետեն ուսուցանվող հնարքին:

Ուսանողները տեխնիկան կատարում են չդիմադրող մարզընկերոջ դեմ, քանի դեռ չեն տիրապետում այն ամբողջությամբ և տեխնիկապես ճիշտ:Հնարքի կատարման տեխնիկան ամրանում և այնուհետև բարելավվում է դիմադրող մարզընկերոջ հետ հետագա մարզումների ժամանակ:

Մարտարվեստի տարրերի ուսուցումը կատարվում է մանկավարժության սկզբունքներով՝ գիտակցություն և ակտիվություն, համակարգվածություն և հետևողականություն, տեսանելիություն և մատչելիություն: Մարտարվեստի դասերը պահանջում են լավ ֆիզիկական պատրաստվածություն. ակրոբատիկ մարզումներ՝ ճարպկություն զարգացնելու համար, կշիռներով վարժություններ՝ ուժ զարգացնելու համար, երկար տարածությունների վազքեր՝ տոկունություն

զարգացնելու համար: Դասավանդողը դասերը պետք է կազմակերպի այնպես, որ հստակ սահմանազատվեն ուսանողների նախապատրաստումը հանձնարարված առաջադրանքների կատարումը, դրանց իրականացումը և դասի ավարտը: Դրանից ելնելով՝ դասը պետք է ներառի ներածական, հիմնական և եզրափակիչ մասեր:

Դասի ներածական մասում խնդիր է դրվում ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել առաջիկա մարզման վրա և տաքացնել մարմինը: Ներածական մասի հիմնական նպատակն է ընդհանուր նախապատրաստական վարժությունների կիրառմամբ բարձրացնել բոլոր մկանախմբերի ֆունկցիոնալ ակտիվությունը: Մարդը, գիտակցելով վարժությունների ազդեցությունը, սկսեց ընդօրինակել այն, ինչ իրեն անհրաժեշտ էր իր աշխատանքային գործունեության մեջ: Գործողությունները, որոնց հիման վրա առաջացան ֆիզիկական վարժությունները, սկսեցին ուղղակիորեն ազդել ոչ թե աշխատանքի օբյեկտի, այլ անձի վրա: Ֆիզիկական վարժությունների օգնությամբ մարդիկ աշխատանքային պրակտիկայում սկսեցին նախապատրաստվել իրական գործողություններին [5]: Ոչ բոլոր շարժումներն ու գործողությունները կարելի է անվանել ֆիզիկական վարժություն: Ֆիզիկական վարժությունները շարժիչ գործողությունների տեսակներ են, որոնք ուղղված են ֆիզիկական դաստիարակության նպատակների իրականացմանը և ենթակա են դրա օրենքներին: Այս սահմանումը ընդգծում է ֆիզիկական վարժությունների ամենակարևոր տարբերակիչ առանձնահատկությունը՝ գործողությունների ձևի և բովանդակության համապատասխանությունը ֆիզիկական դաստիարակության էությանը, այն օրինաչափություններին, որոնց համաձայն այն տեղի է ունենում [6]: Վարժությունները, որոնք պարապմունքի պարտադիր մասն են կազմում հետևյալն են.

- ճկունության վարժություններ,
- վարժություններ ուժի զարգացման համար
- հավասարակշռության վարժություններ,
- շարժունության վարժություններ,
- վարժություններ կապանների ամրապնդման համար,
- վարժություններ շարժումների արագությունը զարգացնելու համար,
- ինքնապահովագրության և ապահովագրության վարժություններ:

Տեխնիկական հնարքներ կիրառելիս՝ բոլոր տիպի մարզական մենամարտերում կարևոր է շնչառության դերը: Կարգավորվող շնչառության օգնությամբ հնարավոր է ոչ միայն թուլացնել հակառակորդի հարվածի ազդեցությունը, այլ նաև ուժեղացնել սեփական հարվածի ուժը: Մարզումների ժամանակ այս բանի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Անհրաժեշտ է լավ իմանալ, որ հարձակման և պաշտպանության բոլոր տարրերը կատարվում են արտաշնչելիս: Եթե արհամարհվում է այս սկզբունքը, ապա տեխնիկական

հնարքի ժամանակ արագությունը նվազում է [3]: Հարվածելիս մարզիկը պետք է հետևի ճիշտ շնչառությանը, այլապես կունենա շնչառության անկում և թուլություն:

Մարտական արվեստների բազմադարյան զարգացման, դրանց հիմքերի և ավանդույթների հիման վրա ստեղծվել են մեծ թվով մարտական համակարգեր, որոնք թեև արտաքնապես նման չեն միմյանց, սակայն ունեն ընդհանուր փիլիսոփայական հիմքեր և մանկավարժական սկզբունքներ, որոնք ուղղված են ֆիզիկապես ամուր և հոգեպես կայուն անհատի ձևավորմանը [7]:

Եզրակացություն

Մարտարվեստները ֆիզիկական զարգացման հզոր միջոց և ինքնապաշտպանական հմտությունների մարզում է: Այն ապահովում է ֆիզիկական որակների համակողմանի զարգացում, ինչպես նաև հանկարծակի փոփոխվող իրավիճակներին արագ արձագանքելու ունակություն, ինքնազարգացում և վստահություն: Այդ իսկ պատճառով, դրանք պետք է օրգանապես զուգակցվեն ապագա մասնագետների ֆիզիկական դաստիարակության ավանդական միջոցների հետ՝ անհատի մասնագիտական ֆիզիկական կուլտուրայի ձևավորման գործում: Նրանք, ովքեր զբաղվում են մարտարվեստներով, պետք է լինեն անվախ, աշխարհ մտնեն ազնիվ ու համարձակ և մարտում լինեն ուժեղ [2]: Ուսումնական պարապմունքների կազմակերպումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով մարտարվեստների առանձնահատկությունները՝ գրագետ օգտագործելով մարզումների միջոցներն ու մեթոդները, հնարավորինս անհատականացվի մարզումների գործընթացը՝ դրանով իսկ դրական ազդեցություն ունենալով մոտիվացիոն ոլորտի և ուսանողների ճանաչողական գործունեության վրա:

Գրականություն

1. Чень Яоцза, Входные ворота: вводный курс ушу, ПО “Полиграфист”, 1989, ст.5
2. Масутацу Ояма. Это каратэ, М.: Фаир-Пресс, 2002, 320с.
3. Ավագյան Լ.Վ., Թաեքվոնդո, Երևան-2016, էջ 4
4. Սարգսյան Ա., Արևելյան մարտարվեստ և գլոբալ թաեքվոնդոյի ուսուցման մեթոդիկա, «Զանգակ-97», 2006, էջ 5
5. Ашмарин Б.А., Теория и методика физического воспитания, М.: Просвещение, 1990, 287с.
6. Матвеев Л.П., Теория и методика физической культуры, М.: Физкультура и спорт, 1991, 543 с.
7. Գևորգյան Վ., Կարատեդո, «Ոսկան Երևանցի», 2003, էջ 3

TEACHING MARTIAL ARTS TO STUDENTS AS AN ALTERNATIVE TO PHYSICAL TRAINING

Arsen Zazyan
Yerevan «Haybusak» University, lecturer

Martial arts were originally included in the annals of sports as an independent that provided additional physical activity and a specialized approach to applying certain elements of technique. Later, methodical programs appeared which made it possible to evaluate the trainees' actions during the exercise with feedback, in which several vital functions of the trainee were simultaneously included. The use of the training method during lessons can significantly increase the volume of motor actions in the learning process. Suppose more attention is paid to the theory of gradual formation of activities. In that case, it will be possible to classify and record the student's growth in sports and personal development. The range of non-traditional methods of training students is not limited to martial arts training. Along with the training, therapeutic gymnastics is also used.

Keywords: martial arts, physical education, sport, methods, technical tricks, training exercises, physical exercises, student.

ОБУЧЕНИЕ СТУДЕНТОВ БОЕВЫМ ИСКУССТВАМ КАК АЛЬТЕРНАТИВА ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ.

Арсен Зазян
Ереванский Университет «Айбусак», преподаватель

Резюме. Боевые искусства изначально были включены в летопись спорта как самостоятельный вид деятельности, предполагающий дополнительную физическую активность и специализированный подход к применению тех или иных элементов техники. Позднее появились методические программы, позволяющие оценивать действия обучаемых во время упражнения с обратной связью, включающие одновременно ряд жизненно важных функций тренируемого. Использование метода обучения на уроках позволяет существенно увеличить объём двигательных действий в учебном процессе. Если больше внимания уделить теории постепенного формирования деятельности, можно будет классифицировать и фиксировать рост студента как в спортивном, так и в личностном развитии. Спектр нетрадиционных методов подготовки студентов не ограничивается обучением боевым искусствам.

ԻՐԱՎՈՒՆՔ

DOI: 10.61484/29538181-sj.10.24-12

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

[1,2] Գառնիկ Սաֆարյան, [1,2] Լիանա Մալխասյան

[1] Երևանի Հայբուսակ Համալսարան

[2] ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ

Մուտքագրված է՝ 12.04.2024, գրախոսված է՝ 13.05 ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Պետության և իրավունքի պատմական տիպերի հիմնախնդիրը հանդիսանում է պատմական առավել կարևոր և հանգուցային պահերից մեկը: Առանց դրա համարժեք լուծման անհնար է պարզել դրանց էության էվոլյուցիոն զարգացումը, դրանց սոցիալ-քաղաքական նշանակությունը, ինչպես նաև հասարակության քաղաքական համակարգում դրանց տեղի ու դերի փոփոխության ճիշտ ընկալումը:*

Հիմնաբառեր. *պետություն, իրավունք, պատմական տիպ, տիպաբանություն, հասարակություն:*

Պետության և իրավունքի խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունն անխուսափելիորեն ենթադրում է ուսումնասիրվող նյութի հանդեպ տարբերակված մոտեցման օգտագործում [1]: Դա ամենից առաջ նշանակում է դրանց դիտարկում ոչ միայն որպես պատմականորեն գոյություն ունեցած և ունեցող երևույթներ, դրանց ծագման ընդհանուր գծերի բացահայտում, այլև դրանց առավել կոնկրետ և պատմական իրականությանն առավել մոտ ուսումնասիրության կարևորություն: Տեսական և գործնական տեսակյունից շատ կարևոր է ոչ միայն պետության և իրավունքի տիպաբանության «ընդհանրապես» լրիվ և հստակ սահմանումը, այլ նաև թե ինչ առանձնահատկություններ ու գծեր ունեն դրանք և որպես սոցիալական ինստիտուտներ ինչով են տարբերվում այլ սոցիալական ինստիտուտներից: Պակաս կարևոր չէ նաև սահմանել, թե պետությունն ու իրավունքն ինչպիսին էին հասարուկության զարգացման տարբեր փուլերում, ինչպես էին հարաբերվում իրար և հասարակության զարգացման տարբեր փուլերում գտնվող պետական-իրավական ինստիտուտների հետ և, վերջապես, ինչ են դրանք իրենցից ներկայացնում արդի փուլում:

Այս և համանման շատ այլ հարցերի պատասխանը ինչպես մեզ, այնպես էլ ցանկացած հետազոտողի հանգեցնում է եզրակացության, որն անհրաժեշտ է պետության և իրավական համակարգերի ամբողջից առանձնացնել գոյություն

ունեցած և ապագայում ի հայտ եկած պետության և իրավունքի տիպերի կամ դասակարգումների համար:

Համաձայն իրավաբանական, փիլիսոփայական և սոցիոլոգիական գրականության մեջ ձևավորված կարծիքի՝ պետական և իրավական համակարգերի տիպաբանությանը կամ դասակարգումն իրենից ներկայացնում է օբյեկտիվորեն անհրաժեշտ, պետության և իրավունքի բնական-պատմական զարգացման ճանաչման օրինաչափ գործընթաց, որպես պետության և իրավունքի մեկ տեսակի՝ մեկ այլ տեսակով փոխարինմանը պատմականորեն անխուսափելի գործընթացի արտացոլում: Տիպաբանական մոտեցումը հանդիսանում է *պետության և իրավունքի զարգացման պատմական գործընթացի իմացության կարևոր ձևերից կամ միջոցներից մեկը:*

Ռուս հայտնի պատմաբան Վ.Օ. Կլյուշեսկին իրավացիորեն նշում էր որ «Մարդկային համակեցությունը համաշխարհային կեցության նույնպիսի փաստ է, ինչպիսին մեզ շրջապատող միջավայրը և այդ փաստի գիտական ճանաչումը, մարդկային մտքի նույնատիպ անխուսափելի պահանջ է, ինչպիսին այդ բնության կյանքի ուսումնասիրությունը: Մարդկային համակեցությունն արտահայտվում է տարբեր կապերում, որոնք կարող են անվանվել պատմական տիպեր և որոնք ծնվում, աճում և բազմանում են մեկը մյուսի փոխակերպում և, վերջապես, քայքայվում են և անհետանում: Այդ միությունների ծագումը, աճն ու փոփոխությունները դրանց կյանքի բոլոր պայմաններով և հետևանքներով հանդերձ, հենց այն է, ինչը մենք անվանում ենք պատմական զարգացման գործընթաց» [2]:

Պետության իրավունքի, ինչպես նաև ցանակացած այլ սոցիալական երևույթի, ինչպես նաև հասարակության պատմական զարգացման գործընթացի կարևորագույն առանձնահատկությունը դրա բնականությունն է (օբյեկտիվությունը), համընդհանուր բնույթը, անընդհատությունը,որն ուղեկցվում է զարգացման որոշ փուլերի առաջացմամբ, դրանց խիստ սահմանված փոխկապակցվածությունն ու հաջորդականությունը:

Ինչպես տվյալ, այնպես էլ այլ առանձնահատկությունների հաշվառումը հանդիսանում է նախադրյալ պատմական գործընթացի, պետության և իրավական համակարգերի տիպաբանության ճանաչման, իմացության անխտիր պայման:

Վերջինիս վերաբերյալ, որը լիովին բանականորեն և անխուսափելի ենթադրում է պետության և իրավունքի զարգացման տարբեր փուլերի, պատմական ցուցանիշների առկայություն, ինչպես նաև ենթադրում են, որ մարդկային հասարակության զարգացումը, դրա հետ միասին՝ պետության և իրավունքի զարգացումն անընդհատ, երկարաձգվող, օբյեկտիվորեն պայմանավորված բնական պատմական գործընթաց է:

Անդրադառնալով այս գործընթացին և «մարդկային համակեցության հաջողությունները»Վ. Օ. Կլյուչևսկին նշել է, որ «հաջորդել են ժողովուրդներ

ու սերունդներ, փոխվել են համակեցության կարգերը, բայց պատմական զարգացման թելը չի կտրվել, ժողովուրդներն ու սերունդները օղակներով միացել են, քաղաքակրթությունները հետևողականորեն հաջորդել են: Աստիճանաբար կուտակվում էր մշակութային հայտնի պաշարը, եզրակացնում է գիտնականը: Եվ այն, ինչ պահպանվել է բազմադարյան պաշարից, հասել է մեզ և մտել մեր գոյության կառուցվածքի մեջ, իսկ մեր միջոցով կանցնի նրանց, ովքեր կհաջորդեն մեզ» [3]:

Սակայն ինչպես մարդկային հասարակության, այնպես էլ պետության և իրավունքի զարգացման գործընթացը ոչ միայն օբյեկտիվ, այլև նաև սուբյեկտիվ գործընթաց է: Սույն դիտարկումը վերաբերում է ինչպես հասարակությանը, պետությանն ու իրավունքին իրենց պատմական ողջ ընթացքի հետ մասին, այնպես էլ դրանց առանձին բաղադրիչներին, զարգացման առանձին փուլերին:

Քանի որ այն, ինչը հաճախ կոչվում է մարդկային, իսկ այլ կերպ սուբյեկտիվ գործոն, անմիջական և ուղղակի կապ ունի, ամենից առաջ, ոչ թե պետության և իրավունքի զարգացման վերացական գործընթացի, այլ ցանկացած, լիովին որոշակի մեխանիզմի և իրավական համակարգի, յուրաքանչյուր հստակ սոցիալական խավի, դասի, մարդկային հասարակության, յուրաքանչյուր կոնկրետ պետության և իրավունքի զարգացման պատմության մեջ հետք թողած անձի հետ:

Օրինակ՝ նկարագրելով Ալեքսանդր Մակեդոնացու հերոսական արշավանքներն ու հաղթանակները, ընդգծելով հնադարյան հասարակության և պետության զարգացման պատմության մեջ նրա թողած խոր հետքը հույն հայտնի գրող և պատմաբան Պլուտարքոսը (մ.թ.ա 127-45թթ.) ընդգծում էր, որ նրա մեծությունն ու հնադարյան քաղաքակրթության վրա նրա թողած ազդեցությունը արտահայտվում է ոչ միայն նրանով, որ ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում նա ստեղծեց հզոր պետություն, որի հավասարը ոչ միայն մինչ այդ չկար, այլև ստեղծվել էին պետական-իրավական կյանքի ու մշակույթի հետագա զարգացման սոցիալական, մտավոր և այլ նախադրյալներ:

Այդ ընթացքում սկիզբ էր առնում հելլենական դարաշրջանը, որն Արևմուտքի և Արևելքի պատմական, մշակութային և այլ ավանդույթների համադրումն էր: Ըստ Պլուտարքոսի, հենց Ալեքսանդրի թագավորության շրջանը դարձավ շատ արվեստների ու տաղանդների ծաղկման դարաշրջան:

Սուբյեկտիվ գործոնը հսկայական ազդեցություն ուներ հասարակության կյանքի պետական-իրավական և այլ ոլորտների զարգացման վրա ոչ միայն մարդկության զարգացման պատմության վաղ շրջանի, այլև նրա հետագա ողջ փուլերի վրա [4]:

Խոսելով մասնավորապես Նապոլեոնի կառավարման ազդեցության մասին Ֆրանսիայի և այլ երկրների պետության և իրավունքի զարգացման

վրա, ֆրանսիացի հայտնի քաղաքական գործիչ, դիվանագետ, գրող՝ Ֆ. Շատոբրիանը գրել է. «Բոնապարտը մեծ է ոչ միայն իր խոսքերով, ճառերով ու գրագրություններով, այլ նաև ազատության հանդեպ իր սիրով»: Նա ստեղծեց կուռ պետություն, օրենսգրքեր (որոնք ընդօրինակել են շատ երկրներ) դատական ատյաններ, կառավարման հզոր, գործուն և խելացի համակարգ, որից չենք հրաժարվել նաև այսօր:

Բազում երկրների քաղաքական և հասարակական գործիչների, ինչպես նաև սոցիալական տարբեր շերտերի, դասերի ու խմբերի կյանքից ու գործունեությունից վերցված տվյալ օրինակներն ակնհայտորեն վկայում են, որ սուբյեկտիվ գործոններն օբյեկտիվների հետ միասին պետության և իրավունքի տիպաբանության, նաև այս երկու ոլորտների վրա, ունեցել և շարունակում են ունենալ հսկայական ազդեցություն [5]:Դա ոչ ժամանակավոր, ոչ լոկալ, այլ անընդհատ, ընդգրկուն, գլոբալ գործընթաց է:

Սակայն հանուն ճշմարտության հարկ է նշել, որ ոչ բոլոր հեղինակներն են կիսում տվյալ տեսակետը: Հայտնի փիլիսոփա՝ Կ. Պոպպերը ձգտում է, օրինակ, ապացուցել, որ «չկա մարդկության միասնական պատմություն, այլ կան պետական իշխանության տարրեր տեսակների հետ կապված բազում անվերջ պատմություններ»:

Պոպպերը համարում է, որ մարդկության համընդհանուր իրավական պատմությունը, եթե այդպիսին եղել է, պետք է լիներ բոլոր մարդկանց պատմությունը [6]:

Պոպպերի տեսակետը մեծամասամբ չեն կիսում ոչ հայրենական, ոչ արտասահմանյան հեղինակները:

Առաջին. գերակայում է պատմական գործընթացի համընդհանրության, անընդհատության և գլոբալության մասին կարծիքը, գործընթաց, որի շրջանակներում ընթանում է պետության և իրավունքի զարգացման գործընթացը, իրականացվում է դրանց տիպականացումը:

Երկրորդ. տիպավորման խնդրի լուծման ժամանակ չի կարելի մոռանալ, որ պետական-իրավական նյութի զարգացման գործընթացն անքակտելիորեն կապված է սոցիալական գոյի մշտական զարգացման, պետության և իրավունքի բովանդակության և նշանակության, ինչպես նաև դրանց կազմակերպման ու գործունեության հիմնական սկզբունքների ***արմատական փոփոխությանը*:** Օրինակ, երբ որպես պետության և իրավունքի ճորտատիրական տիպի կարևոր սկզբունքներից մեկը՝ հողի «ամրացված» գյուղացու կարգավիճակը, ապա որպես պետության և իրավունքի կապիտալիստական տիպի հիմնական սկզբունքներից մեկ արդեն հանդես է գալիս օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարության ձևական-իրավական սկզբունքը: Պետության և իրավունքի ֆեոդալական տիպի կարևոր սկզբունքներիդ մեկը եղել է վասալային ենթակայության սկզբունքը:

Եվ երրորդ, կարևոր է հաշվի առնել նան այն, որ պետության և

իրավունքի՝ մեկ աստիճանից **մյուսին անցման գործընթացը** պարունակում է պետական-իրավական երևույթների անընդհատության, էվոլյուցիոն զարգացման տարրեր՝ դրանց որակական և քանակական տարրերի հետ միասին կազմում են մեկ միասնական ամբողջություն:

Պետության և իրավունքի էվոլյուցիոն (աստիճանական) զարգացումը, որը հանդես է գալիս դրանցում քանակական և որակական փոփոխությունների աստիճանական կուտակման տեսքով և զարգացման հերթափոխականությամբ, որն իրենից ներկայացնում է պետական-իրավական երևույթների արագ, թռիչքաձև, որակական փոփոխություն, արտահայտվում են որպես դրանց բնական-պատմական գործընթացի երկու փոխկապակցված, օրգանապես ներդաշնակ, միմյանց փոխլրացնող կողմեր:

Պետության և իրավունքի էվոլյուցիոն զարգացումը կատարվում է, համաձայն գիտական գրականության մեջ ձևավորված կարծիքի, հիմնականում տվյալ երևույթների նույն տիպի շրջանակներում, միևնույն հասարակական-տնտեսական ֆորմացիայի սահմաններում: Պետության և իրավունքի հեղափոխական զարգացումը հանգեցնում է դրանց սոցիալ-դասակարգային էության, պետության և իրավունքի բովանդակության տիպի արագ և դրա հետ մեկտեղ՝ որակական այլ, արմատական փոփոխության, այլ՝ հաջորդ տիպի, հասարակական տնտեսական մեկ ֆորմացիայի փոխակերպման մյուսին:

Հարկ է նկատել, որ ոչ գիտական, ոչ էլ հասարակական-քաղաքական պրակտիկայում չկա «էվոլյուցիայի» և «հեղափոխության» միատեսակ ընկալում: Արևմտյան իրավաբանական և սոցիոլոգիական գրականության մեջ հեղափոխությունն ավանդաբար զուգորդվում է սոսկ «սոցիալական կառուցվածքում կամ նրա առավել կարևոր մասերում արագ, անսպասելի փոփոխությունների հետ»: Ընդ որում, ընդգծվում է, որ դրա ձևերը կախված են «կատարվող փոփոխությունների ծավալներից և արագությունից» և որ հեղափոխությունները «կարող են ուղեկցվել կամ չուղեկցվել հասարակական կյանքի անկարգություններով և ժամանակավոր կազմալուծմամբ» [7]:

Միևնույն ժամանակ գիտական գրականության մեջ հեղափոխությունը զուգորդվում է ոչ միայն բնության երևույթների, հասարակության կամ ճանաչողության գործընթացի ոչ միայն արագ, այլ նաև, ամենից առաջ որակական փոփոխություններով և զարգացմամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում այն բանի վրա, որ հեղափոխությունը հանդես է գալիս «որպես հաջորդականության, որակական թռիչքների ընդմիջում» և այն տարբերվում է էվոլյուցիայից և բարեփոխումից [8]:

Էվոլյուցիան (աստիճանական զարգացումը) ի հակադրություն հեղափոխության, անպայման դիտարկվում է որպես բնականոն, ժամանակի մեջ երկարաձգվող, որակական փոփոխություններ, որոնք տեղի են ունենում հասարակության, պետության, իրավունքի մեջ և շրջակա միջավայրում: Դա

փոփոխությունների գործընթաց է, որի «դեպքում զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլ օրգանապես կապված է յուրաքանչյուր նախորդի հետ», որի դեպքում «աճը կամ զարգացումը զուգորդվում է անընդհատությամբ և խորը հաջորդականությամբ» [9]:

Պետական-իրավական տեսության մեջ և քաղաքական պրակտիկայում միշտ չէ, որ հստակ սահմանազատվում են պետության և իրավունքի հեղափոխական և էվոլյուցիան ճյուղերի տարբերությունները: Ավելին, հաճախ քաղաքական և գաղափարախոսական նպատակներով ներկայացվում է որպես հեղափոխական: Որպես կանոն՝ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ձգտում են ընդգծել որևէ երկրում տեղի ունեցող այս կամ այն քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական բարեփոխումների հատուկ կարևորությունը:

Բացի դրանից, հաճախ պետության և իրավունքի փոխակերպումը, մեկ դասակարգից մյուսին անցումը ներկայացնող «հեղափոխությունը» փոխարկվում էր «հեղաշրջում» անվանվող այլ երևույթով: Հեղաշրջում նշանակում է իշխանության անցում (գրավում) իշխող դասակարգի մեկ մասից մյուսին, քաղաքական ընտրախավի մեկ խմբից կամ խմբակցությունից (ֆրակցիայից) մյուսին հակասահմանադրական, հաճախ բռնի կերպով:

Հեղաշրջումն, անկախ անվանումից (ռազմական, պետական, պալատական և այլն) չի հանգեցնում պետական տիպի անմիջական փոփոխության: Այն չի շոշափում պետական ողջ կարգի խորն ու էական շերտերը: Հեղաշրջմանը հետևում են պետական մեխանիզմում և նրա գործունեության մեջ մասնակի փոփոխություններ: Օրինակ՝ նկատի են առնվում պետական կառավարման, քաղաքական կամ պետական ռեժիմին, ներքին և արտաքին քաղաքական ուղղություններին վերաբերող փոփոխություններ:

Իրավաբանական և մասնավորապես քաղաքագիտական գրականության մեջ վաղուց ձևավորվել է կարծիք, որ անկախ իր գոյության և գործունեության յուրահատկություններից, պետությունն ու իրավունքն անցնում են զարգացման պատմականորեն ձևավորված ճանապարհ՝ ստրկատիրականից – սոցիալիստական, որոնց միջև, գտնվում են ֆեոդալական և կապիտալիստական տիպերը: Սա բացառապես մարքսիստական հայեցակարգային մոտեցում է:

Կան պնդումներ, որ պետության զարգացման գորևծընթացը տեղի է ունենում **վերընթաց գծով** և ըստ բնույթի այն անշրջելի գործընթաց է: Պետական-իրավական պրակտիկան լրիվ չի հաստատում սույն դրույթը: Այդ դրույթը լիովին հաստատվում է միայն առաջին մասով, ուր խոսքը գնում է վերընթաց գծով պետության զարգացման ընդհանուր միտման մասին: Սակայն միայն մասնակիորեն դա արվում է երկրորդ մասում:

Ըստ քաղաքակրթական հայեցակարգային մոտեցման՝ պետության առաջընթաց զարգացումը (վերընթաց գծով) արտահայտվում է այն բանում, որ պետության՝ մեկ տիպից, դրա մեկ էական բնութագրումից մյուսի

փոխակերպման չափով ամրապնդվում են դրա կազմակերպման ու գործունեության ժողովրդավարական սկզբունքները, ընդլայնվում են դրա սոցիալական հիմքերը, մեծանում է իրավունքների և ազատությունների շրջանակը, որը շնորհվում է պետության հպատակներին և քաղաքացիներին: Վերընթաց գծով պետության զարգացման մասին վկայում են նաև այլ հանգամանքներ՝ պետական մեխանիզմի կատարելագործումը, նրա գործունեության սահմանադրական-իրավական հիմքերի ընդարձակումը, պետության, հասարակության և սոցիալ-տնտեսական այլ ինստիտուտների փոխկապակցվածության և փոխգործակցության մեխանիզմի կատարելագործումը:

Ինչ վերաբերում է պետության և իրավունքի զարգացման գործընթացին անշրջելիությանը, դրանց տիպերի փոփոխման հաջորդականությանը, ապա հարկ է դիտարկել հետևյալը: Անկասկած, ճիշտ են այն գիտնականները, որոնք պնդում են, թե ինչպես չի կարելի կանգնեցնել հասարակության, դրա հետ մեկտեղ նաև պետության և իրավունքի բնական-պատմական զարգացումը, ինչպես չի կարելի կանխարգելել դրանց՝ ցածր աստիճանից ավելի բարձրի, մեկ տիպից մյուսի անցումը, քանզի դա օբյեկտիվ գործընթաց է, այնպես էլ չի կարելի շրջել պատմությունը և ետ գնալ պետության և իրավունքի զարգացման հաջորդական փուլերից դեպի դրանց նախորդները:

Հասարակության, պետության և իրավունքի զարգացման գործընթացի անշրջելիությանը վերաբերող նույն տեսական դրույթը ենթակա չէ ոչ մի կասկածի: Դրա ճշմարտացիությունը բազմիցս հաստատվել է կյանքով, հասարակական և պետական-իրավական պատմական զարգացման փորձով:

Սակայն սույն դրույթը չի կարելի բացարձականացնել, քանզի հասարակության, պետության և իրավունքի զարգացման օբյեկտիվ, դետերմինացված բնույթը համարժեք չէ ճակատագրական, նախօրոք ամեն ինչում կանխորոշված բնույթին: Մարդկային հասարակության, դրա հետ մեկտեղ նաև պետության և իրավունքի զարգացման գործընթացում, ինչպես հայտնի է, կա ոչ միայն անհրաժեշտություն, այլև պատմական պատահականություն, որը կարող է որոշ կոնկրետ դեպքերում հանգեցնել հակադարձ շարժման, տվյալ երկրում պետության և իրավունքի առաջընթաց զարգացման դանդաղեցման, հետընթացի: Նման մի քանի օրինակներ տալիս է ֆաշիզմը, որի հաստատումն ու գոյությունը ցանկացած երկրում անխուսափելիորեն կապված է եղել տվյալ երկրում պետության և իրավունքի վերընթաց զարգացման գործընթացի դանդաղեցման, պետական-իրավական կյանքի լճացման, հարաբերական հետընթաց շարժման հետ:

Պետության և իրավունքի զարգացման գործընթացի անշրջեփության բացարձականացման անթույլատրելիությունը հաստատվում է նաև նրանով, որ վերջին տարիներին Ռուսաստանում, և մի շարք նախկին խորհրդային հանրապետություններում «կոմունիզմի» փլուզումից հետո ի հայտ եկավ պետական-իրավական մեխանիզմի ոչ թե «սոցիալիստականից» դեպի

«հետկոմունիստական» վերընթաց զարգացում, ինչպես դա պետք է բխեր գործընթացի անշրջելիության դրույթից, այլ տեղի ունեցավ միանգամայն հակառակ զարգացում:

Դա հաստատվում է ոչ միայն տեսական սահմանումներով և «վերակառուցման» ալիքի վրա իշխանության եկած առաջնորդների՝ «սոցիալիզմից դեպի կապիտալիզմ» հակառակ ճանապարհ անցնելու անհրաժեշտության մասին հայտարարություններով, այլև այդ երկրներում պետական-իրավական և տնտեսական շինարարության փորձով:

Այն եղել և մնում է այնպիսին, որ դեպի ապագա, նոր, ժամանակին համապատասխանող պետական-իրավական և տնտեսական համակարգերի որոնման փոխարեն թեթևամտորեն դիմում է անդառնալի անցյալին, մտացածին «սոցիալիստական զարգացումից» վաղուց պատմության բեմից անհետացած վայրի կապիտալիզմի անցման:

Ասվածի լույսի ներքո, մասնավորապես, դժվար է չհամաձայնել բելգիացի պրոֆեսոր Կ. Մալֆիլդի կարծիքի հետ այն մասին, որ հաճախ արևմտյան օրենսդությունն ուղղակի չի համապատասխանում «Ռուսաստանի սոցիալ-տնտեսական իրողություններին»: Այն ամենը, ինչ իրավական կարգավորման ոլորտում թվում է ճիշտ և Արևմուտքի տեսակետից ենթակա չէ կասկածի, գրում է հեղինակը, «այն ամենը, ինչը համապատասխանում է արևմտյան ժողովրդավարության և զարգացած շուկայական տնտեսության բոլոր պահանջներին, միշտ չէ, որ հանդիսանում է հետկոմունիստական իրավական խնդիրների լուծման իդեալական միջոց»:

Խոսելով պետության և իրավունքի տիպաբանության բովանդակության և նշանակության մասին՝ անհրաժեշտ է նշել, որ դա կյանքից ու իրականությունից կտրված, մտացածին իրողություն է: Դրա իրականացման գործընթացում գիտնականներ հենվում են զանազան իրավաբանական և ոչ իրավաբանական գիտությունների, մասնավորապես, պետության և իրավունքի, քաղաքական գիտության, սոցիոլոգիայի, սահմանադրական իրավունքի և այլնի կուտակած հսկայական փաստական նյութի վրա:

Սույն նյութի ուսումնասիրման և ընդհանրացման հիման վրա սահմանվում և բացահայտվում են պետության և իրավունքի միջև գոյություն ունեցող օբյեկտիվ կապեր մի կողմից, ինչպես նաև հասարակության տնտեսական ու սոցիալական կառուցվածքի միջև մյուս կողմից:

Տնտեսության և հասարակության զարգացման տարբեր աստիճաններին համապատասխան՝ հաշվի առնելով դրանց տնտեսական զարգացման ու գործունեության օրինաչափությունները, սահմանվում են զարգացման կամ պետության և իրավունքի տիպի համապատասխան աստիճանները, ինչպես նաև դրանց գոյության և գործունեության օրինաչափությունները: Սերտ կապ և փոխկապակցվածություն գոյություն ունի տնտեսության և հասարակության տիպերի և զարգացման օրինաչափությունների միջև մի

կողմից, և պետության և իրավունքի՝ մյուս կողմից: Սակայն դրանց միջև չկա կոշտ, ուղղակի կապ և փոխկապակցություն: Զարգացման օրինաչափ լիությունները և պետության և իրավունքի՝ մի տիպից մյուսի սրումն ընդհանրապես համապատասխանելով զարգացման օրինաչափությունների և տնտեսական բազիսի ու հասարակության՝ տարբեր տիպերի փոխարկմանը, դրա հետ մեկտեղ ունեն իրենց յուրահատկությունները, իրենց հարաբերական անկախությունը:

Եզրակացություն

Ինչո՞ւմն է պետության և իրավական համակարգերի տիպաբանության գործընթացի սոցիալական իմաստն ու նշանակությունը: Ընդհանուր տեսական և քաղաքական գործնական պլանով տիպաբանության գործընթացի նշանակությունը կայանում է հետևյալում: Առաջինը, այն բանում, որ պետության և իրավունքի տիպաբանության մասին մշակված գաղափարները տալիս են քննարկվող երևույթի դերի և որակական մեկ աստիճանից մյուսին անցման բնական-պատմական զարգացման գործընթացի ճիշտ ըմբռնման բանալին:

Երկրորդ՝ այն բանում, որ տիպաբանությունը հետազոտողին զինում է պետության և իրավունքի պատմական զարգացման գործընթացի ներքին բանականության և օրինաչափփությունների ըմբռնմամբ, հանդես է գալիս որպես Հայաստանի ինչպես նաև այլ երկրների պետության և իրավունքի գիտական կանխատեսման հիմք:

Երրորդ՝ այն բանում, որ պետության և իրավական համակարգերի տիպաբանության գործընթացը թույլ է տալիս օրգանապես համադրել պետական-իրավական զարգացման՝ առանց բացառության բոլոր տիպերի պետություններին և իրավունքներին յուրահատուկ երևույթների ընդհանուր օրինաչափությունների հետազոտումը միայն որոշ պետություններին և իրավունքներին հատուկ յուրահատությունների հետ, պետության և իրավունքի բնական-պատմական զարգացման ողջ գործընթացը դրա առանձին մասերի, կոնկրետ պատմական դեպքերի զարգացման գործընթացի հետ:

Չորրորդ, այն բանում, որ պետության և իրավական համակարգերի տիպավորման գործընթացում ստեղծվում են բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու հնարավորությունները՝ ողջ փաստական և գիտական նյութի լայն ընդհանրացման, համակարգման և վերլուծության համար, նյութ, որը վերաբերում է հասարակության, պետության և իրավունքի ծագման և զարգացման ողջ գործընթացին, դրանց՝ մեկ աստիճանից մյուսին հետևողականորեն անցման բոլոր կողմերին:

Եվ վերջապես հինգերորդ՝ այն բանում, որ պետության և իրավական համակարգերի տիպավորման գործընթացն օբյեկտիվ հիմք է ստեղծում պետության և իրավունքի բնական-պատմական զարգացման գործընթացի

խոր շերտերի գիտականորեն ներթափանցման համար, թույլ է տալիս հատուկ տարբերակումներ դնել գիտական և կեղծ գիտական պետական-իրավական տեսությունների միջև, հնարավորություն է տափս տարբեր երկրներում իրականացնել պետական-իրավական շինարարություն խիստ գիտական կյանքով, հաստատված փորձի հիման վրա:

Գրականություն

1. Леже Р. Великие правовые системы современности: сравнительно-правовой подход М., Волтерс Клувер, 2010 с. 2-3.
2. Տե՛ս **Цвейгерт К., Кетц Х.** Введение в сравнительное правоведение в сфере частного права.М., 2000, с. 29-30.
3. **Սաֆարյան Գ.Հ.** Պետության և իրավունքի տեսություն: Երևան, 1996 էջ 4-9:
4. **Чистяков О. И**. Введение в историко-правовые науки // Вестник Московского университета. Серия 11. право. 1996, N 4, с. 5-6.
5. **Поппер К.** Открытое общество и его враги.Т.2. М., 1992, с. 312.
6. Dictionary of Sociology and Related Sciences, Totowa, 1988. P. 259.
7. **Сырых В.М.** Теория государства и права.М., 2004, с. 622-623.
8. **Khotin J.** Old and New Enterpreneurs in Today's Russia // Problems of Post-Communist. Jan.-Febr., 1996. էջ 49-56.
9. **Malfliet K.** Russia-Second-hand laws that do not fit // European, Briet. Dec. 1994. P. 86-87.

ОСНОВЫ ТИПОЛОГИИ ГОСУДАРСТВ И ПРАВОВЫХ СИСТЕМ

[12]Сафарян Гарник, [12]Малхасян Лиана

[1]Ер. университет «Айбусак», [2]Институт философии, социологии и права НАН РА

Обсуждается проблема исторических типов государства и права которая является одним из важнейших и решающих исторических моментов. Без адекватного решения этого вопроса невозможно выяснить ни их сущность в эволюционном развитии, ни их социально-политическое значение, ни правильное восприятие их место и роль в политической системе общества.

Ключевые слова. государство, право, исторический тип, типология, общество.

THE PROBLEM OF THE TYPOLOGY OF STATES AND LEGAL SYSTEMS

[12]Safaryan Garnik, [12]Malkhasyan Liana

[1] Institute of Philosophy, Sociology, and Law, NAS RA.
[2]Yerevan "Haybusak" University

The essence of the historical types of the state and law is one of the most crucial historical moments, without which impossible to understand the development of their essence, their socio-political content, and significance, their form, activity, or the change of their place and role in the political system of society:

By the different levels of development of the economy and society, taking into account the patterns of their economic development and activity, the appropriate levels of development, the type of state and law, and the patterns of their existence and activity are defined. On the one hand, a close connection and interdependence exists between the types and development patterns of economy and society and state and law on the other. However, there is no rigid, direct connection and correlation between them. The regularities of development and the escalation of state and law from one type to another generally correspond to the transformation of development patterns and economic base and society into different types, along with it, have their peculiarities, and their relative independence.

Keywords. State, law, historical type, typology, society, legal system, political system.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-13

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գուրգեն Մուրադյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան

Մուտքագրված է՝ 12.03.24. գրախոսված է՝ 13.05.24, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *քննարկվում են Հայաստանի անկախությունից ի վեր առանցքային կարևորագույն փաստաթղթերից մեկի՝ ազգային անվտանգության ռազմավարության նշանակությունը և խոցելի կետերը: Վերլուծվում են տարբեր կառույցների գնահատականները նշված փաստաթղթի մասին: Ներկայացվում են հեղինակի առաջարկները նոր ազգային անվտանգության փաստաթղթի դրույթների վերաբերյալ:*

Թեմայի վերլուծությունը առաջնահերթ կարևորություն ունի Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի պաշտպանական համակարգի վերազինման համար:

Հիմնաբառեր. *Արցախյան պատերազմ, հայեցակարգ, ազգային ռազմավարություն, ազգային անվտանգություն, ուղեղային կենտրոններ*

Ազգային անվտանգության հարցերի հայեցակարգայնացման խնդիրը ձևակերպվեց անկախ Հայաստանի կանոնավոր ռազմական կազմակերպվածքի ստեղծման առաջին իսկ օրերին՝ 1992 թ., ԽՍՀՄ ցամաքային զորքերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ, Աֆղանստանում որպես 40-րդ բանակի շտաբի պետ ծառայած, ՀՀ Զինված ուժերի ստեղծման գործընթացը ղեկավարելու համար Հայաստան հրավիրված գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի առաջարկով:

Երկար տարիների աշխատանքի արդյունքում ընդունված երկու ռազմավարությունները կարևոր դոկտրինալ փաստաթղթեր էին, սակայն նրանք չդիմացան ժամանակի փորձությանը [1]:

Ազգային անվտանգության ռազմավարությունները՝ այն երկրներում, որտեղ նման փաստաթղթերի ընդունման ընթացակարգեր ու ավանդույթներ ընդհանրապես կան, արտացոլում են գործող իշխանությունների ընկալումները իրենց շրջապատող աշխարհի, արտաքին քաղաքական նպատակների և տեսլականների վերաբերյալ: Որոշ երկրներում այս ռազմավարական փաստաթղթի վերանայման պահանջը սահմանված է օրենքով, այլ երկրներում՝ քաղաքական նպատակահարմարությամբ: Կան տարբեր մոտեցումներ փաստաթղթի բովանդակության վերաբերյալ, որոնք հիմնականում բխում են պետության կենսագործունեության տարբեր ոլորտները «անվտանգայնացնելու» հարցից[2]:

2020 թ. 44 օրյա ռազմական գործողությունները էական փոփոխություններ առաջ բերեցին Հարավային Կովկասում: Հայաստանի Հանրապետության համար ծանր հետևանքներ ունեցավ ուժային կշռի փոփոխությունը, որի հետևանքները նկատելի են ցայսօր:

Այս ամենը բացառելու և դրան հակազդելու համար 2020 թ. ամռանը մշակվել էր ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որն եկել էր փոխարինելու 2007 թ. վաղուց արդեն հնացած ռազմավարությանը:

Նոր հայեցակարգային փաստաթղթի ընդունումը միանաշնակ չընդունվեց հայաստանյան գիտական և վերլուծական հանրույթի կողմից: Հենց այս տարակարծությունն էլ մեր հետազոտության թիրախն է՝ հաշվի առնելով երկրի առջև ծառացած ներկա մարտահրավերները:

2020 թ. հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունվել է երկրի Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը: Փաստաթղթի շուրջ աշխատանքները սկսվել էին դեռ 2019 թվականին: Դրանց մասնակցել են երկու տասնյակից ավել պետական գերատեսչությունների աշխատակիցներ, ինչպես նաև փորձագիտական դաշտի մի շարք ներկայացուցիչներ:

Նոր փաստաղթի ընդունման հիմնավորումներից մեկն այն էր, որ Հայաստանի նախորդ Ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվել էր 2007 թվականին՝ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման վերջին տարում: Սերժ Սարգսյանի նախագահության ընթացքում ռազմավարությունը չէր թարմացվել: Մինչդեռ 2007 թվականից ի վեր աշխարհում և տարածաշրջանում փոփոխվել են ինչպես մարտահրավերները, այնպես էլ աշխարհաքաղաքական ընդհանուր իրավիճակը: Վերջին 13 տարիների ընթացքում աշխարհում և տարածաշրջանում տեղի են ունեցել մի շարք շրջադարձային իրադարձություններ, որոնք չէին կարող ազդեցություն չունենալ անվտանգության ոլորտում Հայաստանի մոտեցումների վրա [3]:

Փաստաթղթի քննադատները իրավամբ նշում են, որ Փաստաթղթի հեղինակները ներածության մեջ արդարացիորեն նշում են, որ «2007թ. ՀՀ ազգային անվտանգության առաջին ռազմավարության ընդունումից ի վեր միջազգային և տարածաշրջանային անվտանգային միջավայրը էական փոփոխություններ է կրել՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները դարձնելով ավելի բարդ և բազմաշերտ»: Միաժամանակ փաստաթղթի հեղինակները նշում են, որ այս, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում ստեղծված իրողությունները «պահանջում են ունենալ նոր, ավելի հավակնոտ ազգային անվտանգության ռազմավարություն»: Սրանից կարելի է ենթադրել, որ նոր ռազմավարությունը պետք է ավելի համընդգրկուն գնահատականներ տար ՀՀ անվտանգային միջավայրին, առկա սպառնալիքներին և մարտահրավերներին, ինչպես նաև ավելի հստակ ու համապարփակ ռազմավարական լուծումներ առաջ քաշեր: Ցավոք, փաս-

տաթղթի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաթղթի նախաբանում ներկայացված այս տրամաբանական նպատակադրումը այնքան էլ համահունչ չէ ողջ փաստաթղթի բովանդակությանը [4]:

Ռազմավարությունում ներառված միջազգայնագիտական վերլուծությունը «բազմակողմանի հարթակների թուլացման» և միջազգային համակարգի վերաձևավորման վերաբերյալ իրոք արդիական է: Մյուս կողմից «խաղաղության և միջազգային փոխգործակցության ամրապնդումը» ներկայացված է իբրև երկրի ազգային շահերից մեկը (թեև հիմնականում նեղ՝ միայն ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում), բայց ԱԱՌ-ը այդպես էլ որևէ քաղաքական տեսլական չի արձանագրում, թե ինչպես և ինչ դաշնակիցներով է Հայաստանը ձգտելու հակազդել այդ «բազմակողմանի հարթակների թուլացմանը», ներառյալ, օրինակ, ՀԱՊԿ-ի կամ ԵԱՏՄ-ի պարագայում, որտեղ ըստ էության կենտրոնացած են մեր երկրի ռազմական և տնտեսական զարգացման պոտենցիալները: Տարածաշրջանում Հայաստանի դեմ ձևավորված շրջափակման քաղաքականությունն արձանագրելու հետ մեկտեղ անհրաժեշտ էր ամրագրել, թե ինչպիսի քաղաքականություն է վարելու Հայաստանը Իրանի և Վրաստանի նկատմամբ՝ բազմակողմ հարթակներում առկա խնդիրները հարթելու նպատակով [5]:

Ընդհանրապես, նման փաստաթղթերում ընդունված է և պատշաճ զերծ մնալ տեսական բնույթի մտքերից կամ գոնե տեսական նկատառումները համատեղել գործնական հարթության հետ՝ ամրագրելով արտաքին ու անվտանգային քաղաքականության հարցերում դիրքորոշումներ ու նպատակներ:

ՀՀ Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Արմեն Գևորգյանը պնդում է, որ փաստաթղթի բուն կառուցվածքն ու տեքստը ավելի շատ հիշեցնում են ցանկությունների մի շարք և Կառավարության գործունեությա ն այսօրվա առաջնահերթությունների արձանագրում: Նման փաստաթղթում ցանկալի կլիներ տեսնել ազգային անվտանգության բոլոր ասպեկտների վերաբերյալ ռիսկերի և առկա սպառնալիքների գնահատում և պետության առջև ծառացած հնարավոր մարտահրավերների նկարագրություն: Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում անցկացրած ժամանակաշրջանում ես մանրակրկիտ ուսումնասիրել եմ նմանատիպ ռազմավարությունների մշակման սկզբունքները: Կարող եմ ասել, որ գոյություն ունի ազգային անվտանգության ռազմավարության մշակման երկու հիմնական մոտեցում: Առաջին դեպքում շեշտը դրվում է այսպես կոչվող արտաքին անվտանգային միջավայրի առանձնահատկությունների և տեղի ունեցող գործընթացների վրա՝ մատնանշելով ռիսկերը, սպառնալիքներն ու մարտահրավերները, կանխատեսելով իրավիճակի զարգացումը և այդ միջավայրում սեփական վարքագիծը, այսինքն՝ հաշվի են առնվում արտաքին գործոններն ու սպառնալիքները և դրանց նկատմամբ մեր պոտենցիալ

արձագանքը (հիմնականում՝ ռազմաքաղաքական – դիվանագիտական գործիքակազմը): Երկրորդ դեպքում շեշտը դրվում է ոչ միայն արտաքին անվտանգային միջավայրի վրա, այլև հաշվի են առնվում ներպետական զարգացման առանձնահատկությունները՝ սպառնալիքների հաղթահարման և արտաքին բնույթի գործոններին համարժեք արձագանքելու նպատակով: Ահա այս դեպքում առավել դժվար է ձևավորել օպտիմալ, միաժամանակ՝ ամբողջական փաստաթուղթ: Մեր դեպքում փաստաթղթի հեղինակները շարժվել են երկրորդ ուղղությամբ, սակայն չեն կարողացել ստանալ ամբողջական փաստաթուղթ:

Փաստաթուղթը չի ուրվագծում այն իրագործելու ճանապարհային քարտեզը: Ավելի տրամաբանական կլիներ ենթադրել, որ փաստաթղթում կարող էր տեղ գտնել տարբեր ուղղություններով այն հիմնարար փաստաթղթերի (հայեցակարգերի) ցանկը, որոնք բխում են ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից[6]:

Խնդիրներն ու թեմաները, մոտեցումներն ու լուծումները, որոնք ներկայացված են «Ազգային անվտանգության ռազմավարություն» կոչվող փաստաթղթում, պետք է մշակվեն և ներկայացվեն հնարավորինս լիարժեք և որակյալ ձևով: Նման փաստաթղթի ստեղծումը չպետք է ինքնանպատակ լինի կամ արտացոլի դրա մշակողների՝ սեփական գոյությունն արդարացնելու ցանկությունը: Առավել ևս նման փաստաթուղթը չի կարող դառնալ աշխատանքային պլանի կատարման արդյունք:

Ազգային անվտանգության նոր ռազմավարություն, որը որևէ պարագայում չպետք է վերածվեր գեղեցիկ հռչակումների ու զեղումների շարադրանքի և պետք է դառնար ամենօրյա աշխատանքի, ներքին ու արտաքին քաղաքականության գործնական իրականացման ճանապարհային քարտեզ:

Հայաստանի ներքին և արտաքին զարգացումները ցույց են տալիս, որ խաղաղության մասին խոսելը մեր տարածաշրջանում դեռ շատ վաղ է և պետք է միշտ սթափ ու զգոն լինել՝ հակառակորդ երկրների սպառնալիքներից:

Այդ համատեքստում ահրաժեշտ ենք համարում լիովին նոր ազգային անվտանգության ռազմավարության մշակումը, որը կարտացոլի գործող իրավիճակը և, որ ամենակարևորն է, կառաջարկի ստեղծված իրավիճակից դուրս բերման լուծումներ:

Գրականություն

1. **Քոթանջյան Հ.**, Հայ հասարակության անվտանգ և կայուն զարգացման ռազմավարության մշակման միջգերատեսչական գործընթացի մասին, Հայկական բանակ հանդես, 2007, հ.2-3, էջ 10:
2. **Նիկողոսյան Հ.**, Մտորումներ Ազգային անվտանգության նոր ռազմավարության վերաբերյալ// https://mediamax.am/am/column/121131/
3. **Գրիգորյան Տ.**, Հայաստանի հին և նոր Ազգային անվտանգության ռազմավա-

րությունների համեմատական վերլուծություն// https://uic.am/10726
4. ՀՀ անվտանգության ռազմավարությունը արտաքին միջավայրում և տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում, **Լույս հիմնադրամ**, Երևան, 2020, էջ 5:
5. **Ներսիսյան Լ.**, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը հնացել է// https://mediamax.am/am/column/12965/
6. **Գևորգյան Ա.**, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթուղթն էական ուժեղացման կարիք ունի// https://168.am/2020/07/18/1337593.html

DOCTRINAL PROBLEMS OF THE NATIONAL SECURITY STRATEGY OF RA

Gurgen Muradyan

Yerevan «Haybusak» University

The article discusses the significance and vulnerabilities of the national security strategy, one of the most important documents since Armenia gained independence. The assessments of various institutions regarding the mentioned document are analyzed. The author's proposals on the provisions of the new document on national security are presented.

Analysis of the topic is of paramount importance for the Artsakh wars, as well as for the rearmament of the defense system of Armenia.

Keywords: Artsakh war, concept, national strategy, national security, think tanks.

ДОКТРИНАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Гурген Мурадян

Ереванский университет Айбусак

В статье обсуждаются значение и уязвимости стратегии национальной безопасности, одного из важнейших документов с момента обретения Армении независимости. Анализируются оценки различных учреждений по поводу упомянутого документа. Представлены авторские предложения по положениям нового документа о национальной безопасности. Анализ темы имеет первостепенное значение для арцахских войн, а также для перевооружения оборонной системы Армении.

Ключевые слова: Арцахская война, концепция, национальная стратегия

DOI: 10.61484/29538181-sj.10.24-15

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորայր Ստեփանյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան

Մուտքագրված է՝ 14.04.22, գրախոսված է՝ 18.05.22, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Հոդվածում անդրադարձ է կատարվել պետությունների ինքնիշխանության սահմանադրական ամրագրման հիմնախնդիրներին և դրսևորման ձևերին, ինչպես նաև բացահայտվել է «պետական ինքնիշխանություն» եզրույթի իրավական բովանդակությունը*

Հիմնաբառեր. *Պետություն, սահմանադրության, ինքնիշխանություն, պետականություն, սահմանադրություն, ժողովուրդ, իրավունք:*

Սահմանադրությունը մեր պետության ու հասարակության հիմնական օրենքն է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ամրագրում է հասարակական և պետական կարգերի հիմնական սկզբունքները, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգը [1]:

Այն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը և ապահովում է մարդու պետության, հասարակության շահերի համամասնությունը և հավասարակշռությունը: Այն գերակայող աղբյուր է իրավունքի բոլոր ճյուղերի համար:

«Ինքնիշխանություն» եզրույթը բառացիորեն նշանակում է գերագույն իշխանություն: Պետության ինքնիշխանությունը նրա հատկությունն է, որն որն արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ, արտաքին հարաբերություններում՝ անկախությամբ:

Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար ինքնիշխանությունը պետության հիմնական բնութագրիչների համակարգում դիտարկվում է առաջինը հավասարների շրջանակում: Դա վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Սահմանադրությունը, որպես երկրի հիմնական օրենք, սահմանում է մարդու և պետության միջև հիմնարար հարաբերությունները և պետական իշխանության կառուցվածքը: Յուրաքանչյուր ժամանակակից Սահմանադրություն ունի երկու հիմնական խնդիր՝ երաշխավորել մարդու հիմնական իրավունքները և սահմանել ժողովրդավարության և իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ:

Սահմանադրություններն ի սկզբանե ստեղծվում են առավել երկար կյանք ունենալու ակնկալիքով: Սահմանադրությունը պետք է ունենա այնպիսի բովանդակություն, որ մի կողմից՝ արգելք չհանդիսանա ընթացիկ օրենսդրության միջոցով արձագանքելու հասարակական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին, իսկ մյուս կողմից՝ թույլ չտա, որ ընթացիկ օրենսդրությունը նենգափոխի իր էությունը [2]: Հասարակությունն ինքնին հարափոփոխ է, հետևաբար՝ հրամայական է դառնում սահմանադրությունների այնպիսի ճկունությունը, որը նպաստում է հասարակության զարգացմանը: Սահմանադրությունը կարևորագույն իրավական և քաղաքական փաստաթուղթ է, որտեղ տրված են այն իրավաքաղաքական սկզբունքներն ու արժեքները, որոնք ծառայում են պետության և նրա քաղաքացիների բարեկեցությանը հասնելուն: Ազատության, հավասարության և կարգուկանոնի սահմանադրական հարաբերակցությունը ստեղծում է այնպիսի կառավարում, որտեղ ապահովված են մարդու իրավունքներն ու ազատությունները, իշխանությունը կաշկանդված է այդ իրավունքներով ու ազատություններով, և անհատի հետ փոխհարաբերություններում նրա ինքնիշանության հնարավորությունը սահմանափակված է:

Սահմանադրություն տերմինը լատիներեն բառ է, նշանակում է «հաստատում», «որոշում», «կառուցվածք»: Ժամանակակից ըմբռնմամբ դա պետության հիմնական օրենքն է, որտեղ նախատեսված են երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական կառուցվածքի հիմքերը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, կրթության և պետական մարմինների գործելու համակարգը և այլ սահմանադրական սկզբունքներ ու մեխանիզմներ:

Սահմանադրության էությունն ու ոգին են երկու բարձրագույն արժեքներ՝ պետություն և մարդ:

Պետության ինքնիշխանությունը նրա քաղաքական-իրավական հատկությունն է, որն արտահայտվում է, ինչպես նշեցինք վերևում, երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում անկախությամբ:

Պետության ներքին ինքնիշխանությունն արտահայտվում է պետության գերակայությամբ և լիիշխանությամբ քաղաքական համակարգի այլ կազմակերպությունների նկատմամբ: Դա պետության մենաշնորհային իրավունքն է իրականացնել օրենսդիր, կառավարական և իրավապահպան գործառույթներ երկրի ներսում:

Պետության արտաքին ինքնիշխանությունն արտահայտում է պետության անկախությունը և իրավահավասարությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ այլ պետությունների հետ հարաբերություններում, անթույլատրելիությունը դրսից միջամտել պետության ներքին գործերին, իրավահավասար անդամությունը միջազգային կազմակերպություններին:

Տեսականորեն ընդունված է առանձնացնել պետական ինքնիշխանության

հետևյալ հատկանիշները.

1) գերակայություն.
2) ինքնուրույնություն.
3) լիիշխանություն.
4) անբաժանելիություն.
5) անկախություն.
6) անօտարելիություն:

Ինքնիշխանությամբ օժտված է ցանկացած պետություն՝ անկախ պետության տարածքի չափից, բնակչության քանակից, կառավարման և կառուցվածքի ձևերից: Պետության ինքնիշխանությունը դրսևորվում է նրա ինքնիշխան իրավունքներում, որոնք իրականացվում են պետության մարմինների ու ինստիտուտների կողմից: Դրանք են՝

- օրենքներ հրապարակելու իրավունքը,
- պետական մարմինները ձևավորելու իրավունքը,
- իր խորհրդանիշները (զինանշան, հիմն, դրոշ) որոշելու իրավունքը,
- պետական դրամական միավոր ունենալու իրավունքը,
- հարկեր սահմանելու իրավունքը,
- պատերազմի և խաղաղության իրավունքը,
- այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում իր ներկայացուցիչներին նշանակելու իրավունքը,
- միջպետական միությունների մեջ միավորվելու իրավունքը և այլն:

Պետությունների ինքնիշխանության ծավալը միատեսակ չէ տարբեր պատճառներով: Շատ պետությունների ինքնիշխանությունը ձևական է կամ սահմանափակված: Արդի դարաշրջանում պետական իշխանության ներքին գերակայությունը և արտաքին անկախությունն ավելի ու ավելի են սահմանափակվում միջազգային իրավունքով: Բացի այդ, ակնհայտ է, որ գերտերությունների սուվերեն իրավունքներն առավել իրական են, քան փոքր պետություններինը: Պետության ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել հարկադրաբար կամ կամավոր կերպով: Հարկադիր սահմանափակումն, հնարավոր է, օրինակ՝ պատերազմում հաղթող պետության կողմից հաղթված պետության նկատմամբ: Կամավոր սահմանափակումը կատարվում է պետության ինքնուրույն որոշմամբ՝ կոնկրետ համաձայնությամբ կամ պայմանագրի հիման վրա: Օրինակ՝ կոնկրտ համաձայնությամբ յուրաքանչյուր առանձին դեպքում պետություններից մեկը կարող է մյուսին հանձնել հանցագործին: Պայմանագրի հիման վրա ինքնիշխանության սահմանափակումը կատարվում է դաշնության կամ միջպետական միությունների մեջ մտնելով և դաշնությանը կամ վերպետական կազմավորմանը իր ինքնիշխան իրավունքները փոխանցելով:

20-րդ դարում մարդու իրավունքների միջազգայնացումը և համընդհան-

րացումը էականորեն թուլացրեցին պետության ներքին գործերին չմիջամտելու և ինքնիշխան հավասարության անխախտելիության դիրքերը: ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված շրջանակներում և սահմաններում կիրառվում են զինված ուժեր այն պետությունների նկատմամբ, որոնք թույլ են տալիս կամ կատարում են մարդու իրավունքների խախտումներ (մարդասիրական ինտերվենցիա):

Սահմանադրությունն ամրագրեց Հայաստանի Հանրապետության բնույթը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն, հռչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, սահմանեց հանրապետության կառավարման ձևը՝ հիմնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Պետության ինքնիշխանության կարևորագույն ատրիբուտներից մեկը հենց Սահմանադրությունն է, որովհետև Սահմանադրությունը նախևառաջ արտահայտում է անկախ պետություն ունենալու ժողովրդի սահմանադիր կամքը և հենց անկախ պետության շրջանակներում է ձևավորվում Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգը»:

Սահմանադրությունն իր իրավաբանական էությամբ կատարյալ է, երբ գործում է անկախ պետության մեջ:

Միջազգային սահմանադրական պրակտիկայում Սահմանադրության կառուցվածքը ձևավորվում է կամ գործառութային, կամ կառուցակարգային սկզբունքների հիման վրա: Կան նաև օրինակներ, որ այդ սկզբունքները միատեղված են: Սակայն այդ միատեղումը չի կարող հանգեցնել արհեստական այնպիսի լուծումների, երբ խաթարվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը կամ միատեղվում են ոչ համասեռ սահմանադրաիրավական հարաբերություններ:

Ընդհանրապես Սահմանադրության կառուցվածքը սահմանադրական մշակույթի մակարդակի որոշակի արտացոլումն է, ինչպես նաև սահմանադրական արժեբանության հետևողական իրացման երաշխիքը: Սա է պատճառը, որ սահմանադրական ճարտարապետության կարևորագույն բաղադրատարր է դիտվում Սահմանադրության կառուցվածքի հստակեցումը, որի բնույթն ու բովանդակությունը թելադրված են նաև կոնկրետ պատմական իրողություններով, երկրի առջև ծառացած հիմնախնդիրների բնույթով, դրանց լուծման պատմաքաղաքական առաջնահերթություններով: Բազմաթիվ երկրների սահմանադրությունների կառուցվածքային լուծումների համադրված վերլուծությունը վկայում է, որ.

ա/ Սահմանադրության կառուցվածքը պետք է հնարավորինս խարսխված լինի գործառութային կամ կառուցակարգային հստակ մոտեցումների վրա,

բ/ տվյալ բաժնում ամրագրվող դրույթները պետք է վերաբերեն համասեռ հասարակական հարաբերություններին և ապահովվի դրանց կանոնակար-

գումը համակարգային ամբողջականության մեջ,

գ/ իշխանության որևէ մարմնի ներառումն այս կամ այն բաժնում պետք է պայմանավորված լինի գործառույթների բնույթով, դրանց օրգանական փոխ-պայմանավորվածությամբ: Նման պայմանների առկայությամբ են մեծապես պայմանավորված հակակշռող ու զսպող լիազորությունների հստակությունը, գործառույթ-լիազորություն և լիազորություն-պատասխանատվություն շղթայի համակարգային ամբողջականությունը:

Ինքնիշխան և իրավական պետության հարաբերակցությունն ինքնին մատնանշում է որոշակի սկզբունքների ու հատկանիշների առկայություն, որոնք կարող են հնարավորություն տալ բացահայտել հենց ինքնիշխանության ոչ միայն իմաստը, բովանդակային սահմաններն ու դրսևորման բնութագրիչները, այլև՝ տարանջատել սահմանադրաիրավական այլ երևույթների նշանակությունից:

Սահմանադրական կարգավորումների արդի զարգացումների շրջանակում ինքնիշխան պետության սահմանադրական սկզբունքն էական զարգացում է ստացել ընթացիկ օրենսդրությամբ: Հետևաբար, պետության ինքնիշխանության իրականացման հարցերն անհրաժեշտ է տեսականորեն իմաստավորել՝ հատկապես պետության ինքնիշխան իրավունքների նորմատիվային ամրագրման տեսանկյունից:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ և սահմանադրաիրավական կարգավորումների համակարգում «ինքնիշխանություն» եզրույթի էական նշանակության ու դերի մասին հարցերի հետազոտությունը չի կարող իրական արդյունավետություն ապահովել՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքները, որոնք կյանքի են կոչել տվյալ կատեգորիան ու ծառայել պետության ինքնիշխանության տեսության առաջացմանը:

Բազմաթիվ սահմանադրականագետների կարծիքով՝ ինքնիշխանությունը դիտարկվում է սահմանադրական իրավունքի կառուցվածքի բաղկացուցիչ մաս, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ այդ ինստիտուտն իր ամրագրումն է ստանում հենց սահմանադրական իրավունքի նորմերով [3]:

Պետության ինքնիշխանությունը դրսևորվում է բազմապիսի հարաբերություններում, որոնց շրջանակներում իրականացվում է պետության գործունեությունը: Սակայն, հարկավոր է հաշվի առնել, որ սահմանադրաիրավական կարգավորման առարկայի մեջ են մտնում պետական իշխանության իրականացման ոչ միայն ձևերը, այլև անհատների, հասարակական կազմակերպությունների, սոցիալական այլ միավորումների քաղաքացիական վարքագծի ոչ պետական ձևերը:

Պետության ինքնիշխանությունը կարելի է բնութագրել իբրև սահմանադրական կարգի սկզբունք, որը թեև ձևականորեն ամրագրված է միայն ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, սակայն գործնականում այն իրականացվում է սահմանադրական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների նորմերով:

Այդ առումով համակարծիք ենք այն պնդման հետ, ըստ որի՝ պետության ինքնիշխանությունը հանդիսանում է այն սկզբունքը, որը կանխորոշում է սահմանադրաիրավական ողջ համակարգն ու դրա պետական կարգավորման սկզբունքների բովանդակությունը [4]:

Բացի դրանից, պետության ինքնիշխանության դրսևորումներից մեկն է հանդիսանում ժողովրդի կողմից հավանության արժանացած կամ ընդունված Սահմանադրության, այսինքն՝ Հիմնական օրենքի առկայությունը, որը սահմանված է սահմանադիրի կողմից, այլ ոչ թե պարտադրված որևէ այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից:

Պետական ինքնիշխանությունը սահմանափակված է ժողովրդի ինքնիշխանությամբ, որին պատկանում է երկրի տնտեսական, սոցիալական ու քաղաքական համակարգերը սահմանելու բարձրագույն իրավասությունը:

Եվ տվյալ դեպքում սահմանադրաիրավական այն նորմերը, որոնք սահմանում են սահմանադրության մշակման, ընդունման ու փոփոխման կարգը, վերաբերում են սահմանադրական իրավունքի ինքնուրույն ինստիտուտին [5]:

Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը՝ դա ժողովրդի կամքից բխող բարձրագույն իշխանությունն է, որն իր արտացոլումն է գտնում պետության կողմից ազգային ու միջազգային իրավունքի շրջանակներում սեփական գործառույթների իրականացման գործում: Ժողովրդական ինքնիշխանությունից ածանցվում է պետական ինքնիշխանությունը: Դրանք սերտորեն փոխկապակցված են և անբաժանելի կերպով համագոյակցում են պետական ու հասարակական կյանքում: Այդ հարաբերակցությունն ենթադրում է պետության կարողություն ներքին ու արտաքին քաղաքականությունն ինքնուրույն որոշելու՝ մարդու ու քաղաքացու իրավունքների պահպանման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ու միջազգային իրավունքի նորմերի պահպանման պայմաններում [6]:

Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը որպես սահմանադրական իրավունքի գիտության առանցքային ինստիտուտ և գաղափար, ունի գենետիկական կապ սահմանադրական իրավունքի ողջ համակարգի հետ, միաժամանակ հանդիսանալով պետական կարգավորման կարևորագույն հարց: Այն ունի ածանցյալ բնույթ, սակայն, եթե պետական իշխանության մեջ արտահայտվում է ողջ ժողովրդի ու պետության կամքը, ապա ժողովրդի ինքնիշխանությունը իրենից ներկայացնում է ժողովրդի կողմից պետական ողջ

իշխանության իրավաբանորեն ու փաստացի տնօրինում, քանի որ հենց ժողովուրդն է հանդես գալիս իբրև այդ իշխանության միակ աղբյուրն ու կրողը [7]:

Գրականություն

1. Նազարյան Վլ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Երևան 1992
2. Чиркин В. Е. Теория современной конституции, М. 2007
3. Нерсесянц В.С. История политических и правовых учений.. М: 2007.
4. Дамдинов Б.Д. Государственный суверенитет в системе принципов федеративного устройства России: некоторые проблемы теории и практики // Сибирский юридический вестник. 2003. N4
5. Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М.: Норма, 2006
6. Золотарева М.В. Национальный суверенитет: на стыке права и политики // Федерализм. N3, 2009. էջ 141-142
7. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. Փոփոխություններով, Երևան 2015թ.

КОНСТИТУЦИЯ И СУВЕРЕНИТЕТ ГОСУДАРСТВ

Степанян Н.

Ереванский университет «Айбусак»

В статье рассматриваются проблемы конституционного закрепления суверенитета государств и форм его проявления, а также раскрыто юридическое содержание термина «государственный суверенитет».

Ключевые слова. Государство, конституция, суверенитет, государственность, конституция, народ, закон.

CONSTITUTION AND SOVEREIGNTY OF STATES

Stepanyan N.

Yerevan «Haybusak» University

Abstract. The article considers problems of constitutional consolidation of sovereignty of states and forms of its manifestation. The article summarizing the results of the systematic analysis of the norms provided by the Constitution of the Republic of Armenia reveals the legal content of the term «state sovereignty» and the normative functional role in the process of constitutional regulation. The article details the necessity and role of the Constitution for the state, the principles of its organization. The article subjected to a general analysis of the constitutions of different states, studied international experience and gave scientific interpretations of norms expressing the relationship between the sovereign and the rule of law in the science of constitutional law.

Keywords. State, constitution, sovereignty, statehood, constitution, people, law.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-16

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մկրտիչ Մուրադյան

Երևանի Հայբուսակ համալսարան

Մուտքագրված է՝ 20.03.24. գրախոսված է՝ 13.05.24, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *քննարկված է խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրներում նախագահի ինստիտուտի կարևորությունը: Ներկայացված են Հայաստանի Հանրապետության նախագահի գործառույթները և լիազորությունները, բացահայտված են վիճելի և երկակի մեկնաբանվող կետերը: Կարևորված է նախագահի դերը ներում և համաներում շնորհելու գործում:*

Տրված են առաջարկություններ՝ կապված Հայաստանի Հանրապետությունում նախագահի ինստիտուտի լիազորությունների ընդլայնման հետ:

Հիմնաբառեր. *պետության գլուխ, ընտրական իրավունք, ներում, համաներում, պառլամենտական կառավարման ձև, հրամանագիր, կարգադրություն, իմպիչմենտ*

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ընդունվեցին մի շարք նորմատիվ իրավական ակտեր, որոնցից առանձնակի կարևորվում էր 1995 թ. հուլիսի 5-ին ժողովրդավարական հանրաքվեով ընդունված նոր սահմանադրությունը, որով սկիզբ դրվեց օրենսդրական արմատական ձևափոխմանը:

Ընդունված սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց կառավարման ձևի մոդելով նախագահական հանրապետություն: Հռչակելով իր անկախությունը Հայաստանի Հանրապետությունը գործնական քայլեր կատարեց իրավական պետության հիմքերը ստեղծելու ուղղությամբ՝ շրջադարձ դեպի շուկայական հարաբերությունները, սահմանադրական բարեփոխումները, իշխանությունների տարանջատման սկզբունքի կիռարումը, դատական համակարգի կատարելագործումը և օրենսդրության ժողովրդավարացումը: Այս ամենը նախադրյալներ ստեղծեցին երկրում ժողովրդավարական իշխանություն ստեղծելու համար:

Սահմանադրության 3-րդ գլուխը վերաբերում էր հանրապետության նախագահի ինստիտուտին, վերջինիս ընտրության կարգին, փոխհարաբերություններին պետական իշխանության մյուս մարմինների, ինչպես նաև դատական իշխանության հետ ու նրա կողմից հրատարակվող նորմատիվ իրավական ակտերին հրամանագրերին և կարգադրություններին:

Պետության ղեկավարի պաշտոնը գոյություն ունի թե նախագահական,թե պառլամենտական և թե կիսանախահագան կառավարման ձևեր ունեցող

երկրներում: Նախագահի ինստիտուտի հայրենիքը ԱՄՆ-ն է, որն աշխարհում ամենազորեղն է: Ամերիկայի Միացյալ Նահանգները այն եզակի պետություններից է, որի ստեղծման հիմքում դրված է մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, ի դեմս «անկախության հռչակագրի», «ԱՄՆ Սահմանադրության» և «Իրավունքների մասին բիլի»:

ԱՄՆ Սահմանադրությունում ամրագրված է նախագահական հանրապետության ձևը: Սահմանադրության նախաբանը լինելով շատ համառոտ ըստ էության հռչակում էր սահմանադրության ընդունման պատճառները և նպատակները: Եվրոպայում նախագայի ինստիտուտը կիրառություն գտավ Ֆրանսիայում և Շվեյցարիայում, իսկ մինչև 19-րդ դարի վերջը եվրոպական մյուս երկրները մնացին միապետություններ:

ԱՄՆ սահմանադրության համաձայն գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին: Քաղաքական ասպարեզում նա կենտրոնական դեմքն է, համատեղում է պետության գլխի և կառավարության գլխի գործառույթները:

Կառավարման տարբեր ձևերում պետության ղեկավարի լիազորությունները տարբեր են: Որոշ երկրներում պետության ղեկավարի գործառնությունները սոսկ ձևական են, մյուսներում՝ մարմնավորում են իրական իշխանությունը: Սակայն, բոլոր պայմաններում, պետության ղեկավարը պահպանում է որոշակի սեփական լիազորություններ՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին աշխարհում [1]:

Հայաստանի Հանրապետության նախագահի ինստիտուտը 2015 թվականի խմբագրությամբ ընդունված սահմանադրությամբ ենթարկվել է էական փոփոխությունների ինչը, առաջին հերթին, պայմանավորված է կիսանախագահական կառավարման ձևից պառլամենտական կառավարման ձևին անցման հանգամանքով:

Խորհրդարանական կառավարման համակարգը ժամանակակից պետական կառավարման ձևի տարատեսակներից մեկն է, որի դեպքում պետական կյանքի կազմակերպման մեջ գլխավոր դերը պատկանում է պառլամենտին:

Որպես կանոն պառլամենտական հանրապետությունում հանրապետության նախագահի գործառույթները խորհրդանշական են, նա իր գլխավոր գործառույթները իրականացնում է կառավարության հետ համագործակցությամբ: Ըստ փոփոխված սահմանադրության, Հանրապետության Նախագահ ընտրվելու ոչ թե համապետական ուղղակի ընտրություններով, այլ Ազգային Ժողովի կողմից յոթ տարի ժամկետով ու ընդորում նույն անձը հանրապետության նախագահ կարող է ընտրվել մեկ անգամ:

Աշխարհի շատ երկրներում նախագահների ընտրության կարգը և ժամկետները տարբեր են, օրինակ ԱՄՆ, Հունգարիա, Ռումինիա, Կոստա-Ռիկա չորս տարի է, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Պորտուգալիա, Չեխիա հինգ տարի է, Ավստրիա, Եգիպտոս, Ֆինլանդիա, Մեքսիկա վեց տարի է, Իտալիա, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Հայաստան յոթ տարի է:

Շատ երկրների գործող օրենսդրության մեջ սահմանվում է նաև նախագահի տարիքային ցենզը այդ թվում Նիկարագուա-25, Վենեսուելա, Դոմինիկյան հանրապետություն-30, Ավստրիա, Հունգարիա, Մեքսիկա, ԱՄՆ, Պորտուգալիա, Հայաստանի Հանրապետություն-35, Գերմանիա, Եգիպտոս, Հունաստան-40, Իտալիա, Նիգերիա-50, Մոզամբիկ-65:

Աշխարհի տարբեր պետություններում հանրապետության նախագահները համարվում են պաշտոնատար անձինք, ովքեր յուրահատուկ տեղ են զբաղեցնում պետական մարմինների համակարգում: Շատ պետություններում հանրապետության նախագահը չի մտնում իշխանության որևէ ճյուղի մեջ, և կատարում է բացառապես ներկայացուցչական գործառույթներ: Այդպիսի պետությունների շարքին է դասվում է նաև ՀՀ-ն:

Արտասահմանյան մի շարք պետություններում, ինչպես օրինակ Հնդկաստանում, նախագահը կատարում է և գործադիր, և օրենսդիր գործառույթներ, իսկ որոշ երկրներում ինչպես օրինակ ԱՄՆ-ում, նախագահը գործադիր իշխանության մասն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պառլամենտական հանրապետություններում նախագահի ունեցած լիազորությունները, ըստ էության իրականում գտնվում են գործադիր իշխանության ղեկավարի ձեռքում: Այս առումով պառլամենտական կառավարման ձև ունեցող շատ հանրապետություններում նախագահի կողմից ընդունված ակտերը ենթակա էն կոնտրասիգնացիայի (ամրագրում, կրկնաստորագրում) գործադիր իշխանության ղեկավարի կամ այն նախարարի կողմից, որը պատասխանատու է տվյալ ոլորտի գործերի վիճակի համար. հակառակ պարագայում նախագահի կողմից ընդունված ակտը իրավական ուժ չի կարող ունենալ [2]:

Փաստացի դրանք գործադիր իշխանության ակտերն են, որոնց տակ կառավարության ղեկավարի ստորագրության կողքին դրվում է նաև նախագահի ստորագրությունը այդ ակտերին ավելի մեծ հեղինակություն և իրավական կշիռ հաղորդելու համար:

Գործող սահմանադրության 139-րորդ հոդվածի համաձայն, որպես նորմատիվ իրավական ակտեր, որը նախագահը ընդունում է իր լիազորությունները իրականացնելիս համարվում են հրամանագրերը և կարգադրությունները:

Ինչ վերաբերվում է պառլամենտական հանրապետություններում նախագահի ընտրության կարգին ապա գործում է ընտրության երեք տարբերակ՝

Նախագահ ընտրվում է միայն խորհրդարանի կողմից (ՀՀ և Իսրայել)

Նախագահի ընտրության համար խորհրդարանի պատգամավորներից և տարբեր մակարդակների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից ձևավորվում է համապատասխան ընտրիչների կոլեգիա: Նման ձև է գործում Իտալիայում:

Այս կարգը վերաբերում է դաշնային կառուցվածք ունեցող երկրներին, որտեղ նախագահի ընտրության համար ձևավորվող ընտրիչների կոլեգիան

կազմի մեջ մտնում են խորհրդարանի երկու պալատների պատգամավորները և դաշնության սուբյեկտների ներկայացուցիչները: Նման կարգով նախագահ է ընտրվում Գերմանիայի Դաշնությունում:

Բավականին հետաքրքիր կարգավիճակ ունի Բուլղարիայի նախագահը: Չնայած նրան, որ կառավարման ձևով պառլամենտական հանրապետությունն է, սակայն երկրի նախագահը անմիջականորեն ընտրվում է ժողովրդի կողմից ստանալով մի անգամից առաջնային մանդատ:

Ինչ վերաբերվում է ՀՀ նախագահի ընտրության կարգին սահմանվել են որոշակի սահմանադրական չափորոշիչներ, այդ թվում նա պետք է լինի 40 տարեկան վերջին վեց տարում պետք է միայն հանդիսանա ՀՀ քաղաքացի, վերջին վեց տարին մշտապես բնակվի ՀՀ-ում, ունենա ընտրական իրավունք և տիրապետի հայերենին:

Հանրապետության նախագահի ընտրության առաջադրված կարգը պայմանավորված է սահմանադրական մարմինների համակարգում հանրապետության նախագահին վերապահված դիրքով և նրա հիմնական գործառույթով հետևելու սահմանադրության պահպանմանը: Այդ գոռծառույթը արդյունավետ իրականացնելու համար հանրապետության նախագահը պետք է լինի վեր կուսակցական, չեզոք և անկողմնակալ:

Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգ Սահմանադրական օրենքով (հոդված 139): Սահմանադրությամբ կարգավորվում են նաև նախագահի արտահերթ ընտրությունները, (126-հոդված և կանոնակարգ օրենքի 49 հոդված) Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո տասներորրդ օրը Ազգային ժողովի հատուկ նիստում՝ ժողովրդին տրված երդմամբ: Պաշտոնը ստանձնելուց հետո հանրապետության նախագահի անձը ձեռք է բերում անձեռնմխելիության կարգավիճակ:

Գործող սահմանադրության 141-երորդ հոդվածի համաձայն, իրականացվում է հանրապետտության նախագահի պաշտոնանկության հարցը,որի համաձյան նա կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ սահմանադրության կոպիտ խախտման համար: Այս ինստիտուտը, որը արտասահմանյան սահմանադրական իրավունքում հայտնի է Իմպիչմենտ անվամբ, գործուն երաշխիք է պետության ղեկավարի կողմից իշխանությանը չարաշահելու և սահմանադրական կարգը խախտելու դեմ:

Նախագահի պաշտոնանկության ինստիտուտը հայտնի է ժողովրդավարական կառավարման ձևը ունեցող բոլոր պետություններին: Օրինակ ԱՄՆ-ում նախագահի նկատմամբ կարող է սկսվել իմպիչմենտի գործընթացը, եթե նա իրեն մեղավոր ճանաչի պետական դավաճանության կաշառակերության և այլ ծանր հանցագործության մեջ: Այս գործընթացը սկսում է ներկայացուցիչների պալատը մեղադրանքը պարունակող փասթաթուղթը փոխանցվում

է Սենատ, որը քննելով գործը կայացնում է որոշում: Տվյալ գործով Սենատի գործունեությունը նախագահում է ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախագահը [3]:

ԱՄՆ-ի ողջ պատմության ընթացքում Կոնգրեսը ավելի քան 60 անգամ քննություն է սկսել իմպիչմենտ կիրառելու շուրջ, բարձրագույն պետական ծառայողների հանդեպ, որոնց մեջ եղել են տարբեր մակարդակի ու աստիճանի պաշտոններ զբաղեցնող անձիք՝ Պրեզիդենտներ, Կոնգրեսականներ, Սենատորներ, Դիվանագետներ, Ֆեդերալ դատավորներ: Օրինակ, 1974 թ. պրեզիդենտ Ռ. Նիքսոնը, ստիպված եղավ հրաժարական տալ այն բանից հետո, երբ ներկայացուցիչների պալատի իրավաբանական կոմիտեն նրան մեղադրանքներ ներկայացրեց իմպիչմենտի ընթացակարգով:

Ինչ վերաբերվում է Ֆրանսիայի նախագահի կարգավիճակին, ապա այն որոշվել է 1958 թ. սահմանադրությամբ և նախագահական իշխանության գաղափարը իր արտացոլումն է գտել հիմնական օրենքի 2-րդ բաժնում: Հանրապետության նախագահը իր գործունեությամբ պարտավոր է ապահովել պետական մարմինների բնականոն աշխատանքը, նա ազգային անկախության և տարածքային ամբողջականության երաշխավորն է:

Այսպիսով, Նախագահը դառնում է պետական կառավարման համակարգում կենտրոնական դեր ունեցող անձ: Գործող սահմանադրության 142 հոդվածի համաձայն Հանրապետության նախագահը իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը համարվում է ընդունված օրենքով սահմանված կարգով, այն հրապարակվելու պահից: Ազգային ժողովի նախագահը հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշումը ստորագրում և հրապարակում է անհապաղ, նախագահի պաշտոնանկությունը հայտարարվում է նրա կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, որից հետո նա կորցնում է սահմանադրական անձեռնամխելիությունը և որպես սովորական քաղաքացի կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Հայաստանի Հանրապետությունում բացակայում է փոխնախագահի պաշտոնը, որը պետք է փոխարիներ նրան, այս դեպքում նրա պարտականությունները կատարում է ԱԺ նախագահը մինչև նոր հանրապետության նախագահի ընտրությունը:

Ելնելով պետության կառավարման պառլամենտական ձևից հանրապետության նախագահը ամենից առաջ պետության գլուխն է, նրա ղեկավարը, ուստի նրա իրավական վիճակի միջուկն են կազմում պետության գլխի համար նրան վերապահված լիազորությունները: Որպես պետության գլուխ Հայաստանի հանրապետության նախագահը ունի մի շարք լիազորություններ արտաքին հարաբերությունների ոլորտում (Սահմանադրության 132 հոդված):

Այդ լիազորությունները նա իրականացնում է գործադիր իշխանության և նրա ղեկավարի հետ մեկ տեղ: Ինչ վերաբերվում է պետության արտաքին

և ներքին քաղաքականության իրականացմանը, այն իրականացնում է Հայաստանի կառավարությունը, քանի որ արտաքին քաղաքական գործընթացներում նախաձեռնության իրավունքը պատկանում է կառավարությանը և վարչապետին: Որպես պետության գլխի նախագահի լիազորությունների իրականացման առավել կարևոր ոլորտներից է միջազգային պայմանագրերի կնքումը, որը նախատեսված է գործող սահմանադրության 132 հոդվածով: Ըստ այդ հոդվածի հանրապետության նախագահը օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջազգային պայմանագրերը կնքվում է կառավարության առաջարկությամբ: Հիմք ընդունելով այս նորմը, նշանակում է, որ միջազգային պայմանագրերի բովանդակությունը նախապես մշակվում և կազմվում է կառավարության կողմից ու հանրապետության նախագահը չի կարող փոփոխություններ մտցնել դրանցում [4]:

Դատական իշխանության ոլորտում նախագահի լիազորություններից առավել կարևոր է ներում շնորհելու նրա սահմանադրական իրավունքը: (Սահմանադրության 135 հոդված): Ինչպես և համաներումը, ներումը կարող է իրավական հետևանքներ ունենալ: Այսպիսով ներումը նախագահի ակտն է, որով հանցագործության համար դատապարտված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոփոխվել ավելի մեղմ պատժատեսակով կամ կարող է վերացվել դատվածությունը: Դրանով իսկ սահմանվում է որ ներման ակտի միջոցով անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Ներման ակտով չի կարելի ազատվել պատժից, քանի դեռ դատավճիռը չի կայացվել ըստ էության ներումը վերաբերվում է միայն այն անձանց, որոնց նկատմամբ դատավճիռ է կայացվել և ովքեր պատիժն են կրում: Ներումը ինչպես նաև համաներումը արտադատական ակտ է:

Ամփոփելով պետք է նշենք, որ ՀՀ նախագահի ինստիտուտը պառլամենտական կառավարման ձև ունեցող համակարգի երկրների նման լայն լիազորություններ չունի, սակայն ցանկալի է, որ նա բացի վերոհիշյալ լիազորություններից ունենա նաև մի շարք այլ լիազորությունները: Այդ թվում՝

Իր իրավասության մեջ մտնող հարցերով ունենա օրենսդրական նախաձեռնության իրավունք,

Նախագահը ի պաշտոնե անվտանգության խորհրդի անդամ է: Նպատակահարմար կլինի, լիազորությունների ավարտից հետո, արգելել անձնական գործերով 10 տարի երկրից դուրս գալը: (Ցանկալի է որ այս արգելող իմպերատիվ նորմը տարածվի նաև անվտանգության խորհրդի մյուս անդամների վրա նույնպես):

- Հանրապետությանն արտաքին վտանգ սպառնալու դեպքում, երկրում անահպաղ հայտարարի պատերազմական վիճակ և իրականացվի զորահավաք,
- Վարել խաղաղության հաստատման համար բանակցությունների

գործընթացը,
- Նախագահի ընտրությունները դարձնել ուղղակի և վերջինս պետք է ընտրվի անմիջապես ժողովրդի կողմից, որ նրանից ստանա առաջնային մանդատ:
- Հանրապետության նախագահի գործունեության և իրավասության ժամկետները սահմանել 5 տարի և թույատրել նույն անձին 2 անգամ ընտրվել նախագահի պաշտոնում,
- Հանրապետության նախագահի հրաժարականի հարցերը կարգավորել գործող ընթացակարգերով և առանձին օրենքով:

Հաշվի առնելով պառլամենտի դերի բարձրացումը, խստացնել պատգամավորի թեկնածուների ներկայացված ցենզերը, նվազագույն տարիքը սահմանել 30 տարին լրացած, իսկ բնակության ցենզը վեց տարին միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալը և մշտապես բնակություն ունենալը:

Գրականություն

- **Арутюнян А.**, Институт президента в постсоветских республиках: конституция и политическая реальность (сравнительно-правовой анализ) – Ереван, 2006, с. 13.
- Глава государства, под. ред. **А. М. Осавелюка**, Москва, 2021, с. 33-34.
- **Խաչատրյան Հ.**, Ամերիկայի միացյալ նահանգների սահմանադրությունը, Երևան, 1991, էջ 35:
- **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.** Հայաստանի Հանրապետության 2015 թ. սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 183-185:

INSTITUTE OF THE PRESIDENT OF THE REPUBLIC IN THE SYSTEM OF PARLIAMENTARY GOVERNANCE

Mkrtich Muradyan

Yerevan Haybusak University

The author discusses the significance and current state of the institution of the president in countries with a parliamentary system of government. The functions and powers of the President of the Republic of Armenia are presented, controversial and controversial issues are identified. The role of the president in pardons and amnesties is covered.

At the end of the article, the author gives his recommendations regarding expanding the powers of the presidential institution in the Republic of Armenia.

Keywords: head of state, suffrage, pardon, amnesty, parliamentary form of government, decree, resolution, impeachment.

ИНСТИТУТ ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ В СИСТЕМЕ ПАРЛАМЕНТСКОГО УПРАВЛЕНИЯ

Мкртич Мурадян

Ереванский университет Айбусак

Автор рассуждает о значении и современном состоянии института президента в странах с парламентской системой правления. Представлены функции и полномочия Президента Республики Армения, выявлены спорные и неоднозначные моменты. Освещена роль президента в помиловании и амнистии. Даны рекомендации относительно расширения полномочий института президента в Республике Армения.

Ключевые слова: глава государства, избирательное право, помилование.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-14

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՒՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 1911-1912ԹԹ.

[1]Նարեկ Մարտիրոսյան, [2]Վահե Թորոսյան

[1]ՀՀԳԱԱ պատմության ինստիտուտ, [2]Երևանի «Հայբուսակ» համալսարան

Մուտքագրված է 02.04.24, գրախոսված է՝ 18.05.24, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Ներկայացվում է Օսմանյան կայսրությունում՝ հատկապես Արևմտյան Հայաստանում, մարդու իրավունքների իսպառ բացակայությունը: Օսմանյան խորհրդարանի 1911-1912թթ. քննարկումներից և հայ պատգամավորների մղած բուռն պայքարից պարզ է դառնում, թե ինչ տեսակ անլուր բռնությունների են ենթարկվել հայերը Օսմանյան կայսրությունում և հատկապես Արևմտյան հայաստանում: Չնայած խորհրդարանում հայտնված քուրդ և թուրք ազնվականության համառ դիմադրությանը, հայ պատգամավորները որոշակի հաջողություններ այնուամենայնիվ արձանագրում են:*

Հիմնաբառեր. *Օսմանյան խորհրդարան, Սահմանադրություն, Արևմտյան Հայաստան, հայ պատգամավորներ, տոհմիկ ազնվականություն, մարդու իրավունքներ:*

Օսմանյան կայսրությունում ամենացավոտ խնդիրը մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հարցն էր: Օսմանյան կայսրությունում՝ հատկապես նրա արևելյան նահանգներում, մարդիկ ենթարկվում էին տարատեսակ ազգային կրոնական ճնշումների, դառնում էին պետական պաշտոնյաների և տոհմիկ ազնվականության կամայականությունների զոհը: Իրավունքների իրացման առումով արևմտահայությունը Օսմանյան կայսրության ամենատառապյալ ժողովուրդն էր: Ազգային և կրոնական հալածանքներից բացի, հայերը ենթարկվում էին տեղական պաշտոնյաների և քուրդ ու թուրք էշրաֆների հարկային կամայականություններին և տարատեսակ անլուր բռնություններին: Ավելին՝ հայերը համարվում էին տեղական քուրդ ցեղապետերի մասնավոր սեփականությունը և դրա համար վճարում էին «Խաֆիրության» և «ղշլախության» հարկերը:

Խաֆիրությունը քուրդ լեռնական ցեղապետերի հորինած հարկատեսակն էր [1]: Նրանց վերահսկողության տակ գտնվող տարածքներում բնակվող հայերը պարտավոր էին խաֆիրության հարկ վճարել, մյուս ցեղերի ասպատակություններից պաշտպանելու դիմաց: Նմանատիպ ծագում ուներ նաև ղշլախությունը: Սա համակեցության բռնի և հետամնաց մի հարկատեսակ էր: Արևմտահայերը պարտավոր էին ամեն տարի ձմեռակացով ապահովել քրդական ցեղերին, երբ վերջիններս իրենց ընտանիքներով և անասուններով

իջնում էին սարերից:

Այս ամենից բացի, հայերը ենթարկվում էին տարատեսակ բռնությունների՝ առևանգումներ, թալան, կոտորած և այլն:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո այս բոլորը արգելվեց: Սակայն ընդամենը մեկ տարի անց միջնադարյան այդ մղձավանջը վերադարձավ: Սահմանադրական կարգերի վերականգնումից հետո Օսմանյան խորհրդարանն այն բարձրագույն ատյանն էր, որտեղ հայ պատգամավորները կարող էին բարձրացնել արևմտահայությանը հուզող այս խնդիրները:

1911թ. ապրիլի 5-ին խորհրդարանը քննարկում է ընտանեկան-ամուսնական հարցերին առնչվող օրինագիծ, թե ինչպես պատժել ամուսնական անհավատարմությունները և առևանգումները: Նախ խորհրդարանը դատապարտեց ամուսնացած կնոջ հետ հարաբերություններ ունենալը: Ներկայացված օրինագծի համաձայն, նման դեպքերում տղամարդը դատապարտվում էր 13 տարվա, իսկ նույն գործողությունը բռնությամբ զուգորդված լինելու դեպքում՝ 5 տարվա ազատազրկման [2]: Նույն հանցանքը կատարելու դեպքում իգական սեռի ներկայացուցիչների համար սահմանվում էր մահապատիժ: Այս առիթով Գ. Զոհրապը ծավալուն ելույթ է ունենում պաշտպանելով օսմանցի կանանց իրավունքները: Պատգամավորը պահանջում է մեղմացնել ամուսնական անհավատարմության մեջ մեղադրվող կանանց համար նախատեսված պատիժները՝ համարելով դրանք անարդար: Սակայն խորհրդարանն ընդունում է կառավարության ներկայացրած նախագիծն առանց փոփոխությունների: Նախագծի 206-րդ հոդվածի հավելվածը պատիժներ էր սահմանում բռնի առևանգում իրականացնողների համար: Այս հոդվածի վերջին հատվածը գրված էր Շերիաթի դրույթներին համապատասխան: Զոհրապն առաջարկում է, որ առևանգիչը պատժվի, նույնիսկ եթե պահպանի շերիաթի ամուսնական արարողությունը՝ նիկեահը: Այդպիսի պատժազերծումն, ըստ հայազգի պատգամավորի, կարող էր քաջալերում դառնալ առևանգիչների համար, որոնք այդ օրերին Անատոլիայում պատուհաս էին դարձել: Գ. Զոհրապն ընդգծում է նաև, որ դա բարբարոսություն է և անթույլատրելի 20-րդ դարում [3]:

Գ. Զոհրապի այս տեսակետը բախվեց ուլեմների (մահմեդական հոգևորականների), արդարադատության նախարարի և Մուսթաֆա Արիֆ, Սեյիդ բեյերի համառ դիմադրությանը, որոնք պահանջում էին պահպանել շերիաթի կանոնը: Իսմայիլ Մահիրը, Հոջա Մուսթաֆան և մի շարք այլ երեսփոխաններ պաշտպանեցին Գ. Զոհրապի առաջարկը: Արդյունքում՝ խորհրդարանն ընդունեց Զոհրապի և ևս 9 այլ պատգամավորների ներկայացրած նախագիծը, որն առաջարկում էր նույնիսկ նիկեահի պահպանման դեպքում պատժել առևանգիչին: Երեսփոխանները կարծում էին, որ այս օրենքի ընդունումով Անատոլիայում խաղաղություն կհաստատվի[4]: Այս օրենքը չափազանց կարևոր էր արևմտահայերի համար: Մահմեդականները հայուհիներին

փախցնելուց, բռնի կրոնափոխ անելուց հետո նրանց հետ ամուսնանալով անպատիժ էին մնում: Իսկ օրենքի ընդունումը Գ.Զոհրապի պաշտպանած տարբերակով կարող էր զսպաշապիկ լինել առևանգիչների համար: Գ.Զոհրապի այս միջամտությունն իր դրական արդյունքը տվեց: Մայրաքաղաքում ծնված, մեծացած և իր գործունեությունը ծավալած հայազգի պատգամավորը քաջածանոթ էր արևմտահայության բոլոր խնդիրներին: Գ.Զոհրապի գրեթե բոլոր ելույթները նպատակամղված էին արևմտահայերի կյանքի և գույքի ապահովության կայացմանը, նրանց կենսամակարդակի բարելավմանը, օրենքի ուժով արդարության և հավասարության հաստատմանը: Սա հերթական կարևոր քայլն էր արևմտահայության բնականոն կյանքը ապահովելու ուղղությամբ:

1912թ. մայիսի 5-ին երկրորդ գումարման խորհրդարանի քննարկմանն է դրվում քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածը: Այստեղ, ինչպես գրեթե միշտ, իր իրավաբանական գիտելիքներով փայլում է Գրիգոր Զոհրապը: Այս հոդվածը մինչև մեկ տարի բանտարկություն էր սահմանում այն մարդկանց համար, ովքեր իմանալով որ ապրանքը գողացված է վաճառում են կամ միջնորդում նրա վաճառքի համար: Նիգդեի պատգամավոր Անանիասը դիտարկում է, որ հոդվածում ոչ մի խոսք չկա գողացված ապրանքը նվիրողների կամ վարձակալության տվողների մասին: Ադանայի պատգամավոր Իլմի բեյը շեշտեց, որ հոդվածը շատ կարևոր է գավառներում անդորրություն հաստատելու համար [5]:

Խնդիրը հանգամանալից լուսաբանում է Գրիգոր Զոհրապը. «Մի մոռնաք, որ Ժողովիս բերուած յոդուածը առհասարակ գողութեան մասին է, մինչդեռ մէկ քանի երեսփոխաններ, մասնաւորապէս գաւառէն եկած պաշտոնակիցները, կը խօսին կենդանիի գողութիւններու վրայ, և կ'ուզեն ըստ այնմ փոխել յօդուածին ոգին: Ասիկա ճիշտ չէ» [5]: Պատգամավորը բացատրում է, որ հոդվածը կարելի է քննել, բայց չհաստատել: Նա կարծում է, որ չի կարելի պատժել մի մարդու, ով գումար է տալիս և գնում ապրանքը, և հետո միայն իմանում որ ապրանքը գողոն է: Զոհրապը անտեղի է համարում նաև կեղծ դրամ գնողների և վաճառողների մասին բերված օրինակը: Ըստ հայ պատգամավորի, սրանք տարբեր երևույթներ են, քանի որ կեղծ դրամը արժեք չունի, իսկ ձին ունի, և հետևաբար գողացված ձի վաճառողը արժեք է վաճառում, իսկ կեղծ դրամ վաճառողը՝ ոչ: Զոհրապը նշում է, որ նմանատիպ հանցանքների համար որոշված պատժի ժամկետը նորմալ է, ավելին, ըստ իր անձնական կարծիքի պատիժը կարելի է մեծացնել՝ հաշվի առնելով մեղադրվող քաղաքացու սոցիալական դիրքը հասարակության մեջ: Զոհրապի առաջարկով հոդվածը վերադարձվում է դատական հանձնաժողովին՝ վերանայելու [5]: Ինչպես երևում է Զոհրապի ելույթի բովանդակությունից, այս հոդվածը վերաբերում էր ոչ միայն գողացված անասունների վաճառքին, այլ ուներ ընդհանրական

բնույթ: Հետևաբար սխալ կլինի կարծել, թե երիտթուրքերը քայլեր էին կատարում Արևմտյան Հայաստանում ծայր առած հափշտակությունները կանխելու ուղղությամբ:

1912թ. մայիսի 19-ին Խորհրդարանն անդրադարձավ հանրային գումարումների (ցույցերի, հանրահավաքների) ազատության օրենքին: Այս օրենքը քննարկվել էր դեռևս 1909թ. Փետրվարին: Այս անգամ կառավարությունը ներկայացրել էր օրենքի հավելված, որը հնարավորություն էր տալիս կառավարությանը արգելել ցույցերը, հանրահավաքները և ժողովները բացօթյա տարածքներում: Ինչպես նախորդ, այնպես էլ այս անգամ, քննարկումն անցավ թեժ մթնոլորտում: Նախագծի դեմ իրենց ելույթներով աչքի ընկան նաև հայ երեսփոխանները, մասնավորապես Վարդգեսը: Օրենքի հավելվածը պատճառ դարձավ նոր ընդդիմության ձևավորման համար: Հավելվածը բաղկացած էր հետևյալ հոդվածներից [6].

«Յոդ. 1. Կառավարութիւնը կրնայ արգիլել բացօդեայ վայրերու մէջ կատարուելիք գումարումները՝ երկրին անդորրութիւնն ու հանդարտութիւնը պահպանելու համար:

Յոդ. 2. Ներկայ օրէնքը գործադրելի է իր հրատարակման թուականէն սկսելով:

Յոդ. 3. Ներքին գործերու նախարարութիւնը պաշտօն ունի ներկայ օրէնքը գործադրելու»:

Հավելվածը ներկայացնող Շեֆիգ բեյը բացատրեց, որ օրենքը չի արգելում փակ վայրերում հրավիրվող ժողովները, պայմանով, եթե դրանցում բացակայում է ցանկացած զինատեսակ: Բանախոսը պնդում է, որ այս օրենքը հնարավորություն կտա կառավարությանը արգելել այն ցույցերը, որոնք կարող են վտանգ սպառնալ երկրի անդորրությանը: Շեֆիգ բեյը շեշտում է, որ հավաքների մասին առաջին օրենքը Ֆրանսիայում ընդունվել է 1791թ. և 120 տարվա ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել, մինչդեռ իրենք չեն կարող վերցնել և մեկ օրում ստանալ այն օրենքը ինչ Ֆրանսիան ստացել է 120 տարում: Բանախոսի վկայությամբ Ֆրանսիայում և Բելգիայում գործող օրենքները նույնքան խիստ են, որքան իր կառավարության ներկայացրածը [7]: Շեֆիգ բեյի ելույթին հակադարձում և հավելվածը քննադատության թիրախ է դարձնում հայազգի պատգամավոր Վարդգեսը, ով հայտարարում է. «Եւրոպայի մէջ այնքան լաւ օրէնքներ կան, բայց կառավարութիւնը անոնցմէ ոչ մէկը կ՚առնէ ու ամէնէն պահպանողական օրէնքները կ՚ուզէ գործադրել մեր երկրին մէջ: … Սահմանադրութեան առաջին տարիէն ի վեր հետզհետէ դէպի ետ սկսած ենք դիմել, յետաշրջութիւն մը ընել: Ինչու՞. որովհետեւ Ապտիւլ Համիտի օրէնքներուն վարժուած ենք ու նոր, սահմանադրական օրէնքները կ՚երեւան մեզի. ասոր համար է որ ռէաքսիօն (իրինճա) կ՚ընենք» [10]: Սերենկուլյանի ելույթին միջամտում է խորհրդարանի նախագահը՝

շեշտելով, որ իրինճան նշանակում է դեպի հետ դիմել: Վարդգեսը վերջինիս պատասխանում է, որ հենց այդ իմաստով է կիրառել եզրույթը: Իթթիհատական երեսփոխան Իսմայիլ Ջանփոլատ բեյը պատասխանում է Վարդգեսին, որ նրա ներկայացրած ազատությունները միայն Անգլիայում կան, քանի որ տեղի ժողովուրդն այնքան զարգացած է, որ ժողովների ժամանակ անկարգություններ տեղի չեն ունենում, ինչը չես կարող ասել Օսմանյան կայսրության բնակչության մասին:

Կառավարության օրինագիծը, քննադատության թիրախ է դառնում նույնիսկ իթթիհատական պատգամավորներ Մեհմեդ Ջիսրիի ու Մյունիր և Սևրեթ բեյերի համար: Այս առիթով առաջին անգամ օսմանյան խորհրդարանում ելույթ ունեցավ Սվազի նորընտիր հայազգի պատգամավոր դաշնակցական Կարապետ Փաշայանը, ով շեշտեց, որ տարբերություն չի տեսնում բաց և փակ վայրերում տեղի ունեցող ժողովների միջև: Ըստ Փաշայանի, Ամերիկայում նույնպես հաճախ ժողովներ են լինում փակ վայրերում, որոնք կռվի են վերածվում: Ավարտելով ելույթը Փաշայանը հերքում է այն տեսակետը թե բացօթյա ժողովները ավելի վտանգ են պարունակում [6]: Պատգամավորը նկատեց, որ օրինագծին կողմ և դեմ արտահայտվողները խոսում են ազատության անունից, այնինչ ազատությունը լինում է մեկ տեսակի, և որ միայն նրա մասին ըմբռնումներն են տարբեր: Հայազգի պատգամավորը սահուն և գրագետ թուրքերենով իր գործընկերներին ներկայացնում է տիրող իրականության ամբողջական պատկերը: Փաշայանը վստահեցնում է, որ այս բոլոր քայլերը սահմանադրության ծառին իջնող կացնի հարվածներ են, որի արդյունքը չի ուշանա: Փաշայանը ելույթն ավարտում է հետևյալ խոսքերով. «Կա՛մ բոլորովին արգիլեցէք բացօդեայ գումարումները, և կա՛մ մերժեցէ՛ք կառավարութեան առաջարկը: Ես մերժումի կուսակից եմ» [6]:

Կ.Փաշայանի ելույթից հետո կառավարության օրինագծին դեմ են խոսում նաև Չամըգի անկախ երեսփոխան Շահին բեյը և Կեսարիայի անկախ պատգամավոր գնդապետ Ալի Կալիպ բեյը [7]: Սակայն վերջինս իր ելույթի ժամանակ եվրոպական երկրներից օրինակներ բերելիս տալիս է Իտալիայի անունը, և ժողովը լռեցնում է նրան [8]: Կ. Փաշայանի ելույթն ամբողջությամբ ուղղված էր ինչպես սահմանադրության պաշտպանությանը, այնպես էլ ժողովրդավարության հաստատմանը, ինչից չափազանց հեռու էին թե՛ իշխող կուսակցությունը, թե՛ կառավարությունը և թե կայսրության բնակչության ճնշող մեծամասնությունը:

Թեև երկուսուկես ժամ տևած թեժ բանավեճի ընթացքում խորհրդարանը անխնա քննադատության ենթարկեց հավելվածը, սակայն, այդուհանդերձ օրինագիծն ընդունվեց: Կառավարության ցանկությանն ընդառաջող այս քայլն ուներ արտաքին քաղաքական երկու դրդապատճառ՝ նախ. Իտալա-թուրքական ձգձգվող պատերազմը և երկրորդ՝ Ալբանական ճգնաժամը:

Իտալա-թուրքական պատերազմը պատճառաբանելով՝ երիտթուրքական կառավարությունը հեղինակում էր մեկը մյուսից ավելի հետադիմական օրինագծեր:

1912թ. մայիսի 28-ին, խորհրդարանում տեղի է ունենում Բացօթյա գումարումների (ցույցերի, ժողովների) օրենքի հավելվածի երկրորդ ընթերցումը խորհրդարանում տեղի է ունենում 1912թ. մայիսի 28-ին: Օրինագծի հետ կապված օրենսդրական ուղղում էր ներկայացրել Հարություն Պոշկեզենյանը: Հայազգի երեսփոխանը ներկայացրել էր հետևյալ փոփոխությունը. տեղական իշխանությունները կարող են բացօթյա հավաքները արգելել միայն այն դեպքում երբ հիմնավոր ապացույցներ կան, որ հասարակական կարգը (Էմնիյեթը ումումիյե) խախտվելու վտանգի տակ է [8]: Բնականաբար կառավարությունը մերժեց այս առաջարկը: Այնուհետև ելույթի իրավունք է խնդրում Վարդգեսը, ով նախապես առաջարկել էր ընդհանրապես մերժել կառավարության օրինագիծը: Խորհրդարանի նախագահը հրաժարվում է Վարդգեսին ձայն տալ՝ պատճառաբանելով, որ նախագծի մերժումը կարելի է քննարկել միայն փոփոխությունները քննարկելուց հետո:

Խորհրդարանը համառորեն մերժում էր ցույցերի և ժողովների մասին օրենսդրական նախաձեռնությունները: Նախ մերժվեց Իզմիրի հայազգի պատգամավոր Վահան Պարտիզպանյանի նախագիծը, որն առաջարկում էր կառավարությանը թույլ տալ արգելել միայն աղմկալի հավաքները [9]: Ի դեպ սա հայազգի երեսփոխանի առաջին քայլն էր Օսմանյան խորհրդարանում: Մերժվեց նաև Սըտգը բեյի առաջարկը, որը պահանջում էր արգելել միայն քաղաքական ժողովները: Մի առաջարկ էլ արել էր հույն երեսփոխան Էմանուելիդիսը՝ հավաքները միայն խորհրդարանի որոշումով արգելելու մասին, որը ևս մերժվեց: Ընդունվում է միայն Նեջմեդին բեյի առաջարկած փոփոխությունը, որն ըստ էության, բովանդակային որևէ փոփոխություն չէր նախատեսում:

Իր գործունեությունը կարգավորող հարցերից հետո՝ մայիսի 27-ին, խորհրդարանն անդրադառնում է համախմբումների մասին օրինագծի քննարկմանը: Այս օրենքը վերաբերում էր ոչ թե խաղաղ ցույցերին ու միտինգներին, որոնց արգելման իրավունքն օրենքով իթթիհատական կառավարությունը ստացավ մի քանի օր անց՝ մայիսի 30-ին, այլ զինված քաղաքացիների կողմից (որպես կանոն՝ մահմեդականների) ճանապարհներին համախմբմանը: Գնդապետ Ալի Կալիպ բեյը ծավալուն ելույթ ունեցավ, որտեղ մերժում էր օրինագիծը այն համարելով ավելորդ, քանի որ ըստ գնդապետի, կառավարությունը կարգելի թե ոչ, միևնույն է համախբվողները կհամախմբվեն: Ալի Կալիպ բեյի այս խոսքերին դիտողություն է անում Հալեպի հայազգի երեսփոխան Հարություն Պոշկեզենյանը: Վերջինս նշում է, որ տվյալ տրամաբանությամբ եթե շարժվեն, ապա նաև պետք է մերժեն գողությունների

մասին օրինագիծը, քանի որ չնայած օրենքի գործադրմանը գողությունները չեն դադարում: Ավելին՝ հայազգի երեսփոխանը պաշտպանում է օրինագիծը՝ պատճառաբանելով որ Ադանայի աղետը հետևանք էր նաև նմանատիպ հավաքների [10]: Քննարկման վերջում խոսում է Կարապետ Փաշայանը, ով նշում է, որ դեմ չէ օրինագծին, չնայած դրա թերի լինելուն: Ապա տեղի է ունենում օրինագծի քննարկումն ըստ հոդվածների և այդ հոդվածներն ընդունվում են առանց որևէ փոփոխության:

Հավաքների, ցույցերի արգելման մասին կառավարության այս օրինագիծն ընդունվեց երկու օր անց՝ մայիսի 30-ին: Խորհրդարանի նախագահը նախապես կարդաց ներքին կանոնակարգի 42-րդ հոդվածը: Այն նախատեսում էր երկրորդ ընթերցման ժամանակ մի քանի հոդվածից բաղկացած օրինագծերի դեպքում, դրանք քվեարկելուց առաջ խոսք տալ դրանց մերժումը պահանջող երեսփոխաններին, սակայն ավելացրեց, որ սա չի վերաբերում մեկ հոդվածից բաղկացած օրինագծերին, ինչպիսին որ սա է: Մեկ հոդվածից բաղկացած օրինագիծը մերժող պատգամավորին խոսք տրամադրելը ինքնին անիմաստ էր համարվում: Վարդգեսը չհամաձայնեց նախագահի այս հայտարարության հետ՝ պատճառաբանելով որ այս օրինագիծը սահմանադրությանը հակառակ է, ուստի ենթակա է մերժման անկախ նրանից թե քանի հոդվածից է բաղկացած: Վարդգեսի տեսակետը կիսում են նաև գնդապետ Ալի Կալիպ բեյը և Մալաթիայի պատգամավոր Թևֆիկ բեյը [11]: Այնուամենայնիվ խորհրդարանի մեծամասնությունն ընդունում է նախագահի որոշումը [12]: Արդյունքում երիտթուրքական իշխանությունները կարողանում են ընդունել մարդու հիմնարար ազատությունները սահմանափակող այս հետադիմական օրենքը:

Կառավարության կողմից կոպտագույն սխալ էր ոչ մահմեդական քաղաքացիների զորակոչման մասին մայիսի 27-ի նոր որոշումը: Խոսքը վերաբերում էր 28-48 տարեկան ոչ մահմեդական քաղաքացիների պարտադիր զորահավաքին: Իրականում նախորդ օրը ոչ մահմեդական պատգամավորները հավաքվել էին Բ.Դռան մոտ և պահանջել կառավարությունից պառլամենտի վերին պալատի նիստից առաջ հավանություն տալ զորակոչին վերաբերող 76-րդ հոդվածին: Քրիստոնյա բոլոր պատգամավորների անունից խոսեց Գ. Զոհրապը: Հայազգի պատգամավորը հիշեցրեց կառավարությանը, որ ոչ իսլամների զորահավաքի մասին օրենքը առաջարկել են հենց ոչ իսլամ պատգամավորները: Սակայն այդ օրենքի համաձայն զորակոչը վերաբերել է 21-28 տարեկաններին, իսկ այժմ խոսքը գնում է 28-48 տարեկաններին: Զոհրապը բացատրում է, որ այս օրենքի իրականացումը տնտեսապես կքայքայի ժողովրդին և կդրդի նոր արտագաղթի [13]: Ավելին՝ հայազգի երեսփոխանը հիշեցնում է, որ այդ մարդիկ մինչ սահմանադրության հռչակումը, երկար տարիներ զինվորական տուրք են վճարել չծառայելու դիմաց (բեդելը

ասկերիյե), իսկ եթե կառավարությունը պատրաստվում է առարկել, թե այդ մարդիկ սահմանադրության հռչակումից մինչ այժմ տուրք չեն վճարել, ապա թող հաշվեն և կտեսնեն, որ 21-28 տարեկանները և տուրք են վճարել և գնացել են ծառայության [14]: Սայիդ փաշան պատասխանում է, որ հաշվի կառնի դիմումը և կփորձի նպաստավոր լուծում գտնել:

Փաստորեն, Զոհրապի տված տեղեկության մահաձայն, իթթիհատական կառավարությունը կրկնակի օգուտ էր քաղել ոչ մահմեդական քաղաքացիներից. մի կողմից վճարել են ծառայության հարկը, մյուս կողմից՝ զորակոչվել են բանակ և ծառայել: Դա էլ բավական չէր, երիտթուրքերը որոշել էին այդ օրենքը տարածել նաև 28-48 տարեկանների վրա և նրանց նույնպես զորակոչել բանակ: Ինչպես տեսանք՝ Զոհրապը ցույց էր տալիս, որ հարցը դիտարկում էր արևմտահայությանը ամբողջությամբ աշխատող ձեռքից զրկելու, այսինքն սոցիալ-տնտեսական տեսանկյունից: Սակայն Զոհրապի նման արևմտահայության խնդիրներին քաջատեղյակ և բնատուր դիվանագետ մարդը չէր կարող չնակել այս օրինագծում առկա մեկ այլ խնդիր՝ արևմտահայությանը պաշտպանող ուժից զրկելու երիտթուրքերի քողարկված մտադրությունը: Մեր համոզումն է, որ Զոհրապը շատ լավ կռահում էր իթթիհատի մտադրությունը, սակայն թե՛ իրավական և թե՛ քաղաքական տեսանկյուններից չէր կարող բացահայտ նման մեղադրանք ներկայացնել:

Այսպիսով՝ ցավոք խորհրդարանում արևմտահայությանը հուզող ոչ բոլոր խնդիրներն էին հաջողվում քննարկել կամ, առհասարակ, բարձրացնել, սակայն պետք է նշել, որ մինչև 1912թ. հայ պատգամավորները ակտիվ մասնակցություն ունեցան նաև դատաիրավական բնագավառի հետևյալ կարևորագույն հիմնահարցերի քննարկմանը. 1. Ամուսնա-ընտանեկան, 2. գողության, 3. Հավաքների, համախմբումների և ցույցերի, 4 զորակոչի:

Ամփոփելով այս չորս իրավական հիմնահարցերի քննարկումները, որ այս կամ այլ կերպ առնչվում էին արևմտահայությանը, պետք է նշենք, որ հայ պատգամավորները աչքի ընկան ինչպես իրենց կոչման հանդեպ հավատարմությամբ, այնպես էլ իրավական հարցերում ունեցած իրենց առաջադեմ գաղափարներով: Առանձնահատուկ պետք է նշել Գրիգոր Զոհրապի անունը, ով պարզապես փայլում էր ինչպես իրավաբանական գիտելիքներով, այնպես էլ արևմտահայության դրության վերաբերյալ իրազեկվածությամբ: Չնայած հայ պատգամավորների համառ պայքարին, իթթիհատականներին հաջողվում է անցակցնել արևմտահայության և օսմանյան մյուս հպատակների իրավունքները սահմանափակող մի շարք օրենքներ: Մյուս կողմից խորհրդարանի հայ և մյուս հռետորների ջանքերի շնորհիվ օրենքով արգելվեց կանանց և աղջիկների առևանգումները և բռնի իսլամացումը: Ոչ պակաս կարևոր էր զինված մարդկանց համախմբումների դեմ օրինագծի ընդունումը: Անշուշտ իթթիհատը այս օրինագծին առաջ քաշեց ոչ թե

Արևմտյան Հայաստանում անդորրություն հաստատելու, այլ իր իշխանության դեմ ցանկացած զինված ապստամբություն կանխելու նպատակով:

Գրականություն

1. Տ-Կարապետյան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ.Պոլիս 1911, 79 էջ:
2. Բյուզանդիոն 6.04.1911:
3. MMZC, i:82, 5 nisan 1327(1911), d:1 c:5 içtima senesi 3, s 401.
4. Ազատամարտ 07.04.1911:
5. Ազատամարտ, 17.05.1912:
6. Ազատամարտ, 20.05.1912:
7. MMZC, i:9, 19 Mayis 1328(1912), d:2 c:1 içtima senesi 1, s148.
8. MMZC, i:9, 19 Mayis 1328(1912), d:2, c:1, içtima senesi:1, s 159.
9. MMZC, i:9, 19 Mayis 1328(1912),s 165.
10. MMZC, i:12, 28 Mayis 1328(1912), d:2, c:1, Ictima senesi:1, s 250.
11. Ազատամարտ, 29.05.1912
12. Ազատամարտ, 27.05.1912:
13. Ազատամարտ 31.05.1912:
14. Ազատամարտ, 27.05.1912:

THE DISCUSSION OF LEGAL ISSUES OF WESTERN ARMENIANS IN THE OTTOMAN PARLIAMENT IN 1911-1912

[1]N. Martirosyan, [2]V. Torosyan

[1]Institute of History, NAS Armenia, [2]Yerevan Haybusak University

Western Armenians were the most suffering people of the Ottoman Empire. In addition to national and religious persecution, Armenians were subjected to tax arbitrariness by local officials and Kurdish and Turkish elites, and to various forms of violence. After the restoration of the constitutional order, the Ottoman Parliament was the highest instance where the Armenian deputies could raise all the issues affecting Western Armenians. 1911-1912 they took an active part in the discussion of the most important issues of the legal field: marriage and family, theft, gatherings, rallies, and demonstrations, as well as conscription. Despite the persistent struggle of the Armenian deputies, the Young Turks managed to pass several laws restricting the rights of Western Armenians and other Ottoman subjects. On the other hand, thanks to the efforts of the Armenians and other speakers of the parliament, the kidnapping of women and girls and forced Islamization were prohibited by law. No less important was the adoption of a bill

against gatherings of armed men. Of course, the Ittihat did not introduce this bill to establish peace in Western Armenia, but to prevent any armed uprising against its authority.

Key words. Ottoman Parliament, Constitution, Western Armenia, Armenian deputies, dynastic nobility, human rights.

ОБСУЖДЕНИЕ ПРАВОВЫХ ВОПРОСОВ ЗАПАДНЫХ АРМЯН В ОСМАНСКОМ ПАРЛАМЕНТЕ В 1911-1912 гг.

[1]Н.Мартиросян, [2]В.Торосян

[1]Институт истории НАН Армении, [2]Ереванский университет Айбусак

Несмотря на упорную борьбу армянских депутатов, младотуркам удалось провести ряд законов, ограничивающих права западных армян и других османских подданных. С другой стороны, благодаря усилиям армянского и других спикеров парламента, похищение женщин и девушек и насильственная исламизация были запрещены законом. Не менее важным было принятие законопроекта против собраний вооруженных людей. Разумеется, Иттихат внес этот законопроект не для установления мира в Западной Армении, а для предотвращения любого вооруженного восстания против своей власти.

Ключевые слова- Османский парламент, Конституция, Западная Армения, армянские депутаты, династическая знать, права человека

DOI: 10.61484/29538181-sj.10.24-17

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Յանինա Մարինոսյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ԵՀՀ

Մուտքագրված է՝ 26.04.24. գրախոսված է՝ 13.05.24, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր՝ *հոդվածում հանգամանորեն քննարկում է առողջության պահպանման իրավունքի և կյանքի իրավունքի փոխհարաբերակցության հետ կապած հիմնախնդիրները: Ըստ հեղինակի՝ դրանք սերտորեն փոխկապված են միմյանց հետ և դժվար է պատկերացնել դրանց առանձին-առանձին գոյությունը: Այդ իրավունքները սահմանադրական հիմնարար իրավունքներ են և ունեն բացարկ կարգավիճակ:*

Հիմնաբառեր *առողջության պահպանում, կյանքի իրավունք, սահմանադրական հիմնարար իրավունք, բնական իրավունք, բացարձակ կարգավիճակ, բժշկական օգնություն:*

Մարդու իրավունքների հավաքածուն կախված է այն բանից, թե արժեքների և առաջնայնությունների ու համակարգին է պատկանում հասարակությունը: Սակայն կան ունիվերսալ արժեքներ: Դա առաջին հերթին կյանքի իրավունքն է [1]:. սրա հետ դժվար է չհամաձայնվել: Տվյալ պարբերության շրջանակներում համալիր ուսումնասիրվելու է մարդու կյանքի իրավունքը դրա առաջացման և իրականացման տեսանկյունից, ինչպես նաև հետազոտվելու է բժշկական օգնության ցուցաբերման և երեխաների կյանքի իրավունքի իրականացման միջև փոխկապվածությունը մարդու իրավունքների համակարգում հիմնական, առաջնայինը: Այս առումով, կարելի է արձանագրել կյանքի իրավունքի շնորհիվ իրավական պետության մեջ, որտեղ ամբողջական չափով գործում են քաղաքացիական հասարակության օրենքները, քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը հանդիսանում են առաջնային բոլոր մյուսներից:

Առաջին անգամ իրավաբանորեն կյանքի իրավունքն ամրագրվել է 1776թ. ԱՄՆ Անկախության Հռչակագրում, որը հռչակել է «բոլոր մարդկանց հավասարության, կյանքի, ազատության, անձնական երջանկության իրավունք» [2]:

Հետագայում, հաշվի առնելով տարբեր ազգային առանձնահատկություններ, այդ իրավունքը ձեռք է բերել իրավունքի նորմի կարգավիճակ աշխարհի գրեթե բոլոր առաջատար երկրներում: Մեր երկրում հասարակական կացութաձևի բնույթը ենթադրում էր, որ լայն իմաստով կյանքի իրավունքը 20-րդ դարի 70-ական թվականների վերջին սահմանվում էր որպես անհրաժեշտ նյութական և մշակութային բարիքներով քաղաքացուն ապահովելու հարցե-

րով իրավաբանական նորմերով նախատեսված և երաշխավորված հնարավորություն՝ դիմելու պետությանը [3]: Այժմ երբ հասարակության մեջ փոփոխություններն անդրադարձել են կյանքի բազմաթիվ կողմերին, երբ անձի իրավունքներն առաջնահին են, կյանքի իրավունքը կարող է սահմանվել որպես բնական, անքակտելի, միջազգային և ներքին օրենսդրության նորմերով երաշխավորված հնարավորություն՝ պաշտպանելու կյանքի պահպանման և կյանքի տնօրինման իրավունք: Հենց այդ իրավունքի ամրագրմամբ է բացվում Եվրոպայի Խորհրդի կողմից 1950 թվականին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների ցանկը: Այդ միջազգային կազմակերպության ՀՀ մուտքը (անդամակցությունը 2002 թ.) և դրան հաջորդող միացումը Կոնվենցիային նախատեսում են տվյալ փաստաթղթի մեջ բովանդակվող դրույթներին հետևելու անհրաժեշտություն:

Գոյություն ունի կարծիք, համաձայն որի՝ կյանքի իրավունքը ասոցացվում է առավելապես մահապատժի խնդրի հետ:

Կյանքի իրավունքը, հանդիսանալով մարդու բոլոր իրավունքներից առաջնայինը, բնութագրվում է սեփական բովանդակության առկայությամբ, որը չի կարելի վերաբերել որևէ մեկ, չնայած և այդպիսի կարևոր ասպեկտի [4]: Բժշկության և իրավունքի զարգացման ժամանակակից մակարդակի վրա բժշկական միջամտությունների մի ամբողջական շարք մեծ հետաքրքրություն է ներկայացնում հենց այդ իրավունքի տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, բժշկական օգնության ստացման դիտարկումը կյանքի իրավունքի տեսանկյունից անհրաժեշտ է և արդարացված: Նպատակահարմար է կանգ առնել կյանքի իրավունքի խնդրի հետևյալ հիմնական ուղղությունների հետազոտության վրա առաջացման և իրականացման համատեքստում: Մարդու կյանքի սկզբի սահմանման խնդիրը, այսինքն՝ այն պահի, որից հետո նա ձեռք է բերում կյանքի և դրա պահպանության իրավունք, շատ կարևոր է մի շարք պատճառներով, այդ թվում և բժշկական գործունեության հետ կապված պատճառներով: Մարդու կյանքի իրավունքի առաջացումը ունի ոչ միայն տեսական նշանակություն, այդ խնդրի լուծումից կախված են իրավունակության հարցերը, աբորտի իրավական բնույթի սահմանումը և այլն:

Պետք է համաձայնվել Ե. Սեմենյուկի հետ, ով պնդում է, որ ծնվելու պահի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում կարգավորել տվյալ հարցը և մշակել ծնվելու պահի սահմանման բժշկական և իրավական ստանդարտներ [5]: Գրականության աղբյուրների համալիր վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու կյանքի սկզբի սահմանման երեք մոտեցում՝ համաձայն որոնց մարդու կյանքի իրավունքն առաջանում է՝

- Ծնվելիս
- Բեղմնավորման պահից.

- Ներարգանդային զարգացման տարբեր ժամկետներում:

Պաշտպանության փաստարկներն ի օգուտ առաջին դրույթի (մարդու կյանքի իրավունքն առաջանում է ծնվելու պահից) կայանում է նրանում, որ մինչև ծնվելը, իր զարգացման տարբեր փուլերում մարդը հանդիսանում է մոր մասնիկը, ում արգանդում նա գտվում է: Քաղաքացիների անձնական ոչ գույքային իրավունքների ոլորտի հայտնի մասնագետ Ն.Մ. Մալենիան գտնում է, որ չնայած նրան, որ բեղմնավորված երեխան հետագայում կարող է դառնալ իրավունքի սուբյեկտ, չարժե նրան դեռ մինչև լույս աշխարհ գալը դիտարկել որպես իրավունակություն և այլ սուբյեկտիվ իրավունքներ ունեցող: Սուբյեկտիվ իրավունքներ կարող են առաջանալ միայն իրականում գոյություն ունեցող: Սուբյեկտի մոտ [6]: Նույն համատեքստում իրենց տեսակետն են հայտնում Ի.Գոլուբովը և Ե. Գրիգորևիչը, ըստ որոնց, կյանքի և առողջության իրավունքը առաջանում են ծնվելու պահից, բայց ոչ ավել շուտ [7]:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կյանքի իրավունքի սկզբի այն դրույթը, որը սահմանվել է Ֆրանսիայում: Քննական ակնարկում՝ նվիրված ֆրանսիական բժշկական իրավունքի արդիական խնդիրներին, նշվում է որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը ուղիղ չի արտահայտվել սաղմի կյանքի իրավունքի օգտին, սակայն շեշտել է բեղմնավորման, իմպլանտացիայի, էմբրիոնների պահպանության, առանձնահատուկ պայմանների, երբ հնարավոր է հղիության ընդհատումը, օրենսդրական երաշխիքների նշանակությունը [8]:

Ընդունելով բեղմնավորման պահը որպես մարդու կյանքի սկզբի էկվիվալենտ պետք է նշել մի շարք հետազոտությունների առկայությունը, որոնք պաշտպանում են նման տեսակետը: Կարևոր է նշել, որ ըստ ուղղափառ մշակույթի տեսանկյունի, որի արտահայտողներ են հանդիսանում գիտական գիտելիքների և աշխարհիկ գիտական աստիճաններ ունեցող քահանաները, մարդու կյանքի իրավունքն առաջանում է բեղմնավորման պահից, այսինքն՝ ձվաբջիջը սպերտամազոիդով բեղմնավորելու պահից [9]:

«Նոր կյանքի իրական սկիզբը բեղմնավորումն է: Եթե խոսքը գնար կենդանու կամ բույսի մասին, սա կլիներ անվիճելի: Բայց երբ ի նկատի ունեն մարդուն, դժվար է պատասխանել այն հարցին, թե որ պահից նրան կարելի է անվանել այդ բառով»:

Իրականում, այդպիսի խնդիրը բացահայտը է: Ուսումնասիրելով ՀՀ քաղաքացիների կյանքի սահմանադրական իրավունքի խնդիրները՝ ոմանք նշում են, որ կյանքի սկիզբը պետք է սահմանվի բեղմնավորման պահից, իսկ կյանքի վերջը՝ ուղեղի մահվան հաստատման պահից: Այստեղ նրանք նաև նշում են, որ կյանքի իրավունքը յուրաքանչյուր մարդուն տալիս է պաշտպանության իրավունք ընդդեմ յուրաքանչյուր տեսակի պետական միջամտությունների, ինչպես նաև պետությունից պաշտպանություն պահանջելու

իրավունք ընդդեմ երրորդ անձանց միջամտության, այսինքն՝ պետության պաշտպանության իրավունքը համապարփակ է: Միևնույն ժամանակ մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության դրույթները՝ կարծում ենք, որ իրավունքի տեսանկյունից սաղմի գոյությունը նույնական չէ մարդու կյանքի հետ:

Ժամանակակից բժշկական տեխնոլոգիաները թույլ են տալիս պտղի մոտ տարբերակել որոշակի ֆիզիլոգիական դրսևորումներ: Ընդ որում հնարավորություն կա սահմանելու ինչպես այս կամ այն հիվանդությունները, այնպես էլ ապագա մարդու օրգանների և հյուսվածքների գործունեության դրսևորումը:

Առողջության պահպանման մեջ այդպիսի բացահայտումների կարևոր նշանակությունը, ցավոք չի ուղեկցվում նրանց կարևորության մեծացմամբ, իրավական կարգավորման մեջ, քանի որ օրենսդրության մեջ չկա մարդու կյանքի սկզբի հստակ սահմանում և, բնականաբար կյանքի իրավունքի միանշանակ արտահայտված առաջացում: Գոյություն ունի տեսակետ, որ սաղմը հանդիսանում է կենդանի էակ և գտնվում է բարոյականության և օրենքի պաշտպանության ներքո՝ նրա մոտ այսպես կոչված առաջնային շերտագծի (նյարդային համակարգի ձևավորում) առաջացումից սկսած, մոտավորապես սկսած բեղմնավորման 14-րդ օրվանից:

Այլ հետազոտողներ, ովքեր զբաղվում են կյանքի իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ և հանդիսանում են մարդու մոտ այդպիսի իրավունք՝ ներարգանդային առաջացման դրույթի կողմնակից,առաջ են բերում պտղի կյանքի սկզբի այլ ժամկետներ: Այստեղ խոսքը գնում է սրտի առաջին բաբախի (4 շաբաթ), ուղեղի էլէկտրաֆիզիոլոգիական ակտիվության գրանցման (6 շաբաթ), ցավային գրգիռներին արձագանքի, օրգանների և համակարգերի ձևավորման, հասունության բժշկական չափանիշների, կենդանածնության մասին և այլն: Ընդհանուր առմամբ տվյալ դեպքում օպտիմալ ներկայանում Ա.Պոպովի դիրքորոշումը, ով պնդում է որ մարդու կյանքը սկսվում է իր ծնվելուց շատ ավելի շուտ [10]: Չնսեմացնելով բժշկական գիտության մեջ այդպիսի տվյալների արժանիքները և նշանակությունները, պետք է ճշտել, որ իրավամշակույթի խնդիրը կայանում է այս կամ այն երևույթների ճշգրիտ, հստակ և, որ ամենակարևորն է միասնական մոտեցման մեջ: Տվյալ դեպքում հասունացել է մարդու կյանքի իրավունքի առաջացման օրենսդրական պնդման անհրաժեշտությունը: Չդիտարկելով սաղմի իրավունակության և իրավական կարգավիճակի հարցերը՝ ներկայիս իրողությունները թելադրում են կյանքի իրավունքի առաջացման պահի որոշման խիստ անհրաժեշտություն: Խոսքը գնում է սաղմնային հյուսվածքների և օրգանների անօրինական աբորտի, «աբորտների արդյունաբերության» մասին՝ կապված դեղագործության և կոսմետոլոգիայի մեջ անհրաժեշտ նյութերի ստացման հետ և այլն:

Մեր կարծիքով, առավել արդարացված է դիրքորոշումը, որի դեպքում

մարդու կյանքի իրավունքի առաջացումը (այլ հիմնական իրավունքների և ազատությունների հետ մեկտեղ) կապված է լինելու լույս աշխարհ գալու պահի հետ, քանի որ տվյալ իրավունքը, ինչպես բոլոր այլ իրավունքները, կարող են առաջանալ միայն իրականում գոյություն ունեցող մարդու մոտ:

Իսկ սաղմնային հյուսվածքների անօրինական աբորտի կանխումը, որպես սաղմերի արտադրության փոխարկիչ կանացի օրգանիզմի օգտագործման անթույլատրելիությունը պետք է կանխվի իրավաբանական երաշխիքների համակարգի ստեղծման միջոցով, այլ ոչ մարդու կյանքի իրավունքի սկզբի պահի օրենսդրական փոփոխությամբ: Կարևոր է նշել որ, նշված խնդիրները գտնվում են պետության սոցիալական գործունեության հարթության մեջ, որը նաև ներառում է երիտասարդ ընտանիքների նյութական, բժշկական ապահովումը երեխաների բեղմնավորման և ծնվելու մոտիվացիայի բարձրացման նպատակով:

Բժշկական օգնության ցուցաբերումը հաճախ հակադրության մեջ է մտնում մարդու կյանքի իրավունքի հետ: Խոսքը վերաբերում է մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման պրակտիկային (երբ դոնորի՝ կենդանի մարդուց վերցնում են զույգ օրգաններից մեկը հետագա փոխպատվաստման համար՝ հաճախ նրա կյանքը ենթարկելով նշանակալից վտանգի), օնկոլոգիական հիվանդներին վիրահատելուն (երբ վիրահատության արդյունքում հիվանդը մահանում է, թեև առանց դրա իրականացման կարող էր որոշ ժամանակ ապրել հիվանդությամբ) և մի շարք այլ բժշկական միջոցառումներին: Մենք դիտարկում ենք՝ կյանքի իրավունքը որպես հետևյալի ամբողջություն՝

- Կյանքի պահպանման իրավունքի
- Պետությունից կյանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը պահանջելու իրավունքի
- Կյանքը տիրապետելու իրավունքի
- Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքի:

Պետք է պաշտպանել այն կարծիքը, համաձայն՝ որի՝ իրավունքի և ազատությունների ողջ համակարգի համար այդքան առանցքային իրավունքի համար համապատասխան երաշխիքները, որպես կյանքի իրավունք, պետք է ոչ միայն սահմանվեն այլ նաև լինեն նշանակալի իրենց ծավալին և բովանդակությանը: Սաղմի դիրքի երկակի բնույթը՝ կապված այն բանի հետ, որ սաղմը միայն կյանքի սկիզբն է, բայց այն չունի իրավունակություն, և իր ճակատագիրը ծնողների ձեռքերում է, ազդում է նաև նրա իրավական դիրքի վրա:

Կոսմետոլոգիայում և դեղագործության մեջ սաղմնային հյուսվածքների օգտագործումը, որը ուղեկցվում է կանանց օգտագործմամբ որպես ունիկալ կենսաբանական հումքի մատակարարներ, պետք է, անկասկած, դատապարտվի:

Այստեղ տեղին է համալիր մոտեցումը, որին համապատասխան պետք է

իրականացնել հիգիենիկ գիտելիքների պրոպագանդան՝ կապված կանացի օրգանիզմի ֆիզիոլգիայի, հղիության արհեստական ընդհատումների հետևանքների, առողջության հոգատարության հետ և այլն:

Կյանքի իրավունքը մարդու բնական իրավունքներից առաջինն է: Հաշվի առնելով, որ նույնիսկ անկախ օրենսդրական ամրագրվածությունից, յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք, հատուկ ուշադրության են արժանի երեխաների կյանքի իրավունքի իրականացման և պաշտպանության խնդիրները: Երեխաները մեր ապագան են՝ այս նշանաբանը մենք հաճախ ենք լսում զանգվածային տարբեր լրատվամիջոցներից: Բայց պետք է հարց տալ, թե արդյոք միշտ բավականաչափ ապահովվում են պայմանները երեխաների իրավունքների և օրինական շահերի ամբողջական իրականացման համար և առաջին հերթին կյանքի իրավունքի համար:

Հաշվի առնելով, որ կյանքի իրավունքը ներառում է նաև անձնական անձեռնմխելիության, ինչպես նաև առողջության և բժշկական օգնության իրավունքը, նպատակահարմար է ուսումնասիրել երեխաների կողմից տվյալ իրավունքների իրականացումը:

Երեխաների իրավունքների 1959 թվականի Հռչակագրի նախաբանում ասվում է, որ երեխան, կապված է ֆիզիկական և մտավոր անհասության հետ, հատուկ պահպանության և խնամքի կարիք ունի՝ ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունն ինչպես մինչև ծնվելը, այնպես էլ դրանից հետո: Բժշկական գործունեությունը, հիվանդությունների և պաթոլոգիկ վիճակների ախտորոշման, բուժման և պրոֆիլակտիկայի նպատակով իրականացվող միջամտություններն իրենց մեջ պոտենցիալ պարունակում են երեխաների կողմից իրենց իրավունքների իրականացման որոշակի խախտումների հնարավորություն, այդ թվում՝ կյանքի իրավունքի

Երեխաների կյանքի իրավունքի և բժշկական օգնության ցուցաբերման հարաբերակցության ուսումնասիրման արդիականությունը կապված է այն բանի հետ, որ՝

- Երեխաները ժամանակակից աշխարհում հաճախ են տառապում որոշակի հիվանդություններով
- Բժշկության մեջ գիտատեխնիկական առաջընթացի զարգացումն առաջ է բերել երեխաներին որպես կենսաբժշկական օբյեկտներ օգտագործելու անհրաժեշտությունը
- Մի շարք բժշկական միջամտություններ ներկայումս կանխատեսում են ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից ճնշման հնարավորություն երեխայի՝ միջամտության համաձայնության վրա, որը նման համաձայնության ինքնակամության բաղադրիչը դարձնում է անօրինաչափ:

Կապված ֆիզիկական և մտավոր զարգացման տարիքային առանձնա-

հատկությունների հետ՝ երեխաներն ունակ չեն ամբողջապես գիտակցել իրենց շահերը, համապատասխան ձևով օգտագործել իրենց իրավունքները և անհրաժեշտության դեպքում ինքնուրույն պաշտպանել դրանք: Հաճախ այդ պատճառով երեխայի մոտ բժշկական հաստատություն դիմելու անհրաժեշտության առաջացման ժամանակ ախտորոշման կամ բուժման տարբերակի որոշումը ընդունում են ծնողները կամ օրինական ներկայացուցիչները: Սակայն գոյություն ունեցող օրինակները, մասնավորապես 15 տարեկանը չլրացած երիտասարդ աղջիկների մոտ հղիության, և այդ ժամանակ շահերի բախման առաջացման և ցավոք, հաճախակի դժբախտ դեպքերի դեպքում, վկայում են բժշկական օգնության՝ որպես երեխայի կյանքի իրավունքի մասնավոր տարբերակի տրամադրման իրավունքի ավելի տարբերակված մոտեցման անհրաժեշտության մասին:

Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացման որոշակի փուլում առաջացել է երեխաներին նվիրված համալիր միջազգային իրավաբանական պարտադիր փաստաթղթի մշակման և ընդունման անհրաժեշտություն [11]: Այդպիսի փաստաթուղթ է դարձել 1989 թվականին ընդունված Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիան [11]:: Կոնվենցիայի Հոդված 6 հռչակում է «Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անքակտելի իրավունք», ընդ որում անհրաժեշտ է առավելագույնս ապահովել երեխայի գոյությունը և առողջ զարգացումը: Ընդհանուր տեսքով մարդկության մարդկային քայլերը, ուղղված այս կամ այն պաթոլոգիկ վիճակների բուժման նոր միջոցների փնտրտուքին մասնավորապես մանկավարժության մեջ, ենթադրում են երեխաների մասնակցությամբ բժշկական փորձարկումների անցկացման օբյեկտիվ անհրաժեշտություն: Իրավացի է Ս.Բախինը, ով պնդում է, որ գիտատեխնիկկական առաջընթացի զարգացումը բժշկության և կենսաբանության մեջ լրջորեն դիպչում է մարդու այնպիսի իրավունքներին, ինչպիսիք են կյանքի իրավունքը, առողջության պահպանությունը, անհատի անձեռնմխելիությունը, պատվի և արժանապատվության պաշտպանությունը և այլն [11]:

Սա ամբողջապես վերաբերում է երեխաներին բժշկական փորձարկումների մեջ օգտագործելուն: Աառաջընթացային զարգացումը, որի դեպքում ժամանակակից բժշկությունն անընդհատ ընդլայնում է մարդկային կյանքի առաջացման ընթացքի և ավարտի բնական գործընթացի վերահսկողության և միջամտության տեխնոլոգիական հնարավորությունները [11] ցավոք չի ուղեկցվում երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, նրանց կյանքի և առողջության պահպանման պատշաճ երաշխիքներով: Այս առումով կարևոր է բժշկական փորձարկումների վարքագծի օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելը, որոնցում պետք է նախատեսել երեխաների համար առանձնահատուկ երաշխիքներ, ովքեր մասնակցում են կենսաբժշկական

հետազոտություններում նմանատիպ հետազոտություններին համաձայնություն ստանալու գործընթացի սահմանմամբ:

Առավել ցուցադրական օրինակն այն բանի, թե ինչպես կարող է անտեսվել երեխայի կարծիքը, նրա իրավունքները և օրինական շահերը բժշկական միջամտության համաձայնություն ստանալիս հանդիսանում է տրանսպլանտալոգիան՝ գիտություն օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման մասին: Հաճախ մարդու բուժման միակ միջոցն օրգանի կամ հյուսվածքի փոխպատվաստումն է է կենդանի դոնորից, ով համաձայն ազգային օրենսդրությանը կարող է լինել միայն ռեցիպիենտի գենետիկ բարեկամ: Եթե պատկերացնենք ընտանիք, որտեղ կա երկու երեխա, որոնցից մեկին պահանջվում է փոխպատվաստման վիրահատություն որոշակի հիվանդության բուժման համար, ապա բավականին հավանական է ծնողների ճնշումը երկրորդ երեխայի վրա՝ նրա կողմից դոնոր հանդիսանալու որոշում ընդունելու առումով: Հաշվի առնելով մանկական գիտակցության անհասությունը՝ սեփական օրգանի կամ հյուսվածքի առգրավման իրավաչափության և գիտակցվածության մասին խոսքը չի գնում: Այս առումով պետք է նախատեսել հատուկ իրավական ընթացակարգ փոխպատվաստման ժամանակ դոնոր հանդիսանալու երեխաների համաձայնությունը ստանալու համար, ինչպես նաև մշակել ցանկացած այլ բժշկական միջամտության համար համաձայնություն ստանալու ադեկվատ միջոցներ:

Գրականություն

1. Ковалев М.И. Право на жизнь и право на смерть// Государство и право 1992, N 7, с.70.
2. Конституции и законадательные акты буржуазных государство сборник документов М.,1957, с.167.
3. Рудинский Ф.М. Жизнь и здоровые советского человека как обьект конституционной охраны// Советское государство и право.1979 N 1, с.5-12.
4. Մանրամասն տես Кальченко Н.В. Права человека и гражданина на жизнь и его гарантии в Российской Федерации: Автореферат дис… канд. юрид. наук. СПБ,1995.
5. Семенюк Е.И.Право человека на жизнь в тероиях конституционного права РФ и ФРГ.и в теории международного права// Правовые реформы в России и Зарубежный опыт: Сборник научных статей. Краеноярек,1997, с 152.
6. Маленина М.Н.О праве на жизнь// Советское государство и право.1992, N2.
7. Голубов И.И., Григорович Е.В. Условная ответственность при использовании искусственных методов репродукции// юрист,1999 N 11, с.30.
8. Попов А.Н. Преступление против личности при смягчающих обстоятельствах СПБ., 2001, с 12.
9. Титова Т.А. Конвенция о правах ребенка в системе общей регламентации прав

человека. Автореферат дисс. канд. юр. наук. Казань 2000, с 3.
10. Конвенция о правах ребенка// Международная защита прав и свобод человека М., 1990.с 13.
11. Бахин С.В. Научно-технический прогресс в области медицины и международно-правовая защита прав человека: Автореферат, дисс канд.юр.наук.Л.,1990, с 2.

ПРАВО НА ЗДОРОВЬЕ И ВОЗНИКНОВЕНИЕ ПРАВО НА ЖИЗНЬ ЧЕЛОВЕКА. ПРОБЛЕМА КОРРЕЛЯЦИИ

Янина Мариносян
соискатель Института философии, социологии и права НАН РА

В статье автор подробно рассматривает вопросы, связанные с соотношением права на охрану здоровья и права на жизнь. По мнению актора, они тесно связами друг с другом и трудно представить себе их отдельное существение. Эти права являются конституционно-основнами правами и не подлежать обсуждению

Ключевые слова: право на жизнь, конституционно-основание право, естественное право, абсолютный статус, медицинская помощь

THE RIGHT TO HEALTH AND THE EMERGENCY OF THE RIGHT TO HUMAN LIFE. CORRELATION PROBLEM

Yanina Marinosyan
NAS RA Institute of Philosophy, Sociology, and Law, the applicant

The author thoroughly discusses the relationship between the right to health care and the right to life. According to the author, they are closely related to each other and it is difficult to imagine their separate existence. These rights are constitutional fundamental rights and have a non-negotiable status.

Key words. Health care, right to life, constitutional fundamental right, natural right, absolute status, medical care.

DOI: 10.61484/29538181-sj.10.24-18

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Համլետ Ստեփանյան

Երևանի Հայբուսակ Համալսարան

Մուտքագրված է՝ 15.04.24. գրախոսված է՝ 13.05, ընդունված է՝ 26.06

Ամփոփագիր. *Տրված են Հայաստանի՝ ՍՍՀՄ-ի փլուզումից հետո անցումային շրջանում քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ զարգացման առանձնահատկությունները: Մասնավորապես, ցույց են տրված հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, արհմիությունների, ազատ մամուլի ձևավորման, զարգացման ու կայացման առանձնահատկությունները անկախության պայմաններում:*

Հիմնաբառեր՝ *քաղաքացիական հասարակություն, կուսակցություններ, արհմիություններ, մամուլ, ՁԼՄ-ներ, ժողովրդավարություն, անցումային շրջան:*

ՍՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային երկրները սկսեցին անցնել ավտորիտարիզմից՝ ժողովրդավարության և պլանային տնտեսությունից՝ շուկայականի: Առաջին տարիների ժողովրդավարական բարեփոխումների առավել տարածված մոլորություններից մեկն այն էր, որ այս գործընթացները տեղի կունենան ինքնաբերաբար և արագ՝ արևմտյան ժողովրդավարական հասարակությունների կուտակած փորձը ընդօրինակելու ճանապարհով: Մինչև անգամ մտածեցին և գտան անվանում՝ «շոկային թերապիա», մեկ այլ ձևակերպում՝ «ցնցումնաբուժություն»: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում հին, նախկին համակարգն ապամոնտաժվեց, կատարվեց ժողովրդավարության «ինստիտուցիոնալ դիզայն», փոփոխության ենթարկվեց իրավական դաշտը, ձևավորվեցին խորհրդարանական և տեղական ինքնակառավարման ինստիտուտները, պայմաններ ստեղծվեցին բազմակուսակցական համակարգի, պետությունից անկախ հասարակական կազմակերպությունների զարգացման, պայմաններ ստեղծվեցին ՁԼՄ-ների անկախ գործունեության համար:

Հայաստանում, չնայած տնտեսության ոլորտում իրականացված մի շարք սեփականաշնորհումներից հետո մասնավոր հատվածի գերակշիռ դերին, ինչպես բոլոր հետխորհրդային երկրներում, ենթադրվող շուկայական հարաբերությունները (ազատ մրցակցություն և իրավական հարաբերություններ) մենաշնորհային բնույթ ստացան: Նախկին խորհրդային դաստիարակության բյուրոկրատները, օգտվելով սեփականաշնորհման «բարիքներից», ձուլվելով նոր պետական կառույցներին, սկսեցին արգելակել շուկա-

յական հարաբերությունների ներդրումը մեր երկրում: «Չինովնիկական մասնավոր սեփականումությունը երբեք չի ծնի շուկա, քանի որ ինքն էլ դրա առաջացման և աճի հիմնական սպառնալիքն ու մահացու վտանգն է» -- արդարացիորեն նկատում է Ա, Գ. Գլինչիկովան [1]: Ի հայտ եկան ավտորիտար միտումներին, ներկայացուցչական իշխանության նկատմամբ գործադիր իշխանության գերակայությանը, ստվերային տնտեսության խորացմանը օժանդակող գործոններ: Հասարակության վերահսկողության բացակայության պայմաններում իշխանությունները քաղաքական, սոցիալական, վարչական ներուժը ոչ իրավաչափ օգտագործելու հնարավորություն ստացան: Այս ամենը չէր կարող ազդեցություն չունենալ քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացնան վրա:

Այնուամենայնիվ, մեր Երկրում քաղաքացիական հասարակության ինստիտուտները ձևականորեն կայացան, սակայն դրանք հաճախ իրականացնում են իրենց նշանակությանը հակասող գործառույթներ: Դրանց կայացումը, որոշակիորեն, արդիականացման արդյունք էր, մինչդեռ արդիականացման ճանապարհով քաղաքացիական հասարակություն ստեղծելու ուղին բռնած շատ երկրների փորձը վկայում է, որ դրա ելքը միշտ չէ, որ պսակվում է հաջողությամբ: «Այն պետություններում, որտեղ արդիականացման և ժողովրդավարացման փորձերն անհաջողություն կրեցին (այսպես կոչված՝ «failed states»), և այն պետությունները, որոնք գրավված էին մաֆիոզ-քրեական կառույցներով («capturestates»), բարեփոխումների տապալումը պայմանավորված էր քաղաքացիական հասարակության բացակայությամբ» [2],-- գրում է Ա. Գ. Գլինչիկովան: Իհարկե, միամտություն է կարծել, թե շրջափակված հետպատերազմյան Հայաստանում քաղաքացիական հասարակությունը կարող էր արագ կայանալ, քանի որ չկայացավ շատ ավելի բարենպաստ աշխարհաքաղաքական և տնտեսական պայմաններում գտնվող երկրներում՝ Բուլղարիա, Բելառուս, Ուկրաինա, Ղազախստան:

Վ. Օսիպովը դեռևս 2000-ականների մտավախություն ուներ, որ «եթե այժմյան ընթացիկ միտումները չդարձափոխվեն, ապա քաղաքացիական հասարակությունը, որպես այդպիսին, չի կայանա, ինչը հղի է հասարակության «սոցիալական հյուսվածքի» պառակտման, համերաշխության հիմնախախտման, սոցիալական տրոհման և անոմիայի աճի ու սոցիալական կապիտալի փոշիացման վտանգով» [3]:

Հայաստանյան զարգացումները մեկուսացված չեն համաշխարհային գործընթացներից, այլ սերտորեն կապված են, մասնավորապես, համընդհանուր ժողովրդավարացման հետ, որի անդառնալի ազդեցությունը քաղաքացիական հասարակության ձևավորման համատեքստում առավել քան շոշափելի է: Ակնհայտ է, որ այսօրվա Հայաստանը 25 տարի առաջվա Հայաստանը չէ, և, օրինակ, ով ցանկություն ունի հիմնել կազմակերպություն,

ապա դա կարող է անել առանց խոչընդոտների և հեշտությամբ: Մինչդեռ «Հայաստանում այսօր գոյություն ունի՞ քաղաքացիական հասարակություն», հարցը շարունակում է վիճելի մնալ: Շատերը այս հարցին պատասխանում են խիստ թերահավատորեն՝ նախազգուշացնելով հայկական համատեքստում այս հասկացությունից օգտվելու զգուշավորրության մասին: Մյուսները գտնում են, քաղաքացիական հասարակությունը գտնվում է անցումային, ձևավորման փուլում, և հասարակական կյանքում նրա արդյունավետության ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան: Կարծում ենք առավել իրական է և ճշմարիտ վերջին մոտեցումը այն հավելումով, որ քաղաքացիական հասարակությունն իր անցումային շրջանի կեսն հաղթահարել է և եթե վերջին մի քանի տարիների զարգացման միտումները չդարձափոխվեն, ապա մոտ ապագայում կունենանք կայացած քաղաքացիական հասարակություն:

Հայաստանը հաստատակամորեն գնում է դեպի ժողովրդավարություն (որոշակի արդյունքը ակնհայտ է), որի հաստատման ուղիներից մեկը, ինչպես նշում է Գ. Գրիգորյանը, «քաղաքացիական հասարակության կառուցումն է: Այստեղ վիթխարի անելիք ունեն հասարակական կազմակերպությունները» [4], որոնք, մտնելով այսպես կոչված «երրորդ հատվածի» կազմի մեջ, դառնում են քաղաքացիական հասարակության «հաստատուն կորիզը»: Ավելացնենք, որ հասարակության մյուս բաղադրիչներն են (բացի քաղաքացիական հասարակությունից) պետությունը (իշխանությունը) և բիզնեսը (հիմնականում՝ մասնավորը):

Խոսելով երրորդ հատվածի մասին՝ պետք է արձանագրենք, որ երկրում երրորդ հատվածի առկայությունը հատատում է, որ հասարակությունն ինչ որ չափով ղեկավարվում է ժողովրդավարական սկզբունքներով, և կախված նրանից, թե որքան է զարգացած երրորդ հատվածը, դրանով կարելի է դատել հասարակության ժողովրդավարացման աստիճանի մասին:

Փորձնական դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում երրորդ հատվածը, լինելով մարդկային գործունեության ոլորտ, միաժամանակ դարձել է տնտեսության բաղադրիչներից մեկը: Այս հետևությունը պայմանավորված է երրորդ հատվածի որոշակի մասի գործունեության հատուցելիությամբ՝ միջոների հայթայթում, աշխատակիցների վարձակալություն և այլն:

Պատմականորեն իրականությունն այնպիսին է, որ անցումային շրջանի Հայաստանում (այդ թվում՝ ԱՊՀ մյուս երկրներում) հասարակության բաղադրատարրեր՝ անկախ ժողովրդավարական պետությունը, մասնավոր բիզնեսը և հասարակական կազմակերպությունները միաժամանակ կայացան, ձևավորվեցին և զարգացան: Մինչդեռ՝ ժողովրդավարական խորը ավանդույթներ ունեցող երկրներում՝ Ֆրանսիայում, Անգլիայում և Միացյալ Նահանգներում, նախ ձևավորվել է պետությունը, այնուհետև զարգացել է մասնավոր բիզնեսը, և նոր միայն՝ հասարակական կազմակերպությունները:

Փաստորեն, պատմությանը այսպիսի զարգացումներ հայտնի չեն: Դա տեսաբանների համար մի նոր հետաքրքիր երևույթ է:

Երրորդ հատվածը ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության հիմքն է, քանզի միավորում, համաձայնեցնում և կազմակերպում է քաղաքացիների բնական ակտիվությունն ու նախաձեռնությունը հասարակական ոլորտում:

Պատմականորոն հասարակական կազմակերպությունները ձևավորվեցին որպես շարժում՝ ի պաշտպանություն մարդու իրավունքների: Քանի որ մարդու իրավունքները խախտող հիմնական սուբյեկտը պետությունն է՝ իր ուժային կառույցներով, Արևմուտքում ձևավորվեցին ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, կոչվում են NGO-ներ: Բավական երկար ժամանակ Արևմուտքում պետական և հասարակական կառույցները հակադիր դիրքեր էին գրավում. նրանք չէին գտնվում ընդհարումների մեջ, բայց միմյանց փոխադարձաբար հակազդող ուժեր էին: 1992 թ. Կոպենհագենում կայացավ NGO-ների ներկայացուցիչների մեծ հանդիպումը, որից հետո NGO-ները ընդդիմությունից անցան պետության հետ համագործակցության:

Հայաստանում հասարակական կազմակերպությունները (այսուհետև ՀԿ) սկսել են գրանցվել 1990 թ.: Այն ժամանակ ընդամենը մեկ ՀԿ է գրանցված եղել: 1991 թ. այդ թիվը հասել է 159-ի, 1992 թ.՝ 209-ի, 2001 թ. դրանց թիվը հասել է 2557-ի: 2011թ. ԱՆ պետական ռեգիստրում գրանցված 298 նոր ՀԿ-ի հաշվարկով դրանց թիվը 01.01.12թ. դրությամբ կազմել է 5474-ը, որոնցից 1678-ը չի վերագրանցվել: 2013 թ. հունվարի 10-ի դրությամբ դրանց ընդհանուր թիվը հասել է 5766-ի [5], որը վերջին տարիներին էական փոփոխություն չի կրել:

Այս տվյալներից կարելի է եզրակացություններ անել ոչ կառավարական հատվածի և քաղաքացիական հասարակության զարգացածության աստիճանի վերաբերյալ: Իհարկե, պետականորեն գրանցում ստացած ՀԿ-ների քանակական ցուցանիշները չեն կարող երրորդ հատվածի՝ որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն բաղկացուցչի զարգացածության, ուղղակի վկայությունը լինել: Որոշ երկրներում ամեն կերպ խոչընդոտվում է նոր ՀԿ–ների բացումն ու գրանցումը. ի դեմս այդ կազմակերպությունների իշխանությունները տեսնում են զուտ ընդդիմության և վարչակարգի հակառակորդների:

Հայաստանը այս առումով գտնվում է բարվոք վիճակում: Մեր երկրում ՀԿ-ների հիմնադրման, գրանցման գործունեության հարցերը կարգավորվում են 2016 թ. Դեկտեմբբերի 16-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով [6], ըստ որի՝ կազմակերպությունների պետական գրանցման գործնթացը բավական ազատական է, զերծ քաշքշուկ-

ներից, սակայն իրականությունն այն է, որ ՀԿ-ների շարքում քիչ չեն այն կազմակերպությունները, որոնք գոյություն ունեն լոկ թղթի վրա և գործնականում ոչ մի գործունեություն չեն ծավալում: Մասնագետների կարծիքով ու փորձնական դիտարկումներից կարելի է եզրակացնել. ՀԿ-ների նվազագույնը, 30-40%-ը, ոչ մի գործունեություն չի ծավալում: Որպես կանոն՝ ակտիվ են երկրում գործող ՀԿ-ների 30-35%-ը: Ընդ որում, երկրի ՀԿ-ների գործունեության առավել նախընտրելի ոլորտը բարեգործությունն է:

ՀԿ-ների շարքում առանձին տեղ են զբաղեցնում արհմիությունները: Հանրապետությունում՝ ճյուղային արհմիությունների միավորման արդյունքում 1992 թ. հունվարի 10-ին ստեղծվել ու գործում է ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ), որն իր շարքերում 2023 թվականի հումվարի 1-ի դրությամբ միավորում էր 18 ճյուղային հանրապետական միություններ, 585 արհմիութենական կազմակերպություններ 194279 անդամներով: Իհարկե, արհմիությունները այլևս չունեն այն ազդեցությունը, որն ունեին խորհրդային ժամանակաշրջանում: Ո՛չ իշխանությունները, ո՛չ աշխատանքային կոլեկտիվները առանձնապես հաշվի չեն նստում արհմիութենական կոմիտեների կարծիքի հետ, որոշ դեպքերում էլ կոմիտեն ունի զուտ ձևական բնույթ: Արհմիությունները զրկվեցին հզոր ֆինանսական բազայից և ամբողջովին կորցրին վերահսկողությունն աշխատանքային կոլեկտիվների նկատմամբ, որը պայմանավորված էր նաև օրենսդրական դաշտի բացակայությամբ: Սակայն այս բացը շտկվեց 2004 թ. նոյեմբերի 9-ին, երբ ընդունվեց նոր Աշխատանքային օրենսգիրքը [7], Օրենսգիրքն արհմիություններին ընձեռել է մեծ հնարավորություններ՝ իրենց գործառույթները իրականացնելու համար (Աշխատանքային հարաբերություններում ներկայացուցչություն, աշխատողների իրավունքներ ու շահեր պաշտպանություն, կազմակերպել և գլխավորել գործադուլներ, աշխատանքային օրենսդրության կատարման նկատմամբ իրականացնել ոչ պետական վերահսկողություն և այլն): Այդուհանդերձ, արհմիություններին դեռևս բնորոշ է որոշակի անտարբերություն, որը քաղաքացիական հասարակության զարգացմանն ու կայացմանը զուգընթաց օրինաչափորեն կվերանա:

Դեռևս Ա. Գրամշինը պնդում էր, որ քաղաքացիական հասարակությունը, բացի ոչ պետական ինստիտուտներից, իր մեջ ներառում է նաև «կիսապետական, մասնակի պետական» և «հասարակության և պետության միջև միջնորդ» այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են դպրոցը, դատարանը, կուսակցությունները, խորհրդարանը [8]: Այս տեսանկյունից, որպես քաղաքացիական հասարակության տարր, քննարկենք կուսակցությունների և «Չորրորդ իշխանության» կայացման հարցերն ու հիմնախնդիրներն ՀՀ անցումային շրջանում:

Եթե հիմք ընդունենք ֆրանսիացի քաղաքագետ Մ. Դյուվերժեի պնդումն այն մասին, թե դեռևս 1850 թ. գործնականում աշխարհի ոչ մի երկրում,

թերևս բացի ԱՄՆ-ից, չկային քաղաքական կուսակցություններ, և ընդամենը 100 տարի հետո՝ 1950թ., կուսակցություններն արդեն քաղաքացիների՝ ընդհանուր քաղաքական շահերով միավորների, ընկերությունների հիման վրա ձևավորված կարևոր քաղաքական ինստիտուտներ են, որոնց նպատակը մեկն է՝ պայքար քաղաքական իշխանության և նրա իրականացման համար [9], ապա կուսակցություններն ունեն ընդամենը 170 տարուց քիչ ավելի պատմություն:

Հայաստանում խորհրդային միակուսակցական համակարգից հետո ձևավորվեց բազմակուսակցական համակարգ: Կուսակցությունների մեծ մասը՝ 20-ը, հիմնադրվել է 1991թ.: 2002 թ. դրանց թիվը հասավ 111-ի: 2013 թ. հունվարի 10-ի դրությամբ կուսակցությունների թիվը լուծարված և նորերի հաշվարկով՝ 77–ն էր, իսկ 2022թ. Սեպտեմբերի 11-ի դրությամբ կուսակցությունների թիվը 117-ն է, որոնցից 42-ը գրանցվել է 2018թ. հետո՝ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցելու համար: Հետևում է, որ կուսակցությունների գրանցման գործընթացը հատկապես ակտիվ է խորհրդարանական ընտրություններից առաջ: Այնուամենայնիվ, կուսակցությունների զգալի մասը կառուցողական ներգործություն չունի երկրի քաղաքական կյանքի վրա, դրանք նույնիսկ հայտնի չեն հասարակությանը, նպատակներն ու գաղափարները՝ նմանօրինակ:

Օրենսդրորեն բազմակուսակցությունը ՀՀ-ում սկզբնավորեց 1991թ. փետրվարի 26-ին ՀՀ Գերագույն Խորհրդի ընդունած «Հասարակական և քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը: Մինչ այդ ստեղծված կուսակցությունները գրանցման իրավունք ստացան: Օրենքի ընդունման պահին շատ կուսակցություններ ֆինանսապես թույլ էին, չունեին տեղական կազմակերպություններ, նրանց անդամների թիվն անորոշ էր, քանի որ անդամների ճնշող մասը չուներ անդամատոմսեր, և դժվար էր կողմնորոշվել, թե ո՞վ էր աջակցում տվյալ կուսակցությանը և ո՞վ էր անդամ:

Դասական բազմակուսակցության ներքո հասկացվում է երկկուսակցական համակարգը կամ առնվազն երեք-չորս կուսակցության գործառնությունը: Կուսակցությունների ավելի մեծ քանակը դիտվում է որպես անօրինաչափություն: Մեր երկրում առաջին հերթին գործեց հասարակության ստացած ազատությունն ու անսահմանափակ հնարավորությունը՝ ստեղծելու քաղաքացիների զանազան միություններ, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններ: Հայաստանում բազմակուսակցության ձևավորմանը նպաստեց նաև հայերի հակվածությունը դեպի անհատական նախաձեռնությունը, անձնական պատվախնդրությամբ և անարխիայի որոշ տարրերով հոգեկերտվածքը:

Կուսակցությունների սովորական բաժանումն աջերի, ձախերի և կենտրոնամետների կամ պահպանողականների, ժողովրդավարների, հանրապետականների և սոցիալիստների կարելի է, բայց արդյունավետ չենք կարող

համարել, քանի որ գրանցված կուսակցություններից շատերը գոյություն ունեն միայն թղթի վրա, մյուսները բաղկացած են մեկ կամ մի քանի անդամից:

Հայաստանում գոյություն ունեն նաև կուսակցություններ, որոնք, ըստ էության, գործում են միայն ընտրություններից ընտրություն: Խորհրդարանական ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում նրանք պարզապես մի կողմ են քաշվում, մնում ստվերում: Նման կուսակցությունների գլխավոր նպատակն է՝ փորձել ընտրությունների միջոցով որոշ քանակի պատգամավորական տեղ ապահովել Ազգային ժողովում: Նրանք լրջորեն չեն զբաղվում քաղաքականությամբ, չունեն սեփական հստակ շարադրված ծրագիր, ինչպես և՝ իրենց ձևավորած ընտրազանգվածը: Դրանք բավական կարճակյաց, ամբոխավարական միտվածությամբ, մի քանի տասնյակ մարդուց բաղկացած կուսակցություններ են, ունակ են գնալու ցանկացած շահավետ պայմանավորվածության կամ գաղտնի համաձայնության, միայն թե հասնեն իրենց նեղ, խմբակային նպատակներին: Պարզ է, այսպիսի կուսակցություններն ապագա չունեն: Թեմատիկ հետաքրքրությունից միտված, ավելացնենք, որ հարցման ենթարկված, քաղաքականդաշտում առավե լակտիվ 26 կուսակցություն իր ծրագրային հիմնախնդիրներից մեկը համարում է քաղաքացիական հասարակության ձևավորումն ու զարգացումը [10]:

Իսկ հայկական մամուլը, որպես իշխանություն, դեռևս չի կայացել: Այս հետևությունը բխում է այն պարզ իրողությունից, որ երկրում բնակչության գերակշիռ մասը թերթ չի կարդում: Բայց կա ևս մեկ պատճառ՝ միջազգային զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության բացակայությունը: Ուժեղ մամուլ, ուժեղ լրագրողներ կհայտնվեն միայն այն դեպքում, երբ նրանք դուրս գան երկրի սահմաններից և սկսեն համագործակցել միջազգային զանգվածային լրատվական միջոցների հետ: Այդպես է տեղի ունենում շատ ոլորտներում, այդ թվում և գիտության մեջ:

Անցումային շրջանում ՁԼՄ-ների զարգացման պատմությունը կարելի է բաժանել երեք փուլի: Առաջինը անցած դարի 80-ական թվականների վերջն է մինչև 1991 թ.,երբ «Ղարաբաղյան շարժման սկսվելու հետ մեկտեղ տեղի ունեցավ ինքնահրատարակչական ակտիվության բռնկում: Հենց դա դարձավ անկախ մամուլի յուրատեսակ սաղմը, որն ավելի ուշ, երկրի քաղաքական իրավիճակի փոփոխմանը համաչափ, փոխակերպվեց՝ պաշտոնաթերթերի: Այս գործընթացին նպաստեց օրենսդրորեն թույլատրելի, 1000 օրինակը չգերազանցող թերթերի, ամսագրերի հրապարակումը առանց Արդարադատության նախարարությունում գրանցվելու:

1991 թ. անկախ Հայաստանում ընդունվեց մամուլի մասին նոր օրենք, ըստ որի 100-ից ավելի տպաքանակով ՁԼՄ-ները պարտադիր պետք է գրանցվեին Արդարադատության նախարարությունում: Նոր օրենքի ընդունումով սկսվեց անկախ ՁԼՄ-ների զարգացման երկրորդ փուլը՝ 1991-1994 թթ.: Այս փուլը

բնութագրվում է նրանով, որ էներգետիկ ճգնաժամի, սղաճի, շրջափակման պատճառով հրատարակչությունների տպաքանակը կտրուկ կրճատվեց, շատ թերթեր փակվեցին, բնակչության վճարունակությունը նվազեց մի քանի անգամ: Տպագիր արտադրանքի ինքնարժեքն այնքան աճեց, որ ոչ մի թերթ չէր կարողանում ինքնածախսածածկման սկզբունքով աշխատել: Ճիշտ է, թերթի գինը բարձր չէր (100-150 դրամ), բայց բնակչության գնողունակկությունը լրատվական միջոցների նկատմամբ էլ ավելի ցածր էր:

Երրորդ փուլը սկսվում է 1994 թ. և ունի կայուն զարգացում: Այսօր մամուլի ներկայացուցիչները գիտեն, որ առանց հովանավորների ու ֆինանսավորման արտաքին աղբյուրների ոչ մի թերթ գոյատևել չի կարող: Խմբագրությունները խոստովանում են, որ եկամտաբերության և ինքնածախսածածկման վրա հույս դնել չի կարելի:

Դոնորների օգնության ակնկալիքը բերում է այդ աղբյուրներից ֆինանսական կախվածության: Հաճախ արտաքին ֆինանսավորման աղբյուրի դերում հանդես են գալիս կուսակցությունները: Արդյունքում՝ կարճ ժամանակահատվածում Հայաստանում հայտնվեց կուսակցաթերթերի մի հսկայական քանակություն՝ լույս տեսնելու ձգված պարբերականությամբ: Դրանցից շատերը երկու-երեք անգամ թողարկվելուց հետո այլևս լույս չտեսան: Տեղերում թերթերի պարբերականությունը ցածր էր՝ շաբաթական մեկ անգամ: Հետագայում էլ թերթերի քանակական հաստատունությունը էական փոփոխություն չկրեց: Մամուլի ազատությամբ և կուսակցությունների ծննդով հրահրված թերթային իրարանցումը ներկայումս հանդարտվել է, մասամբ էլ փոխադրվել էլեկտրոնային ԶԼՄ-ների և համացանցային կայքերի ոլորտ:

ԶԼՄ-ների այսպիսի բուռն զարգացումը հաստատում է, որ ժողովրդավարական բոլոր ձեռքբերումներից մարդիկ ամենաշատը գնահատեցին խոսքի ազատությունն ու մամուլի ազատությունը: Ինչպես նշում է Գ. Պողոսյանը. «Դա նոր ժողովրդավարական կարգերի ամենաապշեցուցիչ և անվիճելի նվաճումներից է»: Խոսքի ազատությունը վերածվեց խոսքի անսահմանափակ հնարավորության՝ հրապարակավ ու անպատիժ վարկաբեկելու յուրաքանչյուրի՝ անկախ պաշտոնից ու հասարակական դիրքից: Սակայն շուտով այս սկզբնական խառնաշփոթը վերացավ: Դրանում մեծ դեր խաղաց լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող ժամա-նակակից օրենսդրության ստեղծումը: Սակայն մասնավոր ԶԼՄ-ներն իրենց սոցիալական գործառույթը, կարելի է ասել, կատարեցին. արթնացրին հասարակությանը բազմամյա խորհրդային նիրհից և նոր շունչ հաղորդեցին հասարակական գիտակցությանը: Համաշխարհային հեռուստատեսությունը՝ արբանյակային ալեհավաքների և կաբելային կապի շնորհիվ, հասանելի դարձավ բոլորին: Հայկական սոցիումը միացավ համընդհանուր տեղեկատվական դաշտին: Այդ գործընթացը հեշտ չընթացավ, բայց այն ի վերջո կայացավ:

2012 թ. փետրվարի 2-ի դրությանբ ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված էին 1938 ՁԼՄ, 219 ազգային և տեղական հեռուստաընկերություն, շուրջ յոթ տասնյակ FM և այլ ռադիոկայաններ և 34 լրատվական գործակալություն, որոնց քանակը հետագա տարիներին էականորեն չի փոխվել: Նկատենք, որ ՁԼՄ-ների ճնշող մեծամասնությունը մասնավոր ընկերություններ են, և դրանցից միքանիսն են է կենտրոնական իշխանության պաշտոնական հենարանը:

Հանրապետությունում գործում են լրագրողական մի քանի միավորումներ՝ Հայաստանի լրագրողների միությունը, Երևանի մամլո ակումբը և ուրիշներ, բայց դրանք հազվագյուտ դեպքերում են միավորում իրենց ջանքերը, ինչպես եղավ հասարա-կական հեռուստատեսության մասին նոր օրենքի քննարկման ընթացքում:

Ըստ Օրբելի-Վերլուծական–հետազոտական կենտրոնի տվյալների՝ Հայաստանում 2021թ դրությամբ համացանցից օգտվել է չափահաս բնակչության չնչին մասը:

Տպագիր ՁԼՄ-ների մշտական ընթերցողական լսարանը Հայաստանի Հանրապետությունում զգալիորեն կրճատվել է: Դրա գլխավոր պատճառները թերթերի թանկությունն է բնակչության մեծամասնության համար և անվստահությունը: Սրանք են մատնանշել առաջին դեպքում՝ գրեթե բոլոր հարցվողները, երկրորդ դեպքում՝ հարցվողների քառորդ մասը: Հատկապես տպագիր ՁԼՄ-ներն են ամենից շատ կորցրել վստահությունը բնակչության աչքում: Մատնանշված պատճառները վերջին տարիներին փոփոխություն չեն կրել:

Այնուամենայնիվ, ՁԼՄ-ները, իրենց թերություններով ու արժանիքներով հանդերձ, էական ազդեցություն ունեցան և շարունակում են ունենալ անցումային շրջանի քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ձևավորման ու զարգացման վրա:

Գրականություն

1. «Вопросы Философии», РАН. М., Наука, 2000., N 1, с.30.
2. Глинчикова А. Г. Трансформации в современной цивилизации: постиндустри-альное и «пост экономическое» общество//Вопросы философии. 2000. № 1. с. 3–32.
3. «Вопросы Философии», РАН. М., Наука, 2000., N 1, с.61.
4. Глобализация и демократия: соперники или союзники. Ереван, Изд-во. Асохик..с. 182:
5. Գրիգորյան Գ. Անցումային շրջանի ժողովրդավարությունը. առանձնահատկություններ, խոչընդոտներ, հեռանկարներ: Եր.: Ասողիկ, 2005, էջ 71:
6. Անցումային շրջան. Քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարության կառուցման հարցերը, (81-89էջեր): Գլ.խմբ. Ջ. Հասրաթյան: Եր.: Ասողիկ, 2006, էջ 89:
7. Gramsci A. Note sul Machiavelli, sulla political sullo stato moderno. Roma, 1977,

pp. 155 -156. (77)
8. Дюверже М. Политические партии. Пер. с фр. Л. Зиминой. 4-е изд. М., Ак.. проект, 2000, с. 21. (78).
9. Средства массовой информации Армении. Общетвенная организация “ТИМ. Под общей редакцией А. Темуряна. Ереван. Типография ‘Периодика’. 1996, с. 7.
10. Poghosyan G. Assessment of the results of independence.-10 Years of Independence and Transition in Armenia, UNDP, Armenia, 2001, p. 32: Error! Hyperlink refer-ence not valid..

ПЕРЕХОДНОЙ ПЕРИОД. ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА

Гамлет Степаням
Ереванский университет «Айбусак»

В статье даны особенности формирования и развития институтов гражданского общества в переходной период после развала СССР. В частности, рассмотрены осо-бенности форморования и развития партии, профсоюзы, пресса и СМИ в условиях не-зависимости.

Ключевые слова. Гражданское общество, партии, профсоюзы, пресса, СМИ, де-мократия, переходной период.

TRANSITIONAL PERIOD. FEATURES OF CIVIL SOCIETY FORMATION

Hamlet Stepanyan
Yerevan Haybusak University

Experimental observations show that the third sector in Armenia, being a sphere of human activity, has simultaneously become one of the components of the economy. This consequence is due to the compensability of certain parts of the activities of the third sec-tor: fundraising, hiring of employees, etc.

Historically, the reality is that in the transition period in Armenia (including other CIS countries) the constituent elements of society - the independent democratic state, private business, and public organizations were established, formed, and developed at the same time. Meanwhile, in countries with deep democratic traditions - France, England, and the United States - the state was formed first, then private business developed, and then only public organizations. History does not know such developments. It is an interesting new phenomenon

for theorists.

The characteristics of the institutional development of the civil society in the transi-tional period after the collapse of the USSR are given. In particular, the features of form-ing, developing, and establishing public organizations, parties, trade unions, and free press in conditions of independence are shown.

Keywords: civil society, parties, trade unions, press, media, democracy, transition period.